



ՈՒՂՂՈՐԴՈՂ ԾԱՆՈԹԱԳՐ ՈՒԹՅ ՈՒՆ  
Հ ԱՆՁՆՄԱՆ ԵՎ ՓԱԽՍՏ ԱԿԱՆՆԵՐԻ  
ՄԻՋԱԶԳԱՅ ԻՆ ՊԱՇՏ ՊԱՆՈՒԹՅ ԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅ ԱԼ

Փախս տակ ան ն եր ի հ ար ց եր ո վ Մի ավ ո ր վ ած ազ գ եր ի  
կ ազ մ ակ եր պ ու թ յ ան գ եր ազ ու յ ն հ ան ձ ն ակ առաք ի  
գ ր ա ս ե ն յ ակ (ՄԱԿ ՓԳՀ)  
Պ ա շ տ պ ան ու թ յ ան ք աղ ա ք ակ ան ու թ յ ան և  
ի ր ավ ա խ ո ր հ ր դ ա տ վ ու թ յ ան ք ա ժ ի ն  
Մ ի ջ ազ գ ա յ ի ն պ ա շ տ պ ան ու թ յ ան ծ առ ա յ ու թ յ ու ն ն եր ի  
վ ա ր չ ու թ յ ու ն  
Ժ ն և

2008թ. ապրիլ

Միավորված ազգերի կազմակերպության գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԱԿ ՓԳՀ) պատրաստում է ուղղորդող ծանոթագրությունները՝ մանրամասն շրջանակներում, որն ամրագրված է Փախստականների հարցերով Միավորված ազգերի կազմակերպության գերագույն հանձնակատարի գրասենյակի 1950 թվականի կանոնադրության, Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 35-րդ հոդվածի և նույն կոնվենցիայի 1967 թվականի արձանագրության 2-րդ հոդվածի դրույթներին:

Միջազգային իրավական սկզբունքների և դրանց հետ կապված նյութերի մանրամասն վերլուծություն միջոցով ուղղորդող ծանոթագրություններում փորձ է արվում պարզաբանել առանձին թեմատիկ խնդիրներին առնչվող կիրառելի իրավաբանական և իրավական չափանիշները՝ նպատակ ունենալով ուղղորդում մատուցել տվյալ ոլորտում: Մույն փաստաթղթի վերջնական նպատակն է կատարել ազոր ծել փախստականների և ապաստան հայցողանձանց համար նախատեսված պաշտպանության ապահովման ուղիները՝ հետևելով փախստականների պաշտպանության ոլորտում որդեգրված միջազգային չափանիշներին:

Ուղղորդող ծանոթագրությունները հանրամատչելի փաստաթղթեր են, որոնք նախատեսված են կառավարություններին, մասնավորապես՝ քաղաքականություն մշակող և օրենսդիր մարմիններին, դատախարակական համակարգի, իրավագետների, ապաստանի շնորհման հարցերով որոշում կայացնողներին, ինչպես նաև այլ դերակատարներին և արտաքին գործընկերների համար, ովքեր առնչվում են փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության հարցերին: Այս փաստաթղթերը նաև որպես ուղղորդման աղբյուր են ծառայում տեղական մակարդակով՝ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից իրականացվող պաշտպանական միջամտություններին շրջանակներում: ՄԱԿ ՓԳՀ-ն խրախուսում է, որ պետությունները ներառեն ուղղորդող ծանոթագրություններում գետեղված սկզբունքներն ու չափանիշներն իրենց ներպետական իրավական դաշտում:

Ուղղորդող ծանոթագրություններին առանձին հայեցակետերի հետ կապված բոլոր հարցերը պետք է հասցեագրվեն պաշտպանության քաղաքականության և իրավախորհրդատվության բաժնին, որն

Բովանդակություն  
Էջ

I. ՆԱԽԱՊԱՍ ՍՈՒԹՅ ՈՒՆ ԵՎ Հ ԱՄՍ ԵՔՍ	5
Ա. Չվեքադարձելի ինություն սկզբունքի տարածման տիրույթն ու բովանդակությունը փախստականներին նմարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերում	9
1. Հարկադիր վեքադարձից պաշտպանություն նախատեսող դրույթ փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո	9
2. Փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո ամրագրված պաշտպանություն հարկադիր վեքադարձից	15
3. Պարտավորություններին տրակարգում	18
Բ. Չվեքադարձելի ինություն սկզբունքի կիրառում փախստականներին կամ սպաստան հայցող անձանց հանձնման դեպքերում	21
1. Փախստականներ	21
2. Սպաստան հայցողներ	25
Գ. Չվեքադարձելի ինություն գծով ստանձնած պարտավորություններին կատարում փախստականներին կամ սպաստան հայցող անձանց հանձնման դեպքերում	28
2. Հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերի այլ կարևոր դրույթներն սկզբունքներ, ինչպես նաև դրանց կապն չվեքադարձելի ինություն սկզբունքի հետ	30
III. ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԹԱՑ ԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՓԱԽՍ ԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏ ՊԱՆՈՒԹՅ ՈՒՆ	35
Ա. Ընդհանուր նկատառումներ	35
Բ. Փախստականներին հանձնման ընթացակարգեր	39
2. Գաղտնի ինություն պահպանում	43
Գ. Սպաստան հայցող անձանց հանձնման ընթացակարգեր	45
1. Հանձնման և սպաստանի շնորհման առանձին ընթացակարգեր	46
2. Պահանջը ստացած պետություն սպաստանի հարցերով զբաղվող իրավասումարմիններին կողմից սպաստան ստանալումսին դիմումի վերաբերյալ կայացվող որոշման գործընթաց	47
3. Հանձնման և սպաստանի վերաբերյալ կայացվող որոշումներին հերթականություն և սահմանում	48
4. Գաղտնի ինություն պահպանումն սպաստան հայցող անձին հանձնման ընթացակարգերի շրջանակներում	50



## I. ԼԱՄԱՊՈՍ ԱՌԻՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՏ ԵՔՍ

1. Հանձնումը պաշտոնակատարողների շրջանակներում անձը մեկ պետություն կողմից («պահանջը ստացած պետություն») հանձնվում է մեկ այլ պետության («պահանջը ներկայացրած պետություն») իրավասումն ունեցող անհատական քրեական հետապնդման իրականացման կամ դատարանի վճռով նրան նշանակված պատժի կատարման նպատակով: Հանձնումն անպատժելիություն դեմ պայքարի կարևոր գործիք է, որը պետություններին թույլ է տալիս պատասխանատվության ենթարկել ծանր քրեական հանցանքներ գործած անձանց, այդ թվում՝ այն դեպքերում, երբ խոսքը գնում է, օրինակ, մարդու իրավունքներին և մարդասիրական իրավունքի նորմերի խախտումներին մասին, որոնք էլ հաճախ հենց հետապնդումներին ձևերից մեկն են նրանում են տեղահանման պատճառ: Բացի այդ, հանձնումը, որպես այդպիսին, կարևոր գործիք է անաբեկչության և անդրազգային հանցավորություն այլ ձևերի դեմ պետություններին կողմից մղվող պայքարում:

2. Փախստականներին միջազգային պաշտպանությունը և քրեական իրավունքի կիրարկումն իրարամերձ երևույթներ չեն: Փախստականներին կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով («1951 թվականի կոնվենցիա») և դրա 1967 թվականի արձանագրությունում քննարկված պաշտպանվում իրենց արարքների համար հետապնդվող այն փախստականները կամ ապաստան հայցող անձինք, ովքեր զբաղվել են քրեորեն պատժելի գործունեությունում, ընդ որում փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերի դրույթներով վերջիններին հանձնման վրա որևէ արգելք չի դրվում բոլոր հանգամանքներում:<sup>1</sup> Այդուհանդերձ, այն դեպքերում, երբ անձը, ում վերաբերյալ ներկայացվել է հանձնման պահանջ («հետախուզման մեջ գտնվող անձ») փախստական է կամ ապաստան հայցող անձ, հարկ է հաշվի առնել պաշտպանության առումով նրան վերապահված հատուկ կարիքները:

3. Հանձնման և փախստականներին միջազգային պաշտպանության հետ կապված հարցերի փոխազդեցությունը պետք է

<sup>1</sup> Սա նաև վերաբերում է փախստականներին առնչվող տարածաշրջանային փաստաթղթերին, ինչպիսիք են, մասնավորապես՝ Աֆրիկյան միաբանություն կազմակերպության Աֆրիկայում փախստականներին հիմնախնդիրներին առանձին հայեցակետերը կարգավորող 1969 թվականի կոնվենցիան («Աֆրիկյան միաբանության կազմակերպության կոնվենցիա») (կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/textis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b36018>), 1984 թվականի Փախստականներին մասին Կարտախենայի հռչակագիրը (կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/textis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b36ec>), ինչպես նաև Փախստականներին հարցերով Միավորված ազգերի կազմակերպության գերագույն հանձնակատարի 1950 թվականի կանոնադրությունը (կցված է Չլիավոր սամբլեայի 1950 թվականի դեկտեմբերի թիվ 428 (V) բանաձևին) (կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/textis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b3628>):

նուսումնասիրվի ժամանակի ընթացքում հանձնման քննարկատու մ  
գարգացող նախադեպային բազայի և ընդունված գործելակերպի  
հիման վրա: Հանձնման ոլորտում պետությունների  
փոխհարաբերություններն ավանդաբար նախև առաջ կարգավորվում  
են երկկողմ և բազմակողմ հանձնման մասին համաձայնագրերով,  
ինչպես նաև ազգային օրենսդրություն համապատասխան  
դրույթներով:<sup>2</sup> Հանձնման հարցերին առնչվող իրավական  
նորմերը՝ որպես գլխավորապես պետությունների միջև եղած  
փոխհամաձայնություն արտացոլող կանոններ, փոխվել են  
ժամանակի ընթացքում՝ արձագանքելով նոր տեսակի  
հանցագործությունների և անվտանգություն և պառնալիքներին, այդ  
թվում՝ վերջին տասնամյակներում միջազգային ախարեկչություն  
հետ կապված սպառնալիքներին և առաջացմանը: Այնուամենայնիվ,  
1945 թվականից ի վեր միջազգային իրավունքում արձանագրած այլ  
գարգացումները մեծապես ազդել են հանձնման իրավական դաշտի  
վրա:

4. Մարդու իրավունքներին առնչվող մի շարք  
համաձայնագրերում, ախարեկչություն դեմ պայքարի մասին  
կնվել են ցիաներում և անդրազգային հանցավորություն  
հիմնախնդրին անդրադարձող այլ փաստաթղթերում նախատեսված են  
դրույթներ, որոնցով ամրագրված է որոշ  
հանցագործությունների մեջ կասկածվող անձանց հանձնելու  
պարտականությունը: Մովորաբար նման փաստաթղթերով մասնակից  
պետություններին պահանջում է ապահովել, որ իրենց երկրի  
քրեական իրավունքի դաշտում ընդգրկված արարքները համարվեն  
այնպիսի հանցագործություններ, որոնք կարող են հանձնման  
հիմք ծառայել նույնիսկ այդ պետությունների միջև հանձնման  
համաձայնագրերի բացակայության դեպքում:<sup>3</sup> Այնուամենայնիվ,

<sup>2</sup> Հանձնման մասին պահանջը բավարարելու կամ մերժելու իրավական  
չափորոշիչները պայմանավորված են երկու պետությունների միջև եղած  
երկկողմ կամ բազմակողմ հանձնման մասին համաձայնագրերով, ինչպես նաև  
պահանջը ստացած պետության ազգային օրենսդրության համապատասխան  
դրույթներով: Հանձնման մասին համաձայնագրերում և ազգային օրենսդրության  
կիրառելի դրույթներում սովորաբար սահմանում են այն հանցատեսակները,  
որոնց առնչությամբ հանձնման պահանջը կարող է բավարարվել («հանձնման  
ենթակա հանցագործություններ»), ինչպես նաև սահմանվում են հանձնման  
պահանջը մերժելու հիմքերը («մերժման հիմքեր») և պահանջը ներկայացրած  
պետության կողմից ներկայացվելիք հիմնավորող փաստաթղթերը և (կամ)  
ապացույցները: Հանձնման պահանջի քննություն ընթացակարգերը սովորաբար  
որոշվում են պահանջը ստացած պետության ազգային օրենսդրության  
դրույթներով: Հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերի ավելի  
մանրամասն ընդհանրական ակնարկը, ինչպես նաև դրա կապն ապաստանի շնորհման  
համակարգի հետ կարելի է գտնել այստեղ՝ S. Kapferer, «The Interface between Extradition  
and Asylum» (այսուհետև՝ «Extradition and Asylum»), ՄԱԿ ՓԳՀ, Իրավական և  
պաշտպանություն քաղաքականությունների հետազոտություններին շարք,  
PPLA/2003/05, 2003թ. նոյեմբեր, կարելի է գտնել այստեղ՝  
<http://www.unhcr.org/cgi-bin/txis/vtx/refworld/rwmain?docid=3fe846da4>:

<sup>3</sup> Շատ դեպքերում նման փաստաթղթերում ամրագրվում է հանձնելու կամ

մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերից բխող չվերադարձելիությունն սկզբունքի ներքո ստանձնած պարտավորությունն են երբևէ որոշ հանգամանքներում հանձնման վրա դնում են արգելքներ, որոնք գումարվում են փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերից բխող արգելքներին:

5. Փախստականի կամ ապաստան հայցող անձի հանձնման դեպքերում համապատասխան իրավական նորմերով սահմանված սկզբունքների և դրույթների համաձայն՝ խնդրո առարկա անձին վերապահված են որոշակի իրավական երաշխիքներ: Հետախուզման մեջ գտնվող անձը կարող է, օրինակ, օգտվել հատուկ մոտեցման սկզբունքից, պահանջ ներկայացրած պետությանից դեպի որևէ երրորդ պետության կրկին հանձնման վրա դրված սահմանափակումներից, հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ քրեական դատավարության ավարտից կամ դատարանի նշանակված պատիժը կրելուց հետո պահանջը ստացած պետության վերադարձնելու պայմանով հանձնվելու իրավունքից, քաղաքական բնույթի հանցատեսակների համար չհանձնվելու կանոնից, ինչպես նաև մերժման այլ ավանդական հիմքերից, մասնավորապես՝ այն հիմքերից որոնք կապված են մահապատժի կիրառման և արդարադատության ու արդարության գաղափարների հետ: Հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերում վերջերս արձանագրված գարգացումներից են այսպես կոչված «խտրականություն մասին դրույթները», ըստ որոնց հանձնումը կարող է կամ պետք է մերժվի, եթե հանձնման պահանջը ներկայացվում է քաղաքական շարժառիթներով, կամ էլ հետապնդման կամ խտրականություն մտադրությունամբ:<sup>4</sup> Հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերում ամրագրված այս երաշխիքները որոշ չափով համընկնում են պահանջը ստացած պետության կողմից փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո չվերադարձելիությունն ստանձնած պարտավորությունների հետ:

6. Սույն ուղղորդող ծանոթագրությունում ներկայացվում է ՄԱԿ ՓԳՀ-ի դիրքորոշումը նյութաիրավական և ընթացակարգային այն հարցերի վերաբերյալ, որոնք ի հայտ են գալիս, երբ հանձնման մասին պահանջի առարկա է դառնում որևէ փախստական կամ ապաստան հայցող անձ: Սույն ծանոթագրության 2-րդ մասում ներկայացվում է պահանջը ստացած պետության

---

հետապնդելու պարտավորություն («*aut dedere aut judicare*»): Այդուհանդերձ, հարկ է նշել, որ միջազգային իրավունքը չի նախատեսում հանձնելու որևէ ընդհանուր պարտավորություն: Մանրամասների համար տե՛ս S. Kapferer «*Extradition and Asylum*», վերը նշված ծանոթագրություն 2, կետեր՝ 21-32:

<sup>4</sup> Այս դրույթների և հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերի վերաբերյալ ավելի մանրամասն քննարկում տե՛ս ստորև, կետեր՝ 38-45:



չ վերադարձել իր թյան սկզբում և քի ներքո ստանձնած պարտավորություններին մանրամասն ուսումնասիրությունը՝ փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո փախստականի կամ ապաստան հայցող անձի հանձնման ընթացակարգի համատեքստում: Այս բաժնում ուսումնասիրվում է նաև այն հարցը, թե որքանով են չ վերադարձել իր թյան սկզբում համապատասխանում հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերով ամրագրված ներկայիս սկզբում և քի ներքո ու դրույթները: Մույն ծանոթագրություն 3-րդ մասում արծարծվում են հանձնման ընթացակարգերի հետ կապված որոշ հարցեր, այդ թվում՝ այն երաշխիքները, որոնք պահանջվում են փախստականներին և ապաստան հայցող անձանց հատուկ կարգավիճակը լինելից հաշվի առնելու համար, ինչպես նաև քննարկվում է հանձնման և ապաստանի շնորհման ընթացակարգերի միջև եղած համապատասխան կապը: Ծանոթագրություն այս մասում ուսումնասիրվում է նաև հանձնման ընթացակարգի շրջանակներում ՄԱԿ ՓԳՀ-ին վերապահված դերակատարումը, որն անդրադառնում է կազմակերպության գործունեության շրջանակներում ընդգրկված անձանց վրա: Մույն ծանոթագրություն 4-րդ մասում ուսումնասիրվում են այն ուղիները, որոնցով հանձնման պահանջին առնչվող տեղեկությունները կարող են ազդել փախստականի միջազգային պաշտպանության իրավունքից օգտվելու հնարավորություն վրա, ինչպես նաև ընդգծվում են ապաստանի շնորհման ընթացակարգերում նախատեսված այն երաշխիքները, որոնք ի հայտ են գալիս, երբ ապաստան հայցող անձը դառնում է նաև հանձնման մասին պահանջի առարկա: Մույն ծանոթագրություն 5-րդ մասում ներկայացվում են հանձնման և ապաստանի միջև եղած փոխադարձ կապին նվիրված եզրափակիչ դիտողությունները, ինչպես նաև քննարկվում է հանձնման ոլորտում պետություններին ակնկալվող գործելակերպի համապատասխանությունը միջազգային իրավունք ներքո նրանց ստանձնած պարտավորություններին ապահովելու անհրաժեշտությունը:

**II. ՀԱՆՁՆՈՒՄ ԵՎ ՉՎԵՐԱԴԱՐՏԵԼ ԻՈՒԹՅԱՆ ՄԿՉԵՈՒՆՔ**

7. Ուղղորդման ծանոթագրություն այս բաժնում ուսումնասիրվում է պահանջը ստացած պետության կողմից փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո չ վերադարձել իր թյան գծով ստանձնած պարտավորություններին տարածման տիրույթն ու բովանդակությունը, ինչպես նաև այդ պարտականություններին կատարումը՝ փախստականի կամ ապաստան հայցող անձի վերաբերյալ հանձնման մասին պահանջի համատեքստում: Այս տեղ ուսումնասիրվում է նաև այն հարցը, թե ինչպես հանձնման գործընթացի շրջանակներում պահանջը ստացած պետությունը

կարող է օգտագործել հարկադիր վերադարձից պաշտպանություն և նախատեսող դրույթը:

**Ա. Չվերադարձելիության սկզբունքի տարածման տիրույթն ու բովանդակությունը փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերում**

**1. Հարկադիր վերադարձից պաշտպանություն և նախատեսող դրույթ փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերին ներքո**

8. Չվերադարձելիության սկզբունքը, ըստ որի արգելվում է այն փախստականներին հարկադիր հեռացումը երկրի տարածքից, ում սպառնում է հետապնդման ենթարկվելու վտանգը, վերջիններին պաշտպանություն միջազգային կանոնակարգի անկյունքարն է:<sup>5</sup> Այս դրույթն ամրագրված է 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածում<sup>6</sup> և իրենից ներկայացնում է հիմնարար սկզբունք, որից շեղումն արգելվում է:<sup>7</sup> Չվերադարձելիության սկզբունքը, որն ամրագրված է 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի դրույթներով, նույնպես միջազգային սովորույթական իրավունքի մաս է կազմում: Որպես այդպիսին՝ այս սկզբունքը պարտադիր է բոլոր պետություններին համար, այդ թվում՝ այն պետություններին համար, որոնք դեռևս չեն անդամակցել 1951 թվականի կոնվենցիային և (կամ) դրա 1967 թվականի արձանագրությանը:<sup>8</sup>

<sup>5</sup> Մանրամասն վերլուծության համար տե՛ս E. Lauterpacht and D. Bethlehem, «The scope and content of the principle of *non-refoulement*: Opinion», այստեղ՝ E. Feller, V. Türk and F. Nicholson (eds.), «*Refugee Protection in International Law: UNHCR's Global Consultations on International Protection*», Cambridge University Press, Cambridge (2003թ.), էջեր՝ 87-177: Տե՛ս նաև ՄԱԿ ՓԳՀ, «*Խորհրդատվական եզրակացությունն չվերադարձելիության սկզբունքի համաձայն ստանձնած պարտականություններին արտատարածքային կիրառման վերաբերյալ՝ Փախստականներին կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի և դրա 1967 թվականի արձանագրության ներքո*», 26 հունվարի 2007թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=45f17a1a4>:

<sup>6</sup> Փախստականներին վերաբերող տարածաշրջանային փաստաթղթերում նույնպես նախատեսված են չվերադարձելիության մասին դրույթներ, մասնավորապես՝ 1969 թվականի Աֆրիկյան միաբանության կազմակերպության կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ կետը և 1984 թվականի Փախստականներին մասին Կարտախենայի հոչակագրի 3-րդ բաժնի 5-րդ կետը: Թեև Կարտախենայի հոչակագրի դրույթները չունեն պարտադիր օրինական ուժ, դրանք, այնուամենայնիվ, ընդգրկվել են Լատինական Ամերիկայի բազմաթիվ պետություններին օրենսդրություններում:

<sup>7</sup> 1951 թվականի կոնվենցիայի 42-րդ հոդվածի 1-ին կետում և 1967 թվականի արձանագրության 7-րդ հոդվածի 1-ին կետում 33-րդ հոդվածը մեջբերվում է 1951 թվականի կոնվենցիայի դրույթներից մեկը, որի պարագայում չեն թույլ տարվում որևէ վերապահումներ:

<sup>8</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «*Չվերադարձելիության սկզբունքը որպես միջազգային սովորույթական իրավունքի նորմ*», թիվ 2 BvR 1938/93, թիվ 2 BvR 1953/93 և թիվ 2 BvR 1954/93 գործերի շրջանակներում Գերմանայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանի կողմից ՄԱԿ ՓԳՀ-ին ուղղված հարցերի պատասխանը, որը կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi->

9. 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է հետևյալը.

«Պայմանավորվող ոչ մի պետություն փախստականին չի վտարում կամ որևէ կերպով երադարձնում («վերադարձնում» այն երկիր, որտեղից եկել է») այն տարածքներին, սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը վտանգ կսպառնա՝ իր ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելու կամ քաղաքական կարծիքի հարելու հիմքով»:

10. Այս դրույթը լիովին կիրառելի է հանձնման համատեքստում: Ասվածն ակնհայտ է դառնում 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետից, որի համաձայն վտարումը կամ վերադարձը բնութագրվում է «որևէ կերպ» ձևակերպմամբ: Անդրադառնալով փախստականների հանձնման հետ կապված տարբեր խնդիրներին՝ ՄԱԿ ՓԳՀ-ի ծրագրի Գործադիր կոմիտեն, ի թիվս այլոց.

(բ) վերահաստատեց համընդհանուր ճանաչման արժանացած չվերադարձելիության սկզբունքի հիմնարար բնույթը,

(գ) ճանաչեց այն հանգամանքը, որ փախստականները պետք է պաշտպանություն ստանան այն դեպքերում, երբ խոսքը գնում է մի այնպիսի երկրին հանձնվելու մասին, որտեղ նրանք ունեն հետապնդումներ կենթարկվելու հիմնավոր մտավիտություն՝ 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «ա» կետի 2-րդ ենթակետում թվարկված հիմքերով,

(դ) կոչ արեց պետություններին ապահովել, որ չվերադարձելիության սկզբունքն ըստ հարկի հաշվի կառավարի հանձնման մասին համաձայնագրերում և ազգային օրենսդրության համապատասխան դրույթներում,

(ե) հույս հայտնեց, որ չվերադարձելիության սկզբունքը պատշաճ հարգանքի կարժանանա հանձնման մասին գոյություն ունեցող

---

[bin/texis/vtx/refworld/rwmain?docid=437b6db64](http://bin/texis/vtx/refworld/rwmain?docid=437b6db64), ՄԱԿ ՓԳՀ, «Օսնոթագրությունն չվերադարձելիության սկզբունքի վերաբերյալ (ԵՄ սեմինար Ապաստանի ընթացակարգերի շրջանակներում նվազագույն երաշխիքներին մասին 1995 թվականի ԵՄ բանաձևի իրագործման թեմայով)», 1 նոյեմբերի 1997 թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=438c6d972>: Տես նաև 1951 թվականի կոնվենցիան (կամ) 1967 թվականի արձանագրության մասնակից պետությունների հոչակագիրը, որն ընդունվել է 2001 թվականի դեկտեմբերի 12-ից 13-ը տեղի ունեցած մասնակից պետությունների նախարարական ժողովին, թիվ HCR/MMSP/2001/09, ներածակն կետ 4, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3d60f5557>, Նոր Զելանդիայի Վերաբնակիչ նաստարան, գործ «Zaoui v. Attorney General» (թիվ 2) [2005] 1 NZLR 690, 30 սեպտեմբերի 2004թ., կետեր 34 և 136, որը կարելի է գտնել այստեղ՝ <http://www.nzlii.org/cgi-bin/sinodisp/nz/cases/NZCA/2004/244.html>: Միջազգային սովորույթական իրավունքի ներքո չվերադարձելիության սկզբունքի տարածման տիրույթի և բովանդակության խորաքննիչ ուսումնասիրություն կարելի է գտնել այստեղ՝ տես նաև E. Lauterpacht and D. Bethlehem, վերոնշյալ ծանոթագրություն 5, կետեր՝ 193-219:

համաձայնագրերի կիրառման շրջանակներում»:<sup>9</sup>

11. 33-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պաշտպանությունը կիրառվում է ցանկացած անձի նկատմամբ, ով փախստակ և համարվում է 1951 թվականի կոնվենցիայի դրույթներին ենթարկվող անձի նկատմամբ, ով փախստակ և հասկացություն սահմանման այն պահանջները, որոնք գետնի վրա են 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «ա» կետի 2-րդ ենթակետում («ներառման չափորոշիչներ») <sup>10</sup> և չի դավաճում քաղաքացիությունը: <sup>11</sup> Չվերադարձված լինելու և կարգավորվելու, որը նախատեսված է 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետով, կիրառվում է նաև այն անձանց նկատմամբ, ովքեր փախստական են 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածում ամրագրված նվազագույն պահանջները չափորոշիչները, սակայն չեն դիմել փախստակ լինելու կարգավիճակի պաշտոնական ճանաչման համար: <sup>12</sup> Այս դրույթն

<sup>9</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, Գործադիր կոմիտե, 1980 թվականի թիվ 17 (XXXI) եզրակացություն «Փախստակներին վրա անդրադարձող հանձնման խնդիրներին վերաբերյալ», կետեր՝ (b)-(e), կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae68c4423>:

<sup>10</sup> Այս դրույթի ներքո, որն ընդգրկված է 1967 թվականի արձանագրության 1-ին հոդվածում, «փախստակ» եզրույթը վերաբերում է ցանկացած անձի, ով «ոստայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական կարծիքի պատճառով հետապնդվելու հիմնավորված երկյուրդի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և անկարող է կամ, նման երկյուրդի պատճառով, չի

ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և նման իրադարձություններին հետևանքով գտնվելով իր նախկին

մշտական բնակության երկրից դուրս, անկարող է կամ, նման երկյուրդի պատճառով, չի ցանկանում վերադառնալ այնտեղ»:

<sup>11</sup> 1951 թվականի կոնվենցիայով նախատեսված քաղաքացիություն դրույթներն են՝ 1-ին հոդվածի «դ» կետի առաջին ենթակետը (որը վերաբերում է ՄԱԿ ՓԳՀ-ից բացի ՄԱԿ-ի այլ գործակալությունից պաշտպանություն կամ աջակցություն ստացող անձանց), 1-ին հոդվածի «ե» կետը (որը վերաբերում է այն անձանց, ովքեր սովորաբար կրկին իրավասում արմիններին կողմից ճանաչվել են որպես սովորաբար քաղաքացիությունից բխող իրավունքներով և պաշտպանություններով օժտված անձինք), ինչպես նաև 1-ին հոդվածի «զ» կետը (որը վերաբերում է այն անձանց, ում վերաբերյալ կան լուրջ հիմքեր կարծելու, որ նրանք գործել են որոշ ծանր հանցագործություններ կամ արարքներ): Բացառող դրույթներ ամրագրված են նաև 1969 թվականի Աֆրիկյան միաբանության կազմակերպության կոնվենցիայում, ինչպես նաև Փախստակներին հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի 1950 թվականի կանոնադրությունում, որը կցվում է 1950 թվականի դեկտեմբերի 14-ին Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված թիվ 428 (V) բանաձևին): Տե՛ս նաև ստորև՝ կետ 78:

<sup>12</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, Գործադիր կոմիտե, 1977 թվականի թիվ 6 (XXXI) եզրակացություն «Փախստակներին վրա անդրադարձող հանձնման խնդիրներ», կետ (c), կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae68c43ac>, 1996 թվականի թիվ 79 (XLVII) եզրակացություն «Միջազգային պաշտպանություն վերաբերյալ», կետ (j), կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae68c430>, ինչպես նաև 1997 թվականի թիվ 81

առանձնակի նշանակություն ունի սպաստան հայցող անձանց համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպաստան հայցողները կարող են փախստականներ լինել՝ նրանց չի կարելի վերադարձնել կամ արտաքսել քանի որ նրանց կարգավիճակի վերաբերյալ վերջնական որոշման հարցը գտնվում է վարույթում:<sup>13</sup>

12. Չվերադարձելիություն սկզբունքը կիրառվում է ոչ միայն տվյալ փախստականի ծագման երկրի, այլև ցանկացած այլ երկրի առնչությամբ, որտեղ նա ունի հետապնդումներ ինքնաբերական հիմնավոր մտավայրություն 1951 թվականի կնովենցիայի 1-ին հոդվածի «ա» կետի 2-րդ ենթակետում գտեղծված մեկ կամ ավելի պատճառներով, ինչպես նաև այն երկրի առնչությամբ, որտեղից նրան կարող են ուղարկել մի երկիր, որտեղ նրան կսպարնա կնովենցիայով նախատեսված հիմքերից որևէ մեկի կապակցությամբ հետապնդումներ ինքնաբերական վտանգ:<sup>14</sup>

13. Փախստականներին վերաբերող միջազգային իրավական նորմերի ներքո չվերադարձելիություն սկզբունքից բացառություններ թույլատրվում են 33-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հանգամանքներում և սսվում է հետևյալը.

«Սույն դրույթի [33-րդ հոդվածի 1-ին կետի] արտոնությունը, սակայն, չի կարող վկայակոչվել այն փախստականի կողմից, ով հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում իր գտնված երկրի անվտանգության համար, կամ ով, վերջնական դատավճռով դատապարտված լինելով բացարիկ լուրջ հանցագործության համար՝ վտանգ է ներկայացնում այդ երկրի հասարակության համար»:

14. Այս դրույթի կիրառման համար սպաստանի երկիրը պարտավոր է անհատականացված կարգով որոշել, թե արդյոք բավարարվել են չվերադարձելիություն սկզբունքի համար

---

եզրակացություն (XLVIII) «Միջազգային պաշտպանություն վերաբերյալ», կետ՝ (i), կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae68c690>:

<sup>13</sup> Տե՛ս, օրինակ՝ ՄԱԿ ՓԳՀ, «Համաշխարհային խորհրդակցություն ներմիջազգային պաշտպանություն վերաբերյալ (երրորդ ուղղություն), սպաստանի շնորհման ընթացակարգեր» (Սպաստանի շնորհման արդար և արդյունավետ ընթացակարգեր) (այսուհետև՝ «Սպաստանի շնորհման ընթացակարգեր»), EC/GC/01/12, 31 մայիսի 2001թ., կետեր՝ 4, 8, 13 և 50(c), կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3b36f2fca>: Տե՛ս նաև E. Lauterpacht և D. Bethlehem, վերը նշված ծանոթագրություն 5, կետեր՝ 87–99, լրացուցիչ հղումներով:

<sup>14</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Ծանոթագրություն ն չվերադարձելիություն վերաբերյալ» թիվ EC/SCP/2, 1977թ., կետ 4, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae68ccd10>: Տե՛ս նաև՝ Paul Weis, «The Refugee Convention, 1951: The Travaux Préparatoires Analyzed with a Commentary by Dr. Paul Weis», հրատարակություն՝ Cambridge University Press Cambridge (1995թ.), էջ 341:

ն ախատե ս վ ած ք աց առ ո թ յ ու ն ն եր ը .

(i) «Երկրի անվտանգությունն» հիմնավորմամբ քացառություն կիրառման համար պահանջվում է ապացուցել, որ տվյալ փախստականը ներկայումս կամ ապագայում վտանգ է ներկայացնում ընդունող երկրի համար: Այդ վտանգը պետք է կրի ոչ թե համեմատաբար թեթև, այլ շատ լուրջ բնույթ և պետք սպառնալիք հանդիսանա ընդունող երկրի ազգային անվտանգության համար:<sup>15</sup>

(ii) «Համայնքին սպառնացող վտանգ» հիմնավորմամբ քացառություն կիրառման համար պահանջվում է, որ խնդրո առարկա փախստականը ոչ միայն դատապարտված լինի շատ ծանր բնույթի հանցագործություն համար, այլ և պետք է ապացուցվի, որ նման հանցագործության և դատապարտման փաստի լույսի ներքո տվյալ փախստականը ներկայումս կամ ապագայում շատ լուրջ վտանգ է ներկայացնում ընդունող երկրի համայնքի համար: Այն հանգամանքը, որ տվյալ անձը դատապարտվել է առանձնապես ծանր հանցագործություն համար ինքնին չի նշանակում, որ դրանով բավարարվում է համայնքի համար վտանգ ներկայացնելու մասին պահանջը: Այն հարցի պատասխանը, թե արդյոք բավարարվել են նշված պահանջները, թե ոչ, կախված է տվյալ հանցագործություն բնույթից և հանգամանքներից, ինչպես նաև էական նշանակություն ունեցող այլ գործոններից (օրինակ՝ կրկնահանցագործություն մասին վկայող ապացույցներից կամ դրահավանակություն ունից):<sup>16</sup>

15. 1951 թվականի կոնվենցիայով նախատեսված պաշտպանությունը հարկադիր վերադարձից արգելող իմաստով կիրառելու համար պահանջվում է ողջամիտ կապ հաստատել տվյալ

<sup>15</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, գործ «Factum of the Intervenor, UNHCR, Suresh v. the Minister of Citizenship and Immigration; the Attorney General of Canada, SCC No. 27790», կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/txis/vtx/refworld/rwmain?docid=3e71bbe24> (այսուհետև՝ «UNHCR, Suresh Factum»), այստեղ՝ 14:1 International Journal of Refugee Law (2002թ.), կետեր՝ 68-73: Տե՛ս նաև՝ E. Lauterpacht և D. Bethlehem, վերը նշված ծանոթագրություն 5, կետեր՝ 164-166 և A. Grahl-Madsen, «Commentary on the Refugee Convention, Articles 2-11, 13-37», հրատարակվել է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից (1997թ.) և կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/txis/vtx/refworld/rwmain?docid=4785ee9d2>, մեկնարկում թյուն 33-րդ հոդվածի վերաբերյալ, կետ 8, որտեղ տվյալ հարցի շուրջ 1951 թվականի կոնվենցիան կազմողների քննարկումներն ամփոփ ներկայացվում են հետևյալ կերպ. «ընդհանուր առմամբ երկրի անվտանգության պայմանավորված քացառությունը կարող է վկայակոչվել բավականին ծանր բնույթի արարքների պարագայում, որոնք ուղղակի կամ անուղղակի վտանգ են ներկայացնում խնդրո առարկա երկրի Սահմանադրության, կառավարության, տարածքային ամբողջականության, անկախության կամ արտաքին խաղաղության համար»:

<sup>16</sup> Տե՛ս E. Lauterpacht և D. Bethlehem, վերը նշված ծանոթագրություն 5, կետեր՝ 190-192:

փախստակ ան ի ն այ դ երկրի տարածքից հեռացնելու և ընդունող երկրի անվտանգությանը կամ համայնքի համար նրաներկայությունից բխող վտանգի վերացման միջև: «Մահմանափակ կիրառում» հասկացությունը նշանակում է նաև, որ հարկադիր վերադարձը պետք է դիտարկվի որպես ընդունող երկրի անվտանգությանը կամ համայնքին սպառնացող վտանգը վերացնելու վերջին հնարավոր միջոցը:<sup>17</sup> Բացի այդ, ընդունող երկրին սպառնացող վտանգը պետք է լինի ավելի մեծ, քան հարկադիր վերադարձի արդյունքում հետախուզման մեջ գտնվող անձին վնաս պատճառելու վտանգը:<sup>18</sup> Ավելին, այն հարցի որոշումը, թե արդյոք տվյալ դեպքում կիրառելի է 33-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված բացառություններին, որն է մեկը, պետք է իրականացվի այնպիսի ընթացակարգի շրջանակներում, որը նախատեսում է պատշաճ երաշխիքներ:<sup>19</sup> Այն դեպքերում, երբ հանձնման գործընթացի շրջանակներում որոշվում է 33-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառելիություն հարցը, պահանջը ստացած պետությունը պետք է ապահովի ինչպես նյութափրավակն, այնպես էլ ընթացակարգային պահանջներին լիարժեք կատարումը:<sup>20</sup>

16. Այնուամենայնիվ, 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները չեն անդրադարձնում մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո պահանջը ստացած պետության կողմից չվերադարձելիության գծով ստանձնած այն պարտավորություններին վրա, որոնց դեպքում բացառություններ չեն թույլատրվում: Այսպիսով, պահանջը ստացած պետությանն արգելվում է հանձնել փախստակ ան ի ն, եթե հանձնման արդյունքում նրան սպառնում է, օրինակ, խոշտանգումներին ենթարկվելու էական վտանգ:<sup>21</sup> Նմանատիպ

<sup>17</sup> Եթե ավելի մեղմ միջոցները բավարար կլինեն ընդունող երկրի անվտանգությանը կամ համայնքին տվյալ փախստակ ան ի ն կողմից սպառնացող վտանգը վերացնելու համար, ապա 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետով հարկադիր վերադարձը հիմնավորված համարվել չի կարող:

<sup>18</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Suresh Factum», վերը նշված ծանոթագրություն 15, կետեր՝ 74–84: Տե՛ս նաև E. Lauterpacht և D. Bethlehem, վերը նշված ծանոթագրություն 5, կետեր՝ 177–179:

<sup>19</sup> ՄԱԿ ՓԳՀ-ի դիրքորոշումը՝ դրանք պետք է լինեն առնվազն նույն ընթացակարգային երաշխիքները, որոնք պարտադիր են 1951 թվականի կոնվենցիայի 32-րդ հոդվածի դրույթներին ներքո իրականացվող արտաքսման դեպքերում: 32-րդ հոդվածի 1-ին կետով թույլատրվում է փախստակ ան ի ն արտաքսումը որևէ երկիր, բացառությամբ այն երկրների, որտեղ նա ունի ազգային անվտանգության կամ հասարակական կարգի ապահովման վկայակոչմամբ հետապնդումներին ենթարկվելու մտավախություն: 32-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը նախատեսում են նվազագույն երաշխիքներ, այդ թվում՝ մասնավորապես, սեփական կարծիքը հայտնելու իրավունք և կայացրած որոշումը բողոքարկելու իրավունք, ինչպես նաև մեկ այլ երկիր օրինակն ճանապարհով մուտք գործելու համար ողջամիտ ժամկետներին տրամադրման իրավունք: 16 Տե՛ս նաև E. Lauterpacht և D. Bethlehem, վերը նշված ծանոթագրություն 5, կետ 159:

<sup>20</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 52-53:

<sup>21</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Suresh Factum», վերը նշված ծանոթագրություն 15, կետեր՝ 18-50,

նկատառումներ են առաջանում այն դեպքերում, երբ այլ ձևերի անդառնալի վնասի վտանգ ներկայացնող երկիր հարկադիր վերադարձի վրա արգելք է դրվում:

**2. Փախստակ աններին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո ամրագրված պաշտպանություն հարկադիր վերադարձից**

17. Պահանջը ստացած պետության կողմից մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո չվերադարձելիություն գծով ստանձնած պարտավորությունները ենթադրում են հանձնման պարտադիր արգելք այն դեպքերում, երբ հետախուզման մեջ գտնվող անձի հանձնումը կհանգեցնի խոշտանգումների ենթարկվելու կամ այլ մարդու իրավունքներին խախտումների գոհ դառնալու վտանգի:

18. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ 1984 թվականի կոնվենցիայի 3-րդ հոդվածը հստակ նախատեսում է, որ «Ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի արտաքսի, վերադարձնի («refouler») կամ հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրան կարող է սպառնալ խոշտանգումների ենթարկվելու վտանգ»: Դասվելով իմպերատիվ նորմերի (jus cogens) թվին որպես միջազգային սովորութային իրավունքի ներքո ամրագրված խոշտանգումների վրա դրված արգելքի անբաժանելի մաս՝ նման վերաբերմունքի վտանգ ներկայացնող վայր հարկադիր վերադարձի վրա դրված արգելքը պարտադիր է կատարման բոլոր պետություններին համար, այդ թվում՝ այն պետություններին համար, որոնք դեռևս չեն անդամակցել համապատասխան համաձայնագրերին:<sup>22</sup>

---

Lauterpacht և D. Bethlehem, վերը նշված ծանոթագրություն 5, կետեր՝ 159(ii), 166 և 179:  
<sup>22</sup> Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքներին կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 29 «4-րդ հոդված՝ շեղումներ ստանձնած պարտավորություններին արտակարգ դրություն պայմաններում», UCCPR/C/21/Rev.1/Add.11, 31 օգոստոսի 2001թ., կետ 11, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=453883fd1f>: Տե՛ս նաև Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալի (ՆՀՄՔՏ) որոշումները՝ «Prosecutor v. Delalic and Others» գործով, Դատավարական պալատի վճիռ կայացրած 16 նոյեմբերի 1998թ., կետ 454, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=41482bde4>, գործ «Prosecutor v. Furundzija», Դատավարական պալատի վճիռ կայացրած 10 դեկտեմբերի 1998թ., կետեր՝ 134-164, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=40276a8a4>, գործ «Prosecutor v. Kunarac and Others», Դատավարական պալատի վճիռ կայացրած 22 փետրվարի 2001թ., կետ 466, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b7560>, ինչպես նաև «Pinochet, re.» գործով Միացյալ Թագավորություն Լորդերի պալատի կայացրած թիվ [1999] 2 All ER 97 որոշումը, կետեր՝ 108-109, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.parliament.the-stationery-office.co.uk/pa/ld199899/ldjudgmt/jd990115/pino01.htm>: 1969 թվականի Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդվածով «jus cogens»-ը կամ միջազգային իրավունքի



19. Մարդու իրավունքների կոմիտեի մեկնաբանությունը 1966 թվականի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ և 7-րդ հոդվածներով համապատասխանաբար կյանքից կամ այսպես կոչված և խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վրա դրված արգելքն ընդգրկում է նաև այն երկիր հարկադիր վերադարձի վրա դրված արգելքը, որտեղ ներկայիս նման վերաբերմունքի ենթարկվելու վտանգ:<sup>23</sup> Մարդու իրավունքների առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո ամրագրված հարկադիր վերադարձի արգելքն այն երկիր, որտեղ ներկայիս «անդառնալի վնասի» ենթարկվելու իրական վտանգ, տարածվում է բոլոր այն անձանց վրա, ովքեր կարող են գտնվել տվյալ պետության տարածքում կամ իրավագործության շրջանակներում:<sup>24</sup> Այս դրույթը ներառում է փախստականներին և ապաստան հայցող անձանց: Նման արգելքը կիրառվում է նաև այն երկրի նկատմամբ, որտեղ պետք է տեղափոխվի երկրի տարածքից հեռացված անձը կամ ցանկացած այլ երկրի նկատմամբ, որտեղ տվյալ անձը կարող է տեղափոխվել հետագայում երկրի տարածքից նրա հեռացվելուց հետո:<sup>25</sup> Նշված դրույթը չի ենթադրում որևէ

---

իմպերատիվ նորման իրենից ներկայացնում է. «նորմ, որն ընդունված և ճանաչված է որպես ամբողջությունն հանդես եկող պետությունների միջազգային համայնքի կողմից, որից չի կարելի շեղվել, և որը կարող է փոփոխության ենթարկվել միայն նույն անմասն բնույթ կրող հետագա ընդհանուր միջազգային իրավունքի նորմի միջոցով»: 15 Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, գործ թիվ SCC No. 27790 «*Factum of the Intervenor, UNHCR, Suresh v. the Minister of Citizenship and Immigration; the Attorney General of Canada*», կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3e71bbe24> (այսուհետև՝ «UNHCR, *Suresh Factum*»), այստեղ՝ 14:1 International Journal of Refugee Law (2002թ.), կետեր՝ 42-50: Տե՛ս նաև՝ E. Lauterpacht և D. Bethlehem, վերը նշված ծանոթագրություն 5, կետեր՝ 222-237:

<sup>23</sup> Տե՛ս Մարդու իրավունքների կոմիտեի, Ընդհանուր մեկնաբանությունն թիվ 20 «7-րդ Հոդված (խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելք)», 10 մարտի 1992թ., ՄԱԿ փաստաթուղթ թիվ HRI/ GEN/1/Rev.7, կետ. 9, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=453883fb0> և Ընդհանուր մեկնաբանությունն թիվ 31 «Դաշնագրի մասնակից պետությունների վրա դրված իրավական պարտավորության բնույթի վերաբերյալ», ՄԱԿ փաստաթուղթ թիվ CCPR/C/21/Rev.1/Add.13, 21 սպրիլի 2004, կետ 12, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=478b26ae2>: Տե՛ս նաև Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի, Ընդհանուր մեկնաբանությունն թիվ 6 (2005թ.) «Օսլոյի երկրից դուրս առանց ուղեկցություն և ընտանիքից առանձնացված երեխաների վերաբերյալ», ՄԱԿ փաստաթուղթ թիվ CRC/GC/2005/6, 3 հունիսի 2005թ., կետ 27, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=42dd174b4>:

<sup>24</sup> Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) մասնակից պետությունների համար այս դրույթները հստակ պարզաբանվել են Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 31 Ընդհանուր մեկնաբանությունում, վերը նշված ծանոթագրություն 23, կետ 10:

<sup>25</sup> Տե՛ս Մարդու իրավունքների կոմիտեի, Ընդհանուր մեկնաբանությունն թիվ 23, վերը նշված ծանոթագրություն 23, կետ 12:

շեղումներ և ենթակաշեռներ Բացառությունները<sup>26</sup>

20. Չվերադարձելիություն գծով ստանձնած պարտավորությունները, ըստ որոնց հետախուզման մեջ գտնվող անձի կյանքին կամ ֆիզիկական անձեռնմխելիությունը սպառնացող վտանգի առկայությունը դեպքում հանձնման վրա է դրվում արգելք, նախատեսված են նաև մարդու իրավունքներին նվիրված տարածաշրջանային համաձայնագրերի դրույթներով: Օրինակ՝ Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրներում գործող 1969 թվականի Մարդու իրավունքներին մասին ամերիկյան կոնվենցիայի 22-րդ հոդվածի 8-րդ կետը նախատեսում է, որ «օտարերկրացին ոչ մի դեպքում չի կարող արտաքսվել կամ վերադարձվել որևէ երկիր անկախ նրանից, թե դա իր ծագման երկիրն է, թե ոչ, եթե այնտեղ վտանգված է նրա կյանքի կամ ազատությունը իրավունքը ռասայական պատկանելություն, ազգություն, կրոնի, սոցիալական կարգավիճակի կամ քաղաքական հայացքների պատճառով»: 1985 թվականի Խոշտանգումների կանխարգելման և պատժի մասին միջամերիկյան կոնվենցիայի 13-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվում է, որ «հանձնման պահանջը չի բավարարվում, իսկ հետախուզման մեջ գտնվող անձը չի վերադարձվում այն դեպքերում, երբ կան հիմքեր կարծելու, որ նրա կյանքը վտանգված է, որ նա ենթարկվելու է խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, կամ էլ՝ որ պահանջը ներկայացրած պետությունում նա կանգնելու է հատուկ կամ ժամանակավոր դատարանների առջև»: Մարդու իրավունքներին եվրոպական դատարանը իր դատաիրավական պրակտիկայում հետևողական կերպով վճռել է, որ չվերադարձելիությունն սկզբունքի ներքո ստանձնած պարտավորությունն այն պարտավորության անբաժանելի մաս է կազմում, ըստ որի ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի 1950 թվականի Մարդու իրավունքներին և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ենթարկվող կոնվենցիայի (ՄԻԵԿ) 3-րդ հոդվածի դրույթներին և ներքո, ինչպես նաև այն, որ նշված պարտավորությունների կատարման հարց է ծագում, երբ կան ման վերաբերմունքի ենթարկվելու իրական վտանգ, որը բխում է երկրի տարածքից հարկադիր հեռացման, այդ թվում հանձնման

<sup>26</sup> Ավելի մանրամասն քննարկում և հետագա հղումներ տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Ծանոթագրություն դիվանագիտական երաշխիքներին և փախստականներին միջազգային պաշտպանություն վերաբերյալ» (այսուհետև՝ «Ծանոթագրություն դիվանագիտական երաշխիքներին վերաբերյալ»), 10 օգոստոսի 2006 թ., կետեր՝ 16-19, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=44dc81164>: Տե՛ս նաև ՄԱԿ ՓԳՀ, Խորհրդատվական եզրակացությունն «Փախստականներին կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի և դրա 1967 թվականի արձանագրության ներքո չվերադարձելիություն գծով ստանձնած պարտականություններին արտատարածքային կիրառման վերաբերյալ», 26 հունվարի 2007 թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=45f17a1a4>:

արդյունքում:<sup>27</sup>

### 3. Պարտավորությունները ստորակարգում

21. Հանձնման մասին պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշում կայացնելիս համապատասխան պահանջը ստացած պետությունը կարող է հայտնվել ստանձնած պարտավորությունները բախման իրավիճակում: Մի կողմից՝ հանձնելու պարտականությունը կարող է բխել երկկողմ կամ բազմակողմ հանձնման մասին համաձայնագրից, որին անդամակցում է ինչպես պահանջը ներկայացրած, այնպես էլ պահանջը ստացած պետությունը, կամ էլ նման պարտականություն կարող է առաջանալ միջազգային կամ տարածաշրջանային փաստաթղթային դրույթներին ներքո, որոնցով այդ պետության վրա դրվում է հանձնելու կամ դատական կարգով հետապնդելու պարտականություն: Մյուս կողմից՝ պահանջը ստացած պետության վրա դրված են փախուստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո չվերադարձելիության գծով ստանձնած պարտավորություններ, ըստ որոնց վերը քննարկված պարագաներում փախուստականի կամ ապաստան հայցող անձի հանձնումը պահանջը ներկայացրած պետության արգելվում է: Նման իրավիճակներում փախուստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերով անհատի հանձնման վրա դրված

<sup>27</sup> Տե՛ս, օրինակ, գործ «Soering v. United Kingdom», դիմում թիվ 14038/88, 7 հունիսի 1989թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b6fec> և հետագա գործեր, այդ թվում՝ գործ «Cruz Varas v. Sweden», դիմում թիվ 15567/89, 20 մարտի 1991թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b6fe14>, գործ «Vilvarajah et al. v. United Kingdom», դիմում թիվ 13163/87 և այլք, 30 հոկտեմբերի 1991թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b7008>, «Chahal v. United Kingdom», դիմում թիվ 22414/93, 15 նոյեմբերի 1996թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b69920>, գործ «Ahmed v. Austria», դիմում թիվ 25964/94, 17 դեկտեմբերի 1996թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b62f2c>, գործ «TI v. United Kingdom», դիմում թիվ 43844/98 (ընդունելության մասին), 7 մարտի 2000թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b6dfc>: «Saadi v. Italy» գործով (դիմում թիվ 37201/06, 28 փետրվարի 2008թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=47c6882e2>) Մարդու իրավունքները վերականգնողական դատարանը վերահաստատեց նախկինում կիրառած իր դատախարակական արակտիկան, ըստ որի ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով խոչտան գումարի և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վրա դրված արգելքը, այդ թվում նույն դրույթից բխող չվերադարձելիության սկզբունքի պահպանման պարտավորությունը կրում են բացարձակ բնույթի և կիրառվում են անկախ խնդրո առարկա անհատի վարքագծից, որքան էլ անցանկալի և վտանգավոր այն լինի, ինչպես անհատի սվյալ անձի կողմից գործած ենթադրյալ հանցանքի բնույթից: Ղատարանը նաև վերահաստատեց նախկինում հնչեցրած իր այն եզրակացությունը, որ հնարավոր չէ մեկնժարին դնել վատ վերաբերմունքի ենթարկվելու վտանգը, իսկ մյուսին՝ արտաքսման համար բերվող հիմքերը և որոշել այն հարցը, թե արդյոք սվյալ դեպքում այդ պետության վրա դրվում է ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը, թե ոչ:

արգելքը գերակայում է հանձնման գծով ստանձնած ցանկացած պարտավորության նկատմամբ:

22. Մարդու իրավունքների մասով ստանձնած պարտավորությունների գերակայությունը պայմանավորված չէ այդ իրողությունն ամրագրող կոնկրետ դրույթների գոյությամբ այն համաձայնագրում, որով ամրագրված է հանձնելու պարտականությունը:<sup>28</sup> Ավելի շուտ կարելի է պնդել, որ հանձնման մասին համաձայնագրերում ամրագրված պարտավորությունների նկատմամբ նշված պարտավորությունների գերակայությունը պայմանավորված է դրանց բնույթով,<sup>29</sup> ինչպես նաև միջազգային իրավակարգում և սահմանված պարտավորությունների ստորակարգությամբ: Նման ստորակարգությունը բխում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 103 հոդվածի, ինչպես նաև 55 հոդվածի «գ» կետի և 56-րդ հոդվածի դրույթներից: Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 103-րդ հոդվածում ամրագրված է կանոնադրության ներքո ստանձնած պարտավորությունների գերակայությունն այլ միջազգային համաձայնագրերից բխող պարտավորությունների նկատմամբ:<sup>30</sup> Բացի այդ, կանոնադրության 55-րդ հոդվածի «գ» կետի և 55-րդ հոդվածի դրույթների ներքո Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետությունները պարտավոր են քայլեր ձեռնարկել Միավորված ազգերի կազմակերպության սահմանված նպատակների իրականացման ուղղությամբ, ինչն ընդգրկում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանում և իրացում ամենքի համար առանց ռասայով, սեռով, լեզվով կամ դավանած կրոնով պայմանավորված որևէ տարբերակման:<sup>31</sup>

<sup>28</sup> Տե՛ս օրինակ՝ Հանձնման մասին միջամերիկյան կոնվենցիայի (1981թ.) 6-րդ հոդվածը, որը կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b38510>, և որում ասվում է հետևյալը, «սույն կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես ասպաստանի իրավունքի սահմանափակում այն դեպքերում, երբ այդ իրավունքի իրացումը համարվում է պատշաճ»:

<sup>29</sup> Ի տարբերություն պետությունների միջև գուտ առարկայական փոխադարձ իրավունքների և պարտականությունների նկատման փաստե սոդ համաձայնագրերից՝ մարդու իրավունքների և փախստականների պաշտպանությանն առնչվող փաստաթղթերում ամրագրված են «առանձին իրավակարգեր, որոնք նախատեսում են մարդու իրավունքների պաշտպանության օբյեկտիվ պարտավորություններ»: Տե՛ս M.N. Shaw «*International law*», 4-րդ հրտ., հրատարակչություն՝ Cambridge University Press, Cambridge (1997թ.), էջ 696:

<sup>30</sup> Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 103-րդ հոդվածի «գ» կետում, որը կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b3930>, ասվում է հետևյալը. «Այն դեպքում, երբ Միավորված ազգերի կազմակերպության անդամի՝ սույն կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները հակասում են ցանկացած այլ միջազգային համաձայնագրերով նրա ստանձնած պարտավորություններին, ապա գերակայում են սույն կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները»:

<sup>31</sup> Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 55-րդ հոդվածի «գ»

23. Փախստակ աններին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավակն նորմերի ներքո ստանձնած պարտավորությունները գերակայություն ունեն այլ միջազգային համաձայնագրերից բխող պարտավորություններին կատարման անհարգելի լինելու և կանխարգելման ուղղությամբ պետություններին կողմից գործադրվող ջանքերի համատեքստում:<sup>32</sup> Այս առնչությամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը և Գլխավոր ասամբլեան բազմիցս հայտարարել են, որ պետությունները պետք է ապահովեն, որ անհարգելի լինելու դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկվող բոլոր միջոցառումները համապատասխան են միջազգային իրավունքի ներքո նրանց ստանձնած պարտավորություններին, մասնավորապես՝ մարդու իրավունքներին, փախստակ աններին և մարդասիրական հարցերին առնչվող իրավակն նորմերի մասով:<sup>33</sup> Այս երկու մարմինները

---

կետում ասվում է հետևյալը. «Հետամուտ լինելով բարեկեցության ու կայունության պայմանների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են ազգերի միջև խաղաղ ու բարեկամական հարաբերություններին համար»

հիմնված հավասար իրավունքներին և ինքնորոշման սկզբունքին՝ կատարման հարգանքի վրա, Միավորված ազգերի կազմակերպությունը նպաստում է՝

... (գ) բոլորի հանդեպ և բոլորի համար մարդու իրավունքներին ու հիմնական ազատություններին համընդհանուր հարգանքին և պահպանմանը՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ դավանանքից»: Կանոնադրության 56-րդ հոդվածում ամրագրված է հետևյալը. «Կազմակերպության բոլոր անդամները պարտավորվում են ձեռնարկել համատեղ և ինքնուրույն գործողություններ՝ կազմակերպության հետ համագործակցելով 55-րդ հոդվածում նշված նպատակներին հասնելու համար»:

<sup>32</sup> Տե՛ս Անվտանգության խորհրդի բանաձև թիվ S/RES/1624(2005), ընդունված 14 սեպտեմբերի 2005թ., ներածական կետեր 2 և 7, ինչպես նաև աշխատանքային կետ 4 (հարկ է նաև վերհիշել ապաստան հայցելու և ստանալու իրավունքը, որն արտացոլված է Մարդու իրավունքներին համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածում): Տե՛ս նաև 1997 թվականի հունվարի 16-ին ընդունված Գլխավոր ասամբլեայի թիվ A/RES/51/210 բանաձևին կից «Միջազգային անհարգելի լինելու վերացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներին մասին 1994 թվականի հռչակագիրը լրացնելու մասին հռչակագիր», ներածական կետ 8, «Անհարգելի լինելու հակազդման ընթացքում մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին պաշտպանության վերաբերյալ» թիվ A/RES/60/158 բանաձևը, ընդունված 28 փետրվարի 2006թ., ներածական կետ 7 և աշխատանքային կետ 5:

<sup>33</sup> Տե՛ս Անվտանգության խորհրդի բանաձևեր՝ թիվ SC/RES/1269 (1999թ.), ընդունված 19 հոկտեմբերի 1999թ., կետ 4(iv), թիվ SC/RES/1373 (2001թ.), ընդունված 28 սեպտեմբերի 2001թ., կետ 3(f) և 3(g), թիվ S/RES/1456(2003թ.), ընդունված 20 հունվարի 2003թ., հավելված, կետ 6, թիվ S/RES/1535(2004թ.), ընդունված 26 մարտի 2004թ., հավելված, ներածական կետ 6, թիվ S/RES/1566(2004թ.), 8 ընդունված 2004թ., ներածական կետ 4, թիվ SC/RES/1617 (2005թ.), ընդունված 29 հունիսի 2005թ., ներածական կետ 4, թիվ S/RES/1624 (2005թ.), ընդունված 14 սեպտեմբերի 2005թ., ներածական կետ 2 և աշխատանքային կետ 4: Տե՛ս նաև Գլխավոր ասամբլեայի բանաձևեր՝ թիվ A/RES/49/60, ընդունված 9 դեկտեմբերի 1994թ., հավելված, կետ 5, թիվ A/RES/51/210, ընդունված 17 դեկտեմբերի 1996թ., հավելված, ներածական կետ 6 (1951 թվականի կոնվենցիայի 1-ին, 2-րդ, 32-րդ և 33-րդ հոդվածներին հատուկ մեջբերմամբ) և կետ 7, թիվ A/RES/57/219, «Անհարգելի լինելու հակազդման ընթացքում մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին պաշտպանության

հստակ հղում են կատարել 1951 թվականի կոնվենցիայի և դրա 1967 թվականի արձանագրության ներքո պետությունների վրա դրված պարտավորություններին, այդ թվում նաև չվերադարձել իրենց անսկզբունքին:<sup>34</sup> Միջազգային իրավունքի ներքո պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների լիարժեք կատարումը, մասնավորապես, մարդու իրավունքներին, փախստականներին և մարդասիրական հարցերին առնչվող նորմերի մասով, կրկին հստակ հաստատվել է հանձնման վերաբերյալ Անաբեկչության հակազդման ՄԱԿ-ի համաշխարհային ռազմավարությանը կից Գործողությունների ծրագրում, որն ընդունվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 2006 թվականի սեպտեմբերի 6-ին:

## Բ. Չվերադարձել իրենց անսկզբունքի կիրառում փախստականներին կամ ապաստան հայցող անձանց հանձնման դեպքերում

### 1. Փախստականներ

*Փախստականի հանձնման պահանջ նրա ծագման երկրից*<sup>35</sup>

24. Եթե փախստականի հանձնման մասին պահանջ է ներկայացնում նրա ծագման երկիրը, ապա 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետի կամ միջազգային սովորույթական իրավունքի դրույթներով պահանջը ստացած պետությանն արգելվում է հանձնել հետախուզման մեջ գտնվող անձին: Նման դեպքերում փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերով ամրագրված չվերադարձել իրենց անսկզբունքի համաձայն հանձնման վրա դրվում է պարտադիր արգելք,

---

վերաբերյալ», ընդունված 27 փետրվարի 2003թ., կետ 1, թիվ A/RES/58/187 «Անաբեկչության հակազդման ընթացքում մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին պաշտպանություն վերաբերյալ», ընդունված 22 մարտի 2004թ., կետ 1, թիվ A/RES/60/1 «2005 թվականին համաշխարհային գաղթյալների արդյունքների վերաբերյալ», ընդունված 24 հոկտեմբերի 2005թ., կետ 85, թիվ A/60/43, ընդունված 6 հունվարի 2006թ., ներածական կետեր՝ 11 և 19, աշխատանքային կետ 3, թիվ A/RES/60/158 «Անաբեկչության հակազդման ընթացքում մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին պաշտպանություն վերաբերյալ», ընդունված 28 փետրվարի 2006թ., ներածական կետեր՝ 7 և 13, աշխատանքային կետեր՝ 1 և 5, թիվ A/RES/62/71 «Անաբեկչության վերացման նույնիսկ միջոցների վերաբերյալ», ընդունված 8 հունվարի 2008թ., կետեր՝ 12 և 20, և մասնավորապես՝ թիվ A/RES/62/159 «Անաբեկչության հակազդման ընթացքում մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին պաշտպանություն վերաբերյալ», ընդունված 11 մարտի 2008թ.:

<sup>34</sup> Տե՛ս Գլխավոր ասամբլեայի բանաձև թիվ A/60/288, ընդունված 6 սեպտեմբերի 2006թ. Միավորված ազգերի կազմակերպության հակասանաբեկչական ռազմավարության վերաբերյալ, հավելված, կետ II.3:

<sup>35</sup> «Ծագման երկիր» եզրույթը, որն օգտագործվում է սույն ծանոթագրություն ամբողջ տեքստում, վերաբերում է քաղաքացիության երկրին, իսկ քաղաքացիություն չունեցող փախստականի կամ ապաստան հայցող անձի պարագայում՝ նախկին բնակություն երկրին:

Եթե պահանջը ստացած պետություն իրավասուն մարմիններին կողմից չի հաստատվել այն հանգամանքը, որ հետախուզման մեջ գտնվող անձը դատվում է 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված բացառություններին շարքը:<sup>36</sup> Նույնիսկ եթե այդպես է, այնուամենայնիվ, պահանջը ստացած պետությունը պետք է կատարի չվերադարձել իրություն սկզբունքի մասով մարդու իրավունքներին առնչվող իրավական նորմերի ներքո իր ստանձնած պարտավորությունները:<sup>37</sup>

25. Այս դրություններն ամբողջությամբ կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պահանջը ներկայացրած պետությունը երաշխիքներ է տվել առայն, որ խնդրո առարկան ձև հանձնվելուց հետո չի ենթարկվելու հետապնդումների կամ այլ տեսակի վնասի: ՄԱԿ ՓԳՀ-ի կարծիքով՝ նման տեսակի նախաձեռնությունները, որոնք սովորաբար կրում են «դիվանագիտական երաշխիքներ» անվանումը, չպետք է հաշվի առնվեն այն դեպքերում, երբ 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետի ներքո ամրագրված պաշտպանությունից օգտվող փախստական նույնակի կամ անուղղակի կերպով վերադարձվում է իր ծագման երկիրը:<sup>38</sup> Այս մոտեցման հիմքում ընկած է այն նկատառումը, որ տվյալ դեպքում ապաստան տրամադրած երկիրն արդեն իսկ որոշում է կայացրել և ճանաչել է այն հանգամանքը, որ այդ փախստական նույնեցել է իր ծագման երկրում հետապնդումների ենթարկվելու հիմնավոր մտավախություն: Եթե ապաստան տրամադրած երկիրը գալիս է նման եզրակացություն, ապա ուղարկող պետության համար 1951 թվականի կոնվենցիայով նախատեսված պաշտպանության հետ լիովին անհամատեղելի քայլ կհամարվի ակնկալել հենց նույն հետապնդումների հեղինակից երաշխիքներ տալ առայն, որ փախստականի վերադարձից հետո նա կարժանանա լավ վերաբերմունքի:<sup>39</sup>

*Փախստականի հանձնման պահանջ նրա ծագման երկիրը չհանդիսացող որևէ այլ երկրից*

26. Եթե հանձնման մասին պահանջ ներկայացրած երկիրը տվյալ փախստականի ծագման երկիրը չէ, ապա այդ պահանջը ստացած պետությունը պետք է քննություն առնի այն հանգամանքը, թե արդյոք տվյալ փախստականի հանձնումը համատեղելի կլինի փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող

<sup>36</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 13-15:  
<sup>37</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 17-20: Տե՛ս նաև ՄԱԿ ՓԳՀ, «Suresh Factum», վերը նշված ծանոթագրություն 15, էջեր՝ 141-157, ՄԱԿ ՓԳՀ, «Ծանոթագրություն և դիվանագիտական երաշխիքների վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 26, կետ 31 և քննարկում այստեղ՝ E. Lauterpacht և D. Bethlehem, վերը նշված ծանոթագրություն 5, կետեր 159(ii), 166 և 179:  
<sup>38</sup> Տե՛ս, ՄԱԿ ՓԳՀ, «Suresh Factum», վերը նշված ծանոթագրություն 15, կետ 51:  
<sup>39</sup> Տե՛ս, ՄԱԿ ՓԳՀ, «Suresh Factum», վերը նշված ծանոթագրություն 15, կետ 52:

միջազգային իրավական նորմերի ներքո չվերադարձել ինչպես  
զժով ստանձնած պարտավորությունների հետ:<sup>40</sup> Այս հարցին  
դրական պատասխան տալու համար պահանջը ստացած պետությունը  
պետք է պարզի, թե արդյոք հանձնման արդյունքում տվյալ  
փախստականին կսպառնա հետապնդումների և խոշտանգումների  
ենթարկվելու կամ անդառնալի վնաս կրելու վտանգ, կամ էլ այն,  
թե արդյոք նա հետագայում չի փոխանցվի իր ծագման երկրին կամ  
միայն պիսի երրորդ երկրին, որտեղ նրան կսպառնան վտանգ:

27. Վերոհիշյալը որոշելիս պահանջը ստացած պետությունը  
պետք է գնահատի այն իրավիճակը, որում կհայտնվի հետախուզման  
մեջ գտնվող անձը՝ պահանջը ներկայացրած պետությանը վերջինիս  
հանձնման պարագայում: Եթե հանձնվելուց հետո տվյալ  
փախստականին կատմամբ ցուցաբերվելիք վերաբերմունքի  
առնչությամբ տրվել են դիվանագիտական երաշխիքներ, ապա հարկ է  
նուսումնասիրել դրանք բոլոր նշանակալի հանգամանքների  
լույսի ներքո:

28. Մարդու իրավունքների առնչվող միջազգային իրավական  
նորմերի ներքո պետությունը թույլատրվում է հեռացնել որևէ  
անձին իր տարածքից՝ փոխանցելով նրան մեկ այլ երկրին և հիմք  
ընդունելով դիվանագիտական երաշխիքները միայն այն դեպքում,  
երբ դրանցով արդյունավետ կերպով բացառվում է այն վտանգը, որ  
խնդրո առարկա անձը կենթարկվի մարդու իրավունքների կոպիտ  
խախտումների: Այս պայմանը բավարարելու համար անհրաժեշտ է  
ապացուցել, որ նշված երաշխիքները պատշաճ միջոց են խնդրո  
առարկա անձին սպառնացող վտանգը

- (i) բացառելու համար, ինչպես նաև այն, որ
- (ii) պահանջը ստացած պետությունը կարող է դրանք  
բարեխղճորեն հուսալի համարել:<sup>41</sup>

29. Թեև այն դեպքերում, երբ խոսքը գնում է մահապատժի մասին,  
դիվանագիտական երաշխիքների պատեհությունն ու  
հուսալիությունը որոշելը համեմատաբար պարզ ու շիտակ  
գործընթաց է, այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ խոսքը

<sup>40</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 8-20:  
<sup>41</sup> Այս չափորոշիչները մշակվել են միջազգային, տարածաշրջանային և ազգային  
դատաիրավական պրակտիկայում, երբ խոսքը գնացել է հանձնման այն դեպքերի  
մասին, որոնցում տվյալ անձին սպառնացել է մահապատժի ենթարկվելու կամ  
արդար դատավարություն սկզբների կոպիտ խախտումների գոհ դառնալու,  
ինչպես նաև խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի վտանգ  
ներկայացնող երկիր վտարվելու կամ արտաքսվելու վտանգ: Այս խնդրին թիվս  
այլոց անդրադարձել են նաև Մարդու իրավունքների հարցերով զբաղվող  
համաձայնագրային մարմիններն ու Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի  
հանձնաժողովի կողմից լիազորված փորձագետները: Մանրամասն քննարկում  
տե՛ս այստեղ՝ ՄԱԿ ՓԳՀ, «Օանոթագրություն դիվանագիտական երաշխիքների  
վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 26, կետեր՝ 20-26:



գումում է խոշտանգումները կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի ենթարկվելու վտանգի մասին, նույն չափորոշիչների կիրառումը հաճախ ավելի խնդրահարույց է:<sup>42</sup> Խոշտանգումները և այլ դաժան, անմարդկայի ն կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով հատուկ զեկուցողի պատրաստած զեկույցում, որտեղ, ի թիվս այլոց, անդրադարձ էր կատարվում պետության ներքին որդեգրած գործելակերպին, դիվանագիտական երաշխիքների ներկայացման առնչությամբ հնչել է այն կարծիքը, որ «նման երաշխիքներն անհուսալի են և անարդյունավետ խոշտանգումներին և վատ վերաբերմունքին պաշտպանվելու առումով, քանի որ նման երաշխիքները սովորաբար ստացվում են այն պետության ներքին, որտեղ խոշտանգումները կրում են համակարգային բնույթ, իսկ վերադարձից հետո գործող մոնիթորինգային մեխանիզմներն իրենց չեն դրսևորել որպես խոշտանգումներին զերծ պահող երաշխիք, ընդ որում դիվանագիտական երաշխիքները չունեն օրինակյալ պարտադիր ուժ, ուստի, խախտման պարագայում՝ դրանք չեն ենթարկում որևէ իրավաբանական հետևանքներ կամ հաշվետվողականություն, իսկ այն անձը, ում այդ երաշխիքները կոչված են պաշտպանել, դրանց խախտման պարագայում իրավական պաշտպանության միջոցներ չունի: Ուստի, հատուկ զեկուցողն այն կարծիքին է, որ պետության ներքին չեն կարող դիվանագիտական երաշխիքներն օգտագործել որպես խոշտանգումներին և վատ վերաբերմունքին պաշտպանվելու ապահովմիջոց այն դեպքերում, երբ կան էական հիմքեր կարծելու, որ վերադարձից հետո տվյալ անձին սպառնալու է խոշտանգումները կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու վտանգ»:<sup>43</sup>

<sup>42</sup> Այս հարցին անդրադարձ է կատարել, օրինակ, Կանադայի Գերագույն դատարանը «*Suresh v. Canada (Minister of Citizenship and Immigration)*» գործով կայացրած իր որոշման մեջ ([2002] 1 S.C.R. 3, 2002, SCC 1, կետ՝ 124, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/txis/vtx/refworld/rwmain?docid=3c42bdfa0>), հայտարարելով հետևյալը՝ «Ավելորդ չի լինի լրացուցիչ մեկնաբանել երաշխիքների հարցը: Հարկ է տարբերել պետության կողմից տրված երաշխիքներն առ այն, որ մահապատիժ չի կիրառվելու (օրենքով սահմանված գործընթաց) և երաշխիքներ առ այն, որ պետությանը խոշտանգումներին չի դիմի (սպորտինի գործընթաց): Կցանկանայինք ուշադրությունը հրավիրել երաշխիքներին չափից դուրս ապավինելու հետ կապված բարդություններին այն դեպքերում, երբ պետությանը երաշխիքներ է ներկայացնում առ այն, որ սպազայում գերծկման խոշտանգումներին, մինչդեռ հենց նույն պետությանը նախկինում դիմել է սպորտինի խոշտանգումները կամ թույլ է տվել այլոց դիմել նման խոշտանգումներին իր տարածքում: Այս բարդությունները սովորում են այն դեպքերում, երբ խոշտանգումները կապված են ոչ միայն շահերի բախման, այլև պետության՝ սեփական պաշտոնատար անձանց վարքագիծը վերահսկելու անկարողության հետ: Ուստի, հարկ է տարբերակել մահապատիժ չկիրառելու և խոշտանգումներ չիրականացնելու մասին տրված երաշխիքները: Նշված երաշխիքներին պարագայում մոնիթորինգի իրականացումն ավելի հեշտ է անցնում և սովորաբար ավելի հուսալի է, քան երկրորդ տեսակի երաշխիքների պարագայում»:

<sup>43</sup> Տե՛ս Խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ

30. ՄԱԿ ՓԳՀ-ի կարծիքով՝ փախստականի հանձնման պահանջի համատեքստում նրա ծագման երկիրը չհանդիսացող երկրի կողմից տրված դիվանագիտական երաշխիքները հարկ է քննել նույնանման տրամաբանությամբ: Փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո չվերադարձել ինքն զոնվատանձնած պարտավորությունները կատարելու համար պահանջը ստացած պետությունը պետք է քննություն առնի այն հարցը, թե արդյոք նման երաշխիքները կարող են պատեհն հուսալի ապահովման միջոց ծառայել պահանջը ներկայացրած պետության կողմից հետապնդումները վտանգը կամ այն վտանգը բացառելու համար, որ հետախուզման մեջ գտնվող փախստականը հետագայում չի փոխանցվի իր ծագման երկրին կամ որևէ այլ երկրին, որտեղ նա հետապնդումները կենթարկվի:<sup>44</sup>

## 2. Ապաստան հայցողներ

### *Ապաստան հայցող անձի հանձնման պահանջ նրա ծագման երկրից*

31. Ապաստան հայցողները պաշտպանված են հարկադիր վերադարձից 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետի և սովորությունական միջազգային իրավունքի դրույթներով ապաստան ստանալու մասին դիմումի վարույթի ողջ ընթացքում: Պահանջը ստացած պետությունը չի կարող հանձնել ապաստան հայցող անձին նրա ծագման երկրին քանի դեռ նրա՝ փախստականի կարգավիճակ ստանալու մասին դիմումը գտնվում է վարույթում, այդ թվում նաև արդեն կայացրած որոշման բողոքարկման փուլում:<sup>45</sup>

32. Այս դրույթը կիրառվում է նաև այն դեպքում, երբ պահանջը ներկայացրած պետությունը տվել է դիվանագիտական երաշխիքներ ապաստան հայցող անձին վերադարձնելու դեպքում նրան կատարման որոշակի վերաբերմունք ցուցաբերելու առնչությամբ: ՄԱԿ ՓԳՀ-ի տեսանկյունն այն է, որ նման դեպքերում պահանջը ներկայացրած պետության կողմից տրված ցանկացած դիվանագիտական երաշխիք պետք է հանդես գա որպես պահանջը ստացած պետության ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինների ուսումնասիրության ենթակա տարր այն հարցի որոշման շրջանակներում, թե արդյոք

---

արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով հատուկ զեկուցող, «Միջանկյալ զեկուցող Գլխավոր աստիճանային», ՄԱԿ փաստաթուղթ թիվ A/60/316, 30 օգոստոսի 2005թ., կետ 51, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=43f30fb40>:

<sup>44</sup> Ավելի մանրամասն քննարկում տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Ծանոթագրություններ դիվանագիտական երաշխիքներ վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 26, կետեր՝ 20–26 և 48–55: Տե՛ս նաև ստորև կետ 32:

<sup>45</sup> Տե՛ս նաև վերը նշված կետ 11: Տե՛ս նաև ստորև կետեր՝ 61–68, քննարկում հանձնման պահանջի բավարարման և ապաստանի շնորհման ընթացակարգերի միջև եղած պատշաճ կապի վերաբերյալ:

խնդրո առարկա անձն ունի հետապնդման ենթարկվելու հիմնավոր մտավախություն: Նման դեպքերում դիվանագիտական երաշխիքներին շանակությունը գնահատելիս պահանջը ստացած պետությունը պետք է քննի դրանք վերը նշված 28-րդ կետում գետեղված չափորոշիչներին լույսի ներքո: Պատեհություն չափորոշիչը բավարարելու համար դիվանագիտական երաշխիքները պետք է արդյունավետ կերպով ողջամտության սահմաններում բացառեն տվյալ դեպքում հետապնդումների բռնությունը հնարավոր դրսևորումները: Նման գնահատում իրականացնելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ «հետապնդում» գաղափարը փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերի համատեքստում ընդգրկում է մարդու իրավունքներին կոպիտ խախտումներ, ինչպիսիք են՝ կյանքից և ազատությունից կամ այլ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը, սակայն չի սահմանափակվում դրանցով:<sup>46</sup> Ներկայացված երաշխիքներին հուսալիությունը որոշելիս պահանջը ստացած պետությունը պետք է ուսումնասիրի խնդրո առարկա երկրում եղած հանգամանքները, այդ թվում նման երաշխիքներին կատարմանն ախիլին փորձը, ինչպես նաև արդյունավետ մոնիթորինգի կամ այլ մեխանիզմների գոյությունը:<sup>47</sup>

33. Եթե որոշվում է, որ ապաստան հայցող անձը բավարարում է նվագագույն չափորոշիչները փախստականի կարգավիճակ ստանալու համար, ապա չվերադարձելիություն սկզբունքը, որը գետեղված է 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետով, հանդես է գալիս որպես նման անձի հանձնման վրա դրված պարտադիր արգելք, եթե նրա դեպքը չի դասվում 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված բացառություններին գործնականում մեկի շարքը:<sup>48</sup> Ինչպես արդեն նշվեց,

<sup>46</sup> Հետապնդումը կարող է դրսևորվել տարբեր եղանակներով, այդ թվում, օրինակ՝ խտրականական միջոցառումներին տեւքով, որոնք առանձին կամ միասին կարող են հանգեցնել էապես վնասարար բնույթի հետևանքներին: Անձի սոցիալական և տնտեսական իրավունքներին սահմանափակումները նույնպես կարող են հետապնդումներ համարվել, եթե նման սահմանափակումներին արդյունքում դրանցից տուժած, անձինք գրկվում են սեփական ապրուստը վաստակելու միջոցներին: Տեւ ՍՄԿ ՓԳՀ, «Ձեռնարկ փախստականներին կարգավիճակի որոշման ընթացակարգերի և չափորոշիչներին վերաբերյալ» («Ձեռնարկ»), ժնն 1979թ., 1992թ. նոր խմբագրությունամբ, կետեր՝ 51-64, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b3314>:

<sup>47</sup> Ավելի մանրամասն քննարկում տեւ ՍՄԿ ՓԳՀ, «Օանթագրություն դիվանագիտական երաշխիքներին վերաբերյալ», վերը նշված ծանոթագրությունն 26, կետեր՝ 36, 44-55:

<sup>48</sup> Հարկ է նշել, որ 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետում գետեղված պահանջները մասնաշեն կազմում այն նվագագույն չափորոշիչներին, որոնք անհրաժեշտ են փախստականի կարգավիճակի շնորհման համար և չպետք է հաշվի առնվեն այն հարցը որոշելիս, թե արդյոք որևէ ապաստան հայցող անձ իրավունք ունի դիմել փախստականի կարգավիճակ ստանալու համար, թե ոչ:

մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո հանձնման արգելքը շարունակում է գործել և կարող է կասեցնել հետախուզման մեջ գտնվող անձի հանձնումը:<sup>49</sup>

34. Եթե որոշվի, որ տվյալ ապաստան հայցող անձը չի բավարարում փախստակ անի սահմանման չափորոշիչները, կամ եթե որոշվի, որ բացառող դրույթի կիրառումն օրինակաբար, ապա խնդրո առարկա անձը չի օգտվում փախստակ աներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո նախատեսված պաշտպանությունից: Այդուհանդերձ, հնարավոր է, որ պահանջը ստացած պետություն արգելվի հանձնել հետախուզման մեջ գտնվող անձին՝ հաշվի առնելով մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո չվերադարձել իրության գծով ստանձնած պարտավորությունները:<sup>50</sup>

*Ապաստան հայցող անձի հանձնման պահանջ նրա ծագման երկիրը չհանդիսացող որևէ այլ երկրից*

35. Այն դեպքերում, երբ ապաստան հայցող անձի հանձնման պահանջ ներկայացրած պետությունը նրա ծագման երկիրը չէ, պահանջը ստացած պետությունը պարտավոր է փախստակ աներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո գնահատել տվյալ երկիր այդ անձին հանձնելու արդյունքում նրան սպառնացող վտանգները: Ապաստան հայցող անձի հանձնման պարագայում՝ նրա նկատմամբ ցուցաբերվելիք վերաբերմունքի առնչությամբ տրված ցանկացած դիվանագիտական երաշխիք պետք է քննվի պահանջը ստացած պետության կողմից այն գործընթացի շրջանակներում, որով որոշվում է այն հարցը, թե արդյոք հետախուզման մեջ գտնվող անձին հանձնման արդյունքում սպառնալու է հետապնդումներին, խոշտանգումներին կամ այլ անդառնալի վնասի ենթարկվելու վտանգ, թե ոչ:<sup>51</sup>

36. Եթե պահանջը ներկայացրած պետությունում հետախուզման մեջ գտնվող անձը ենթարկվում է հետապնդումներին վտանգի 1951 թվականի կոնվենցիայում ամրագրված որևէ հիմքով կամ վերադարձվում է այն տեղից իր ծագման երկիր, ապա 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետի կամ միջազգային

---

Փոխարենը՝ 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված բացառություն կիրառումը ենթադրում է, որ խնդրո առարկա անձը կորցնում է հարկադիր վերադարձից պաշտպանություն իրավունքը, նույնիսկ եթե պահպանվում է նրա փախստակ անի կարգավիճակը:

<sup>49</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 16-20 և կետ 24:

<sup>50</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 17-20:

<sup>51</sup> Այս գնահատման շրջանակներում անհրաժեշտ է ուսումնասիրել տրված երաշխիքների պատեհությունն ու հուսալիությունը: Տե՛ս վերը նշված կետեր՝ 28 և 32, իսկ ավելի մանրամասն քննարկում տե՛ս այստեղ՝ ՄԱԿ ՓԳՀ, «Ծանոթագրություն դիվանագիտական երաշխիքներին վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 26, կետ 37:

սովորութեան իրավունքի դրույթներին երբք պահանջը ստացած պետությունն ստանձնած պարտավորություններով արգելվում է հանձնել տվյալ ասպաստան հայցող անձին:<sup>52</sup> Պահանջը ստացած պետությունը պարտավոր է նաև պարզել, թե արդյոք հանձնումը պահանջը ներկայացրած պետությանը համատեղելի կլինի մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերին երբք չվերադարձել ինչո՞ւն է: **զ ծ ո վ** **ս տ ա ն ձ ն ա ծ** **ի ր պարտավորություններին հետ:**<sup>53</sup>

37. Եթե պարզվի, որ հանձնելով տվյալ անձին պահանջը ներկայացրած պետությունը՝ պահանջը ստացած պետությունը չի խախտում միջազգային իրավունքի ներքո չվերադարձել ինչո՞ւն է զ ծ ո վ **ս տ ա ն ձ ն ա ծ** ի ր պարտավորությունները, ասպաստան հայցող անձը կարող է հանձնվել: Այդուհանդերձ, այս գործընթացում ներգրավված պետությունները պարտավոր են ասպահովել, որ այդ անձը հնարավորություն ունենա օգտվել ասպաստանի շնորհման արդարև արդյունավետ ընթացակարգից, կամ պահանջը ստացած, կամ պահանջը ներկայացրած պետությունում:<sup>54</sup>

**Գ. Չվերադարձել ինչո՞ւն է զ ծ ո վ **ս տ ա ն ձ ն ա ծ** պարտավորություններին կատարում փախստականներին կամ ասպաստան հայցող անձանց հանձնման դեպքերում**

**1. Չվերադարձել ինչո՞ւն է մասին դրույթները հանձնման համատեքստում**

38. Բազմաթիվ երկրներին ազգային օրենսդրությունը նախատեսում է հանձնման պահանջի մերժում, եթե հետախուզման մեջ գտնվող անձը<sup>55</sup> փախստական է, ն (կամ) եթե այդ անձին հանձնելու պարագայում նրան սպառնալու է խոշտանգումների ենթարկվելու կամ մարդու իրավունքներին կոպիտ խախտումներից տուժելու վտանգ:<sup>56</sup> Բացի այդ, ասպաստան հայցողներին հանձնումը միանշանակ արգելված է որոշ երկրներում:<sup>57</sup> Այլ երկրներում

<sup>52</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 11, 31 և 33:

<sup>53</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 17-20:

<sup>54</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 67-68 և 88-89:

<sup>55</sup> Նման դրույթներ կարելի է գտնել հանձնման մասին ազգային օրենքներում, քրեական (դատավարական) իրավունքում և (կամ) սահմանադրական իրավունքում: Ասպաստանի շնորհման մասին օրենսդրական նորմերում կարող են ընդգրկվել այնպիսի դրույթներ, որոնք անդրադարձնում են փախստականներին և (կամ) ասպաստան հայցող անձանց հանձնման մասին պահանջներին: Ոչ սպառիչ ցանկ տե՛ս S. Kapferer, «*Extradition and Asylum*», վերը նշված ծանոթագրությունն, ծանոթագրություն 401:

<sup>56</sup> Խոշտանգումների վտանգի դեպքում հանձնումն արգելող որոշ դրույթներ օրինակներ կարելի է գտնել այստեղ՝ «*Extradition and Asylum*», վերը նշված ծանոթագրություն 1, կետեր՝ 132-133:

<sup>57</sup> Տե՛ս, օրինակ, Բոսնիա և Հերցեգովինայի քրեական դատավարություն օրենսգիրք, 415-րդ հոդվածի 1-ին կետի «b» ենթակետ, Մլովակիայի

չ վերադարձել ինչի ան մասին դրույթները կիրառումը որպես փախստական ճանաչված անձանց նկատմամբ տարածվում է նաև ապաստան հայցողներին վրա: Փախստականներին և ապաստան հայցողներին նկատմամբ կարող են կիրառվել նաև չ վերադարձել ինչի ան մասին դրույթներ, որոնք սահմանված են հանձնման կամ օտարերկրացիներին վերաբերող օրենսդրական նորմերում, և որոնցով ընդհանուր արգելք է դրվում երկրի տարածքից ցանկացած անձին հեռացնելու (այդ թվում՝ հանձնման միջոցով) վրա, եթե վերջինիս կյանքին կամ ազատությանը վտանգ է սպառնում պահանջը ներկայացրած երկրում:

39. ՄԱԿ ՓԳՀ-ն այն կարծիքին է, որ հարկավոր է հստակ դրույթներ ամրագրել օրենսդրությունում՝ պարտավորեցնելով համապատասխան իրավասու մարմիններին մերժել փախստականի կամ ապաստան հայցող անձի հանձնման պահանջը, եթե այն համատեղելի չէ փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո չ վերադարձել ինչի ան գծով պետության ստանձնած պարտավորությունների հետ: Նման դրույթներն իրենցից ներկայացնում են կարևոր երաշխիք՝ հանդես գալով որպես միջազգային իրավական պահանջների պարզ արտահայտում, որը պետք է հաշվի առնվի փախստականներին և ապաստան հայցողներին հանձնման ընթացակարգերի շրջանակներում: Այնուամենայնիվ, հետախուզման մեջ գտնվող անձին չ հանձնելու մասին պարտավորությունն այն դեպքերում, երբ նման հանձնումը հակասում է փախստականներին և (կամ) մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո սահմանված չ վերադարձել ինչի ան սկզբունքին, պարտադիր է պահանջը ստացած պետության համար, նույնիսկ եթե դրա ազգային օրենսդրությամբ հանձնման վրա նման հիմքով միանշանակ արգելք չի դրվում:<sup>58</sup>

---

Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի, 501 հոդվածի «b» կետ:  
<sup>58</sup> Այն սկզբունքը, որպետությունը պատասխանատու է միջազգային իրավունքի ներքո իր ստանձնած պարտավորությունների խախտում ենթադրող ցանկացած վարքագծի համար, ինչպես նաև այն, որ տվյալ սկզբունքը վերաբերում է բոլոր այն մարմիններին ենթաստորաբաժանումներին և անձանց գործողություններին կամ բացթողումներին, որոնք իրականացնում են պետական լիազորություններ օրենսդիր, դատական կամ գործադիր գործառնություններին շրջանակներում կամ հանդես են գալիս նման կարգավիճակով որևէ առանձին դեպքում, բավականին լավ կայացած իրողությունն է միջազգային իրավունքում: Նույնը վերաբերում է այն սկզբունքին, ըստ որի պետությունը չի կարող մեջբերել սեփական ներպետական օրենսդրության դրույթներն իրարարացում միջազգային իրավունքի ներքո իր ստանձնած պարտավորությունները չ կատարելու համար: Տե՛ս, օրինակ, «Հոդվածներ պետության պատասխանատվության վերաբերյալ», 4-րդ և 32-րդ հոդվածներ, որոնք կցված են որպես հավելված Գլխավոր ասամբլեայի թիվ 56/83 բանաձևին, ընդունված 12 դեկտեմբերի 2001թ. «Միջազգայնորեն սխալ համարվող գործողություններին համար պետություններին պատասխանատվություն» խորագրով, ինչպես նաև այս հոդվածներին վերաբերող Միջազգային իրավագիտական հանձնաժողովի մեկնաբանությունները, տարեկան գեկույց 2001թ. գլուխ IV, կարելի է գտնել այստեղ՝

**2. Հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերի այլ կարևոր դրույթներ և սկզբունքներ, ինչպես նաև դրանց կապն չվերադարձել ինչո՞ւն սկզբունքի հետ**

*Խորականոթյան մասին դրույթներ*

40. Հանձնման մասին մի շարք համաձայնագրերում, ահաբեկչական գործողությունների և անդրագային հանցավորություն այլ տեսակների հակազդման, կանխարգելման և պատժի վերաբերյալ միջազգային փաստաթղթերում, ինչպես նաև հանձնման մասին ազգային օրենքներում ընդգրկված են դրույթներ, ըստ որոնց պահանջը ստացած պետությունը կարող է կամ պարտավոր է մերժել հանձնման մասին պահանջը, եթե այն համարում է, որ սովորական հանցագործության համար հանձնելու պահանջը ներկայացվել է հետապնդող կամ խորականական մտադրությամբ: Հանձնելու մասին պահանջը մերժելու այս հիմնավորումը, որն հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերում հաճախ կրում է «խորականոթյան մասին դրույթ» անվանումը, սերտորեն կապված է 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված չվերադարձել ինչո՞ւն մասին դրույթների հետ:<sup>59</sup>

41. ՄԱԿ ՓԳՀ-ն այն կարծիքին է, որ պահանջը ստացած պետության կողմից փախստականների առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո չվերադարձել ինչո՞ւն գծով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար նախընտրելի կլինեք հանձնման մասին իրավական նորմերում այս երաշխիքը համարել պարտադիր, այլ ոչ թե թողնել այն պահանջը

<http://untreaty.un.org/ilc/reports/2001/2001report.htm>:

<sup>59</sup> Տե՛ս, օրինակ՝ 1957 թվականի Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ կետը, որը կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b36b0>, որով նախատեսվում է, որ հանձնման պահանջը չի բավարարվում, «եթե պահանջը ստացած պետությունը էական հիմքեր ունի կարծելու, որ սովորական քրեական հանցագործության համար հանձնման պահանջը ներկայացվել է անձին իր ռասայական պատկանելության, դավանած կրոնի, ազգության կամ քաղաքական հայացքների համար հետապնդելու կամ պատժելու նկատառումով, կամ որ տվյալ անձը կարող է տուժել բերված պատճառներից որևէ մեկի հետևանքով»: Շվեյցարիայի դաշնային տրիբունալն անվանել է այս դրույթը փախստականների առնչվող իրավական նորմերով ամրագրված չվերադարձել ինչո՞ւն սկզբունքի հստակ արտահայտում հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերի համատեքստում (տե՛ս նորոշումները ընդունված՝ 18 դեկտեմբերի 1990թ., 1.A127/1990/tg, քաղվածք գործից թիվ *IJRL/0152, 5:2 International Journal of Refugee Law* (1993թ.), էջեր՝ 271–273, 11 սեպտեմբերի 1996թ., BGE 122 II 373, էջեր՝ 380–382 , և 14 դեկտեմբերի 2005թ., 1A.267/2005/gji, կետ 3.1): Հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերում ընդունված խորականոթյան մասին դրույթների բովանդակության և տարածման տիրույթի վերաբերյալ րացուցիչ մանրամասներին ծանոթանալու համար, տե՛ս S. Kapferer, «*Extradition and Asylum*», վերը նշված ծանոթագրություն թիվ 2, կետեր՝ 88-104 և 249-252:

ստացած պետություն հայեցողությունը:<sup>60</sup> Այդուհանդերձ, հարկ է նշել, որ հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերում խտրականություն մասին դրույթները տարածման տիրույթն ավելի սահմանափակ է և էական հայեցակետերով տարբերվում է փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո ընդունված չվերադարձելիությունն սկզբունքից: Ուստի, խտրականություն մասին դրույթները չպետք է հանդես գան որպես փախստականների կամ ապաստան հայցող անձանց հանձնման ընթացակարգերի շրջանակներում հարկադիր վերադարձից նրանց գերծ պահելու միակ ապահովման միջոցը:<sup>61</sup> Այսպիսով, փախստականների կամ ապաստան հայցող անձանց հանձնման հարցերում մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո ստանձնած իր պարտականություններին զատ՝ պահանջը ստացած

<sup>60</sup> Տե՛ս նաև Հանձնման մասին նմուշային համաձայնագրի 3-րդ հոդվածի «b» կետը, ընդունված 1990 թվականին (թիվ A/RES/45/116, 14 դեկտեմբերի 1990թ., հավելված), որը կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3b00f18618> ինչպես նաև Հանձնման մասին նմուշային օրենքի 5-րդ հոդվածը, որը մշակվել ՄԱԿ-ի թմբամիջոցներին և հանցավորություն դեմ պայքարի գրասենյակի կողմից, որն իր հանձնարարականում առաջարկում է ընդգրկել խտրականություն մասին դրույթները, որպես հանձնման մասին պահանջը մերժելու պարտադիր հիմք:

<sup>61</sup> Հանձնման մասին համաձայնագրերի և ազգային օրենքների մեծ մասում որոշակի սոցիալական խմբին պատկանելու հանգամանքը չի ընդգրկված այն հիմքերի շարքում, որոնց վկայականում անձը կարող է պնդել հանձնման դեպքում իրեն սպառնացող վնասի մասին և, հետևաբար, հայտնվել մերժման այս հիմքի տարածման տիրույթում, թեպետև հանձնմանը նվիրված փաստաթղթերում խտրականություն մասին վերջերս ընդունված դրույթները ներառում են որոշակի սոցիալական խմբի պատկանելու գաղափարի մեջ ընդգրկված առնվազն առանձին տարրեր: Ավելին, խտրականություն մասին դրույթներում առաջին հերթին անդրադարձ է կատարվում հետապնդումների ենթարկվելու կամ վնաս կրելու վտանգի հարցին այն քրեական հետապնդման կամ պատժի համատեքստում, որը վերապահված է փախուստի դիմած անձին նրան հանձնելուց հետո, իսկ որոշ դեպքերում նշված դրույթներում ուղղակիորեն մեջբերվում է «դատավարության շրջանակներում» վնաս կրելու վտանգը: Այս դրույթները կիրառումը պարտադիր չէ այն դեպքերում, երբ խնդրո առարկան անձին կարող է սպառնալ հետապնդումների այլ ձևերի ենթարկվելու վտանգ: Փախստականների և ապաստան հայցող անձանց պարագայում չվերադարձելիությունն սկզբունքը կարող է նախատեսել ավելի լայն պաշտպանությունն, քան ի որ այն կիրառվում է ցանկացած այն պիսի վերաբերմունքի առնչությամբ, որը կարող է հետապնդում համարվել, եթե այն հնարավոր լինի շտկապել տվյալ անձի ռասայական պատկանելության, դավանանքի, ազգության, որևէ առանձին սոցիալական խմբին պատկանելու կամ քաղաքական հայացքների հետ: Մուսկոլովից՝ խտրականություն մասին դրույթի անհատական տարածման տիրույթը չի սահմանափակվում փախստականներով կամ ապաստան հայցող անձանցով: Եթե կա քաղաքական շարժառիթներով հետապնդումների ենթարկվելու կամ համապատասխան այլ պատճառներով վնաս կրելու վտանգ, ապա հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերի ներքո՝ հանձնման պահանջի մերժման հիմքը կիրառվում է նույնիսկ այն դեպքերում, երբ տվյալ անձը բացառող դրույթները կիրառմամբ գրկվել է 1951 թվականի կոնվենցիայի դրույթների ներքո նախատեսված փախստականների պաշտպանության իրավունքից: Մանրամասների համար տե՛ս «*Extradition and Asylum*», ծանոթագրություն 2, կետեր՝ 249– 252:



պէտու թյունը շարունակում է կրել փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո չվերադարձել ինչպես զժողովուստն ձեռք իր պարտավորությունները:

*Հանձնմանն առնչվող իրավական նորմերում ընդունված այլ հիմքեր հանձնման պահանջը մերժելու համար*

42. Հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերում փախստականի կամ սպաստան հայցող անձին կատարել կարող են կիրառվել հանձնման պահանջի մերժման այլ հիմքեր: Պահանջը ստացած պետությունը կարող է հանձնման պահանջը մերժել, եթե համարի, որ այն հանցագործությունը, որի համար ներկայացվել է սվյալ պահանջը, կրում է քաղաքական բնույթ («ազատում քաղաքական բնույթի հանցագործությունների պարագայում»):<sup>62</sup> 1970-ական թվականներին վերհանձնման պահանջը մերժելու այս հիմքի տարածման տիրույթը զգալիորեն նվազել է, քանի որ հանձնման մասին համաձայնագրերում և համապատասխան այլ միջազգային փաստաթղթերում, ինչպես նաև անարեկչության որոշ հայեցակետերին անդրադարձող մի շարք կոնվենցիաներում և արձանագրություններում թվով ավելի շատ հանցագործություններ հանձնման նպատակներով ամրագրված են որպես ոչ քաղաքական բնույթի հանցագործություններ: Կախված նրանից, թե որքանով է այն ներառված ներպետական օրենսդրական նորմերում՝ քաղաքական բնույթի հանցագործությունների համար ազատումը կարող է, այդուհանդերձ, կարևորություն ունենալ փախստականներին կամ սպաստան հայցող անձանց հանձնման դեպքերում:<sup>63</sup>

43. Ելնելով գործի հանգամանքներից՝ հանձնման մասին պահանջը նաև կարող է մերժվել, եթե պահանջը ներկայացրած պետությունում առկա է մահապատժի կիրառման վտանգ,<sup>64</sup> պահանջը

<sup>62</sup> Սկսած 19-րդ դարի կեսերից՝ հանձնման մասին համաձայնագրերում և ազգային օրենսդրական նորմերում պարբերաբար ընդգրկվել է այն գաղափարը, որ հանձնման մասին պահանջը պետք է մերժվի, եթե պահանջը ստացած պետությունը համարում է, որ հանձնման պահանջի հիմքում ընկած հանցանքը կրում է քաղաքական բնույթ:

<sup>63</sup> Օրինակ՝ այն դեպքերում, երբ խոսքը գնում է պետական դավաճանության, խոռվության կամ սպաստանության կոչերի, միաստի հասցեին հնչեցրած վիրավորանքների կամ քննադատության, լրտեսության, սադրիչ պրոպագանդայի, արգելված քաղաքական կուսակցություն հիմնադրելու կամ դրան անդամակցելու, ինչպես նաև ընտրակեղծիքների մասին, որոնք ավանդաբար համարվել են քաղաքական բնույթի հանցագործություններ և հանցեցրել են հանձնման պահանջի մերժմանը: Հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերում հանձնման պահանջի մերժման այս հիմքի վերաբերյալ ավելի մանրամասն քննարկում տե՛ս S. Kapferer, *Extradition and Asylum*, վերը նշված ծանոթագրություն 2, կետեր՝ 72-85 և 244-248: Տե՛ս նաև ստորև կետ 81:

<sup>64</sup> Աճում է այն պետությունների թիվը, որոնք պարտավոր են մերժել անձին հանձնելու պահանջը մի երկրին, որտեղ նրան սպանում է մահապատժի

ստացած պետությունում ընդունված արդարադատության և արդարության հիմնարար գաղափարներին վկայակոչմամբ,<sup>65</sup> կամ էլ՝ մարդասիրական և կատարումներով:<sup>66</sup> Մասնավորապես, այն դեպքերում, երբ խոսքը գնում է մահապատժի կիրառման մասին, հանձնման խոչընդոտները կարելի է հաղթահարել, եթե պահանջը ներկայացնող պետությունը հուսալի երաշխիքներ ներկայացնի առայն, որ հետախուզման մեջ գտնվող տվյալ անձին կատմամբ մահապատժի պահանջով կամ չի նշանակվի: Երբեմն, նման երաշխիքներ տրվում են նաև արդար դատավարության առումով մտահոգություն առաջացնող դեպքերում: Այդուհանդերձ, կարևոր է նշել, որ նման երաշխիքներին ներկայացման դեպքում չի կարող չեղյալ համարվել պահանջը ստացած պետության՝ փախստականին կամ ապաստան հայցող անձին հետապնդումների, խոշտանգումների կամ այլ տեսակի անդառնալի վնաս ներկայացնող երկրին չվերադարձնելու պարտավորությունը, որն ամրագրված է փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո:<sup>67</sup>

*Հանձնմանն առնչվող իրավական նորմերի ներքո ընդունված այլ կարևոր սկզբունքներ*

44. Փախստականին կատմամբ կարող են կիրառվել հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերի նաև այլ սկզբունքներ՝ հանձնման մասին համապատասխան համաձայնագրի և (կամ) օրենսդրական նորմի ներքո:

- «Հատուկ մոտեցման» կանոնի շրջանակներում՝ պահանջը ներկայացրած պետությունն իրավասու չէ հետապնդել հանձնված անձին այլ հանցանքների համար, բացի նրանցից, որոնց համար տվյալ հանձնման մասին պահանջն սկզբանե բավարարվել է, եթե պահանջը ստացած պետությունը չի տալիս դրան իր համաձայնությունը:

---

Ենթարկվելու վտանգը՝ հիմք ընդունելով մարդու իրավունքներ միջազգային փաստաթղթերի կամ ազգային (սահմանադրական) իրավունքի դրույթներին ներքո իրենց ստանձնած պարտավորությունները: Մանրամասներին համար տես «*Extradition and Asylum*», ծանոթագրություն 2, կետեր՝ 109 և 143-147:

<sup>65</sup> Օրինակ՝ սակարող է վերաբերել այն դեպքերին, երբ հետախուզման մեջ գտնվող անձին կատմամբ հետապնդումը կհակասի «*ne bis in idem*» (նաև հայտնի որպես «կրկնակի վտանգ») սկզբունքին, այն դեպքերում, երբ խոսքը գնում է անձի բացակայությունը և նրան կատմամբ իրականացվող դատական հետապնդման կամ հատուկ դատարանի կողմից արդար դատավարության իրավունքի խախտման մասին: Տե՛ս S. Kapferer «*Extradition and Asylum*», վերը նշված ծանոթագրություն 2, կետեր՝ 107-108 և 253:

<sup>66</sup> Օրինակ՝ հետախուզման մեջ գտնվող անձի ծեր տարիքի կամ հիվանդությունն ապտճառով: Տե՛ս S. Kapferer «*Extradition and Asylum*», վերը նշված ծանոթագրություն 2, կետեր՝ 112 և 253:

<sup>67</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 17-20:

- Հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերի համաձայն՝ հետախուզման մեջ գտնվող անձին պահանջը ներկայացրած պետությունից դեպի որևէ երրորդ երկիր հետագայում կրկին հանձնելու համար կարող է նաև անհրաժեշտ լինել պահանջը ստացած պետության համաձայնությունն այնպիսի հանցանքների առնչությամբ, որոնք նա գործել է պահանջը ստացած պետության կողմից հանձնվելուց առաջ:
- Ավելին, հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերն ավանդաբար հնարավորություն են ընձեռում պահանջը ստացած պետությանը քվարարել հանձնման մասին պահանջն այն պայմանով, որ հետախուզման մեջ գտնվող անձը դատավարությունից հետո վերադարձվի այդ պետություն՝ այնտեղ նշանակված պատիժը կրելու նպատակով:

45. Հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերի այս ավանդական սկզբունքները կարևոր իրավաբանական երաշխիքներ են նախատեսում հետախուզման մեջ գտնվող անձի համար: Այդուհանդերձ, հաշվի առնելով այս երաշխիքների հստակ և պարզ սահմանված տարածման տիրույթը՝ դրանք, փախստականների համատեքստում առանձին վերցրած, փախստականների և ապաստան հայցող անձանց համար քվարար պաշտպանություն չեն ապահովում հետապնդումների, խոշտանգումների կամ այլ անդամալի վնասի վտանգ ներկայացնող երկիր վերադարձից: Պահպանվում է պահանջը ստացած պետության այն պարտավորությունը, ըստ որի նա պետք է ապահովի հետախուզման մեջ գտնվող անձի հանձնման համապատասխանությունը փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո չվերադարձել իրեն չգտնվող ստանձնած պարտավորություններին: Ավելի կոնկրետ՝ չհատուկ մոտեցման կանոնը, ոչ էլ քրեական դատավարությունից հետո տվյալ անձին կրկին հանձնելու կամ վերադարձնելու մասին պահանջը ներկայացրած պետության կողմից ստանձնած պարտավորությունը չեն կարող վկայակոչվել որպես հիմնավորում փախստականին կամ ապաստան հայցող անձին իր ծագման երկրին կամ որևէ այլ երկրին հանձնելու համար, որտեղ հետախուզման մեջ գտնվող անձին սպառնում է հետապնդումների ենթարկվելու վտանգ:<sup>68</sup> Փախստականի սահանձնման այնպիսի

<sup>68</sup> Գերմանիայի Դաշտային սահմանադրական դատարանը վճռել է, որ պահանջը ներկայացրած պետության կողմից տրված երաշխիքն առայն, որ պահպանվելու է հատուկ մոտեցման սկզբունքը, կարող է համարվել քաղաքական բնույթի հետապնդումներից զերծ մնալու քվարար երաշխիք այն երկրներին պարագայում, որտեղ արձանագրվել է հարգանք ժողովրդավարական սկզբունքներին և օրենքի գերակայությունն անտամբ, սակայն այս կանոնը չի կրում ընդհանուր բնույթ (որոշում թիվ 1 BvR 1457/81,

բաց առիկ հանգամանքներում, երբ 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառումը համարվում է արդարացի, մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերով նախատեսված չվերադարձելիության մասին դրույթները, այնուամենայնիվ, կիրառելի են համարվում՝ արգելք դնելով տվյալ անձի հանձնման վրա: Եթե որևէ փախստականի կամ ապաստան հայցող անձի հանձնման պահանջներ կայացնող պետությունը նրա ծագման երկիրը չէ, ապա պահանջը ստացած պետությունը պետք է պարզի, թե արդյոք հանձնելով այդ երկրին հետախուզման մեջ գտնվող անձին՝ պահանջը ստացած պետությունը կենթարկի նրան հետապնդումների, խոչ տանգումների կամ այլ անդառնալի վնաս կրելու վտանգի:<sup>69</sup>

### III. ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԹԱՑ ԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՓԱԽՍՏ ԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏ ՊԱՆՈՒԹՅՈՒՆ

#### **Ա. Ընդհանուր նկատառումներ**

46. Ավանդաբար հանձնումը դիտվել է որպես սոսկ պետությունների փոխարարերությունների վերապահված հարց, ընդ որում համարվել է, որ հետախուզման մեջ գտնվող անձը հիմքերում իբրև քրոնիկոս պահանջը ներկայացրած պետության իրեն հանձնելու մասին որոշումը միայն այն պատճառաբանությամբ, որ նման քայլով կխախտվեն տվյալ պարագայում կիրառելի միջպետական համաձայնագրի դրույթները: Փախստականների և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերում արձանագրած զարգացումների շնորհիվ՝ հանձնման գործընթացում անհատի տեղը հիմնովին փոխվեց: Այն հայտ է, որ հանձնման մասին պահանջը ստացած

---

ընդունված 4 մայիսի 1982թ.): Շվեյցարիայի Դաշնային դատարանը վճռել է, որ հատուկ մոտեցման սկզբունքը, ինչպես նաև բարեխիղճ մոտեցման սկզբունքը բավարար պաշտպանությունն չեն ապահովում խնդրո առարկա անձի համար և նրան զերծ չեն պահում հետապնդումներից, իսկ հատուկ մոտեցման սկզբունքը չի կարող համարվել այլ ընտրանք, որը կփոխարինի հանձնման պահանջի մերժմամբ երաշխավորվող պաշտպանությունը (որոշում թիվ 1A.127/1990/tg, ընդունված 18 դեկտեմբերի 1991թ., քաղվածք թիվ IRJL/0152 գործից, 5:2 *International Journal of Refugee Law* (1993թ.), էջեր՝ 271–273): Տե՛ս նաև Ֆրանսիայի Պետական խորհրդի (CE, 10 սայրիլի 1991թ., *Kilic*) որոշումը, որի շրջանակներում որպես փախստական ճանաչված անձին մեկ այլ եվրոպական երկրին հանձնելու որոշումը, ի թիվս այլ պատճառների, հաստատվել էր, քանի որ հանձնման մասին պահանջը բավարարվել էր միայն այն պայմանով, որ տվյալ անձը չհանձնվի իր ծագման երկրին՝ հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերով սահմանված ընդհանուր սկզբունքներին համապատասխան: Տե՛ս նաև S. Kapferer «*Extradition and Asylum*», վերը նշված ծանոթագրություն 2, կետեր՝ 65-68 և 122:

<sup>69</sup> Տե՛ս նաև վերը նշված կետ 26:

պէտու թյան կողմից դրա վերաբերյալ կայացրած համապատասխան  
որոշումը նշանակալի ազդեցություն է թողնում է ինդրոնաարկա  
անձի վրա: Հաշվի առնելով հնարավոր հետևանքները՝ հարկ է  
նախատեսել այնպիսի ընթացակարգային երաշխիքներ, որոնցով  
հանձնման գործընթացի շրջանակներում քննության կառնվեն  
հետախուզման մեջ գտնվող անձին առնչվող հանգամանքները և  
պահանջը ներկայացրած պետությանը նրան հանձնելու  
արդյունքում առաջացող հնարավոր վտանգները: Այդ  
իրողությունը խիստ կարևոր է այն դեպքերում, երբ խոսքը գնում  
է փախստականի կամ ապաստան հայցող անձի մասին, ում հանձնումը  
կարող է ենթադրել վերադարձ հետապնդումները վտանգ  
ներկայացնող երկիր:

47. Պահանջը ստացած պետության նկատմամբ ներկայացվող այն  
պայմանը, որ վերջինս պարտավոր է տալ պատշաճ և արդյունավետ  
երաշխիքներ, որոնք ինդրոնաարկա անձին զերծ կպահեն նրա  
հանձնման գործընթացի շրջանակներում հիմնարար  
իրավունքների խախտումներից, գնալով ավելի մեծ արտացոլում է  
գտնում հանձնման հարցերը կարգավորող ազգային օրենսդրական  
նորմերում, ինչպես նաև դատաիրավական պրակտիկայում:  
Այնուամենայնիվ, ամեն երկրում հետախուզման մեջ գտնվող  
անձին վերապահված ընթացակարգային իրավունքները զգալիորեն  
տարբերվում են:<sup>70</sup>

48. Հանձնման մասին համաձայնագրերում սովորաբար  
նախատեսված չեն հանձնման պահանջների քննության  
ընթացակարգերն ամրագրող դրույթներ: Որպես կանոն, պահանջը  
ստացած պետության ազգային օրենսդրական նորմերով  
սահմանվում են ինչպես համապատասխան ընթացակարգերը, այնպես  
էլ այն իրավասում ամրամիսները, որոնք պատասխանատու են այն  
հարցի քննության համար, թե արդյոք հանձնման մասին պահանջը  
բավարարում է կիրառելի ձևաբանական և նյութաիրավական  
պահանջները, և (կամ) որոշում են, թե արդյոք հարկավոր է  
բավարարել հանձնման մասին պահանջը, թե մերժել այն: Ազգային  
օրենսդրության ներքո սահմանված ընթացակարգերը տարբերվում  
են՝ կախված տվյալ երկրում գործող իրավական համակարգից:  
Այդուհանդերձ, բազում պետություններում հանձնման  
գործընթացը բաղկացած է մի շարք տարբեր իրավասում ամրամիսներ  
կողմից իրականացվող տարբեր փուլերից, որոնցից են.

- (i) Նախնական վարչական փուլ, որը սովորաբար բաղկացած է  
տեխնիկական պահանջների<sup>71</sup> քննության հիսկ երբեմն էլ

<sup>70</sup> Տե՛ս S. Kapferer «*Extradition and Asylum*», վերը նշված ծանոթագրություն 2, կետեր՝  
170-175:

<sup>71</sup> Տեխնիկական պահանջները սովորաբար ներառում են հետևյալ հարցերը.  
արդյոք պահանջը հասցեագրված է պատասխանատու ամրամիս, արդյոք այն

ներառում է այն հարցի նախնական գնահատումը, թե արդյոք ներկայացված պահանջը կարող է բավարարվել, ինչին հաջորդում է

(ii) Դատական կարգով այն հարցի որոշումը, թե արդյոք հանձնման մասին պահանջը բավարարում է համապատասխան օրենսդրական նորմերում (կամ) տվյալ դեպքում կիրառելի հանձնման մասին համաձայնագրում գետեղված նյութաիրավական պայմանները, ինչպես նաև

(iii) Վերջնական գործադիր որոշում այն հարցի վերաբերյալ, թե արդյոք հարկավոր է բավարարել հանձնման մասին պահանջը, թե ոչ: Երկրներին մեծ մասում իրավասու դատական մարմինն այն եզրակացությունը, որ հանձնման մասին պահանջի նկատմամբ ներկայացվող իրավաբանական պայմանները չեն բավարարվել, պարտադիր է կատարման գործադիր իշխանություններին համար, և հանձնման մասին պահանջը պետք է մերժվի: Այն դեպքերում, երբ հանձնումը լիազորված է դատարաններին կողմից, իրավասուն նախարարությունը սովորաբար կարող է սեփական հայեցողությամբ բավարարել փախուստի դիմած անձին հանձնելու պահանջը, թերևս, որոշակի պայմաններով, կամ կարող է մերժել հանձնման մասին պահանջը:<sup>72</sup>

49. Հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերը սովորաբար չեն նախատեսում որևէ պարտադիր կանոններ հանձնման գործընթացի այն փուլի վերաբերյալ, որում պետք է քննության առնվեն հետախուզման մեջ գտնվող փախուստական կամ ապաստան հայցող անձի կարգավիճակի հետ կապված հարցերը: Որոշ

---

պատշաճ կերպով ստորագրված է, արդյո՞ք այն պարունակում է հետախուզման մեջ գտնվող անձին ուղևորականացման համար անհրաժեշտ տեղեկությունները, ինչպես նաև նշված անձին վերագրվող հանցագործությունների նկարագրը, արդյո՞ք կից ներկայացվում են տվյալ պարագայում կիրառելի հանձնման մասին համաձայնագրի դրույթներով և (կամ) պահանջը ստացած պետության օրենսդրական նորմերով պահանջվող փաստաթղթերը:

<sup>72</sup> Այլ երկրներում ազգային օրենսդրությամբ նախատեսված է երկու փուլից կազմված գործընթաց, իսկ որոշ երկրներում վերջնական որոշումը կայացվում է դատարանների կողմից, մինչդեռ այլ երկրներում դատական մարմինները տալիս են կատարման համար ոչ պարտադիր եզրակացություններ: Հանձնման մասին որոշ համաձայնագրեր նախատեսում են պարզեցված ընթացակարգեր, որոնք կոչված են արագացնել գործընթացը և նվազեցնել դրա հետ կապված ծախսերը: 2004 թվականին Եվրոպական Միությունում ներմուծվել է փոխադրված պայմաններով ձեռք բերվող նյութաիրավական համաձայնագրերի համակարգը, որը փոխարինել է մասնակից պետությունների միջև եղած հանձնման ընթացակարգերը (լրացուցիչ տեղեկություններ տե՛ս այստեղ՝ [http://ec.europa.eu/justice\\_home/fsj/criminal/extradition/fsj\\_criminal\\_extradition\\_en.htm](http://ec.europa.eu/justice_home/fsj/criminal/extradition/fsj_criminal_extradition_en.htm)): Հանձնման նախնական իրավական նորմերում հանձնման պահանջի մերժման այս հիմքի վերաբերյալ ավելի մանրամասն քննարկում տե՛ս այստեղ՝ S. Kapferer, «*Extradition and Asylum*», վերը նշված ծանոթագրություն 2, կետեր՝ 155-169:

երկրներին ազգային օրենսդրության նորմերով՝ պահանջը ստացած պետությունն իրավասուն մարմիններին արգելվում է վարույթ ընդունել որպես փախստական ճանաչված անձին հանձնելու պահանջն այն դեպքերում, երբ այն ներկայացվում է վերջինիս ծագման երկրի կողմից:<sup>73</sup> Այլ դեպքերում, հանձնման մասին պահանջները կարող են մերժվել նախնական փուլում, եթե իրավասուն մարմիններին հայտնի է դարձել, որ հետախուզման մեջ գտնվող անձին շնորհված փախստականի կարգավիճակը, վերջին հաշվով, խոչընդոտ կդառնան րահանձնման համար: Այդուհանդերձ, առհասարակ կարելի է ասել, որ հանձնմանը հաջորդող հետապնդումներին ենթարկվելու կամ այլ ծանր վնաս կրելու ենթադրյալ վտանգը պետք է քննության առնվի հանձնման գործընթացի դատականու (կամ) վերջնական գործադիր փուլերում:

50. Նմանապես, փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերը չեն նախատեսում հանձնման մասին պահանջներին քննությանն անցնելու հատուկ ընթացակարգեր այն դեպքերում, երբ խոսքը գնում է փախստականի կամ ապաստան հայցող անձի մասին: Այնուամենայնիվ, հանձնման գործընթացի որոշ ընթացակարգային հետևանքներ բխում են պահանջը ստացած պետություն կողմից միջազգային պաշտպանության գծով ստանձնած այն պարտավորություններին, որոնք առնչվում են հետախուզման մեջ գտնվող անձին: Սույն ծանոթագրության հաջորդիվ ներկայացրած բաժիններում քննարկվում են այն երաշխիքները, որոնք պետք է տրվեն հանձնման գործընթացի շրջանակներում՝ հնարավորություն ընձեռելով պահանջը ստացած պետությանը կատարել նշված պարտավորություններն այն դեպքերում, երբ հետախուզման մեջ գտնվող անձը փախստական է կամ ապաստան հայցող: Բացի այդ, նշված բաժիններում ներկայացվում են հանձնման և ապաստանի շնորհման ընթացակարգերի միջև պատշաճ կապի առնչությունը՝ ՄԱԿ ՓԳՀ-ի գրադեցրած դիրքորոշումները:<sup>74</sup>

<sup>73</sup> Օրինակ՝ ասվածը վերաբերում է Արգենտինային («Քրեական հարցերով միջազգային համագործակցության մասին» 1997 թվականի թիվ 24.767 օրենքի 2-րդ բաժնի համաձայն), կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3db93d784>, Բրազիլիային («1951 թվականի կոնվենցիայի կենսագործման մեխանիզմներին մասին» 1997 թվականի թիվ 9.474 օրենքի 33-րդ հոդվածի համաձայն), կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3f4dfb134>, կամ Պարագվային («Փախստականներին մասին» 2002 թվականի թիվ 1938 օրենքի համաձայն), կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3d48f0984>:

<sup>74</sup> Լրացուցիչ մանրամասներ հանձնման գործընթացում անհատին վերապահված տեղի վերաբերյալ, ազգային օրենսդրության այնպիսի դրույթներին օրինակներ, որոնցով պահանջվում է հաշվի առնել միջազգային իրավական պարտավորություններն հանձնման մասին պահանջի քաղաքական կամ մերժման հարցը որոշելիս, ինչպես նաև դրան վերաբերող դատաիրավական պրակտիկայից վերցված գործեր տես S. Kapferer, *Extradition and Asylum*, վերը նշված ծանոթագրություն 2, կետեր՝ 170-210:

**Բ. Փախստակ ան ն երի հանձնման ընթացակարգեր**

51. Այն դեպքերում, երբ հանձնման պահանջը ներկայացվում է որևէ փախստակ ան ն երաբերյալ, հիմնական խնդիրը՝ միջազգային պաշտպանություն տեսանկյունից, կայանում է նրանում, որպեսզի ապահովել չվերադարձել ինչպես սկզբունքի լիարժեք պահպանումը: Ստորև՝ 52-ից 56 կետերում, ուսումնասիրվում են հանձնման գործընթացի շրջանակներում տրվող համապատասխան երաշխիքներ: Նաև կարևոր է, որ հանձնման ընթացակարգերի համատեքստում տեղեկատվություն փոխանակելիս պետությունները հաշվի առնեն փախստակ ան ն երի անձնական կյանքի գաղտնիություն անձեռնմխելիություն իրավաչափ շահերը, ինչպես նաև վերջիններիս հետ կապված անձանց պաշտպանություն ռիսկերը: Այս հարցը քննարկվում է ստորև՝ 57-ից 58 կետերում:

**1. Չվերադարձել ինչպես սկզբունքի ապահովման երաշխիքներ**

*Պահանջը ստացած պետության կողմից որպես փախստակ ան ն երի հանձնման պահանջ*

52. ՄԱԿ ՓԳՀ-ի կարծիքով՝ այն դեպքերում, երբ հանձնման մասին պահանջը ներկայացվում է այնպիսի անձի ծագման երկրի կողմից, ով պահանջը ստացած պետությունում 1951 թվականի կննվեցիայով սահմանված իմաստով ճանաչվել է որպես փախստակ ան ն երի համապատասխան կարգավիճակ շնորհելու մասին ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինների կողմից կայացված որոշումը պետք է պարտադիր լինի կատարման պետական այն մարմինների և հաստատությունների համար, որոնք զբաղվում են հանձնման տվյալ պահանջի քննությունը:<sup>75</sup> Նման դեպքերում պահանջը ստացած պետության ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինները ճանաչել են հետախուզման մեջ գտնվող անձի՝ պահանջը ներկայացրած պետությունում հետապնդումներին ենթարկվելու մտավախության հիմնավորված լինելը:<sup>76</sup> Ասվածը նաև նշանակում է, որ հանձնման արգելքի կիրառելիությունը 1951 թվականի կննվեցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետի կամ սովորաբար սակայն միջազգային իրավունքի

<sup>75</sup> Օրինակ՝ ասվածը վերաբերում է Շվեյցարիայում ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինների կողմից կայացված որոշումներին (Տե՛ս Շվեյցարիայի Ղաշնայի տրիբունալի որոշումներ՝ թիվ BGE 115 V 4, ընդունված 13 մարտի 1989թ., կետեր՝ 6-7 և թիվ 1A.267/2005/gjj, ընդունված 14 դեկտեմբերի 2005թ., կետ 3.3), որը կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b64bc> ինչպես նաև Ֆրանսիայի Փախստակ ան ն երի աջակցության հանձնաժողովի որոշումները (Տե՛ս Պետական խորհուրդ, նիստը կայացվել է 25 մարտի 1988թ., գործ «Bereciartua-Echarri», կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae6b7264>):

<sup>76</sup> Տե՛ս նաև ստորև՝ կետ 25:



դրույթներով արդեն համարվում է հաստատված: Այդուհանդերձ, կախված տվյալ գործի մասնավոր հանգամանքներից՝ կարող է անհրաժեշտությամբ նաև առաջանալ, որ հանձնման հարցերով զբաղվող իրավասու մարմինները քննության առնեն այն հարցը, թե արդյոք հետախուզման մեջ գտնվող անձը դասվում է 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով նախատեսված չվերադարձելիության սկզբունքից սահմանված բացառություններից որևէ մեկի շարքը: Եթե նշված հարցի վերաբերյալ համապատասխան որոշումը կայացվում է հանձնման գործընթացի շրջանակներում, ապա համապատասխան իրավասու մարմինները պետք է գնահատեն հետախուզման մեջ գտնվող անձի իրավիճակը 33-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված նյութաիրավական չափորոշիչների լույսի ներքո, իսկ հանձնման գործընթացը պետք է նախատեսի ընթացակարգային ապահովման միջոցներ և երաշխիքներ, որոնք պահանջվում են այս դրույթի կիրառման համար:<sup>77</sup>

53. Այնուամենայնիվ, որոշ երկրների ազգային օրենսդրության համաձայն՝ հանձնման հարցերով զբաղվող իրավասու մարմինները պարտավոր չեն հետևել ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինների կողմից տվյալ անձին փախստականի կարգավիճակ շնորհելու մասին որոշմանը: Այնուամենայնիվ, նման դեպքերում պահանջը ստացած պետությունը պարտավոր է ապահովել, որ փախստականին հանձնելու պահանջի վերաբերյալ կայացրած որոշումը համատեղելի լինի փախստականների և մարդու իրավունքների առնչվող միջազգային նորմերի ներքո չվերադարձելիության գծով ստանձնած պարտավորությունների հետ:<sup>78</sup> Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետախուզման մեջ գտնվող անձին փախստական ճանաչելու մասին որոշումն արդեն կայացվել է՝ հանձնման վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու համար պատասխանատու իրավասու մարմինը պետք է ըստ հարկի պահպանի 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետով և միջազգային սովորույթական իրավունքի դրույթներով հետապնդումների վտանգ ներկայացնող երկրին փախստականին

<sup>77</sup> 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառման ընթացակարգային պահանջների վերաբերյալ տե՛ս սվեդերն շվեդի 15:

<sup>78</sup> Օրինակ՝ Գերմանիայի «Ապաստանի շնորհման մասին ընթացակարգի մասին» օրենքի 4-րդ բաժինը միանշանակ նախատեսում է, որ ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինները որոշումն են կայացնում պարտադիր չեն կատարման հանձնման գործընթացի շրջանակներում: Այնուամենայնիվ, Դաշնային սահմանադրական դատարանը վճռել է, որ հանձնման մասին գործընթացի շրջանակում պարտավոր է հաշվի առնել պահանջը ներկայացրած պետությունում հետապնդումների ենթարկվելու հավանականությունը, ինչպես նաև այն իրողությունը, որ Գերմանիայի կամ մեկ այլ իրավասու մարմինների կողմից տվյալ անձին փախստական ճանաչելու հանգամանքը պետք է դիտարկվի որպես հետապնդումների ենթարկվելու վտանգի մասին վկայող ապացույց (որոշումն ընդունված է՝ 4 նոյեմբերի 1979թ., թիվ 1 BVR 654/79):

հանձնելու վրա դրված արգելքը: Նման արգելք դնելու համար հանձնման հարցերով զբաղվող իրավասու մարմինները պետք է քննության առնեն տվյալ դեպքին առնչվող բոլոր հանգամանքները՝ նպատակ ունենալով պարզել, թե արդյոք հետախուզման մեջ գտնվող անձին սպառնում է հետապնդումներին թարկվելու վտանգ համապատասխան երկրին նրան հանձնելուց հետո, լինի դա քրեական դատավարության առնչությամբ, թե դրանից անկախ, այդ թվում՝ դատավարությունից հետո և (կամ) նշանակված պատիժը կրելուց հետո: Նույնը վերաբերում է այն դեպքերին, երբ պահանջը ներկայացրած պետությունը տվյալ փախստականի ծագման երկիրը չէ:<sup>79</sup> Այն դեպքերում, երբ առանձին գործի հանգամանքներից ելնելով առաջանում է 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառելիություն հարց, հարկավոր է ապահովել հանձնման գործընթացի շրջանակներում այս դրույթներով նախատեսված նյութաիրավական չափորոշիչներին պահպանումը, ինչպես նաև ընթացակարգային արդարություն համապատասխան պահանջներին լիարժեք կատարումը:<sup>80</sup>

54. Անկախ այն բանից, թե արդյոք ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինների կողմից փախստականի կարգավիճակի վերաբերյալ կայացրած որոշումը պարտադիր է կատարման հանձնման հարցերով զբաղվող իրավասու մարմինների համար, թե ոչ, միևնույն է՝ պահանջը ստացած պետությունը նույնպես պարտավոր է ապահովել մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո չվերադարձելիություն գծով ստանձնած պարտավորությունների կատարումը:<sup>81</sup>

*Պահանջը ստացած պետության կողմից բացի մեկ այլ պետության կողմից ուր պես փախստական ճանաչված անձի հանձնման պահանջ*

55. Եթե անձը փախստական է ճանաչվել մեկ այլ երկրում, ապա հետախուզման մեջ գտնվող այդ նույն անձին այդ երկրում շնորհված փախստականի կարգավիճակը կարևոր տարր է դառնում և պետք է հաշվի առնվի պահանջը ստացած պետության հանձնման հարցերով զբաղվող իրավասու մարմինների կողմից այն հարցը քննելիս, թե արդյոք տվյալ անձի հանձնումը համահունչ է

<sup>79</sup> Նման դեպքերում հանձնման գործընթացի շրջանակներում խնդրո առարկա անձին պետք է տրվեն պատշաճ ընթացակարգային երաշխիքներ: Մասնավորապես, նման երաշխիքներին պահանջը ներկայացրած պետությունը հետախուզման մեջ գտնվող անձին հանձնելուց հետո հանձնման հարցերով զբաղվող իրավասու մարմիններին նրան սպառնացող վտանգներին մասին համապատասխան նյութեր ներկայացնելու իրավունքը, ինչպես նաև տվյալ անձի պարագայում հարկադիր վերադարձից պաշտպանություն ոչ կիրառելի լինելու մասին որոշման դեմ բողոքարկելու հնարավորությունը:

<sup>80</sup> Տե՛ս նաև վերը նշված կետ 15:

<sup>81</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 16-20:

չ վերադարձել ի նոյն ժամանակ՝ սկզբունքի ներքին ղեկավարության կողմից կայացված որոշումն առայն, որ տվյալ անձը փախստակ անհատ է համարվում 1951 թվականի կոնվենցիայի դրույթներին ենթարկվող, ունի արտասարածքային գործողություններ՝ առնվազն 1951 թվականի կոնվենցիայի այլ մասնակից պետություններին մասնավոր: Փախստակ անհատի կարգավիճակի շնորհիվ ու մասին մեկ մասնակից պետության կողմից կայացված որոշումը կարող է հարցականի տակ առնվել մեկ այլ մասնակից պետության կողմից միակ բացառիկ դեպքերում, երբ կան առերևույթ փաստեր առայն, որ տվյալ անձնակնհայտորեն չի բավարարում 1951 թվականի կոնվենցիայի ում գետեղված պահանջները: Օրինակ՝ այսպես կարող է պատահել այն դեպքերում, երբ հայտնի են դառնում փաստեր, որոնք վկայում են ի սկզբանե արված հայտարարություններին կեղծ լինելու մասին, ինչպես նաև ապացուցում են, որ խնդրո առարկա անձը դատվում է 1951 թվականի կոնվենցիայի նախատեսված բացառող դրույթներին գործում մեկի թվին:<sup>82</sup>

*ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից որպես փախստակ անձանց վաճառված անձի հանձնման պահանջ*

56. Նման ապեւ, այն դեպքերում, երբ հետախուզման մեջ գտնվող

<sup>82</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, Գործադիր կոմիտե, 1978 թվականի թիվ 12 (XXIX) եզրակացությունն «Փախստակ անհատի կարգավիճակի որոշման արտասարածքային գործողություններ վերաբերյալ», կետ «ց», կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae68c4447>: Տե՛ս նաև ՄԱԿ ՓԳՀ, «Ծննդագրություններ և փախստակ անհատի կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիան 1957 թվականի արձանագրություն դրույթներին ենթարկվող փախստակ անհատի կարգավիճակի որոշման արտասարածքային գործողություններ վերաբերյալ», թիվ EC/SCP/9, 24 օգոստոսի 1978թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae68cccc>: Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանը վճռել է, որ թեև 1951 թվականի կոնվենցիայի մեկ այլ մասնակից պետության կողմից անձին որպես փախստակ անձանց էլ ու որոշումը չունի պարտադիր իրավաբանական ուժ Գերմանիայի հանձնման հարցերով զբաղվող իրավասու մարմիններին համար, սակայն այդ երկրի ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմիններին հետևյալով էլ ու իրավիճակի առնչությամբ նրանց տեսանկյունը չի մանալ ու փաստի բերումով՝ հանձնման պահանջը քննող դատարանը չի կատարել բոլոր իրեն վերապահված հարավորություններն իրացնելու պարտականությունը և չի որոշել, թե արդյոք խնդրո առարկա անձին սպառնացել է հետապնդումներին ենթարկվելու վտանգ, հատկապես՝ նման եզրակացությունը հիմնավորող նշանակալի տարրերի առկայություն պարագայում: Դատարանի կարծիքով՝ 1951 թվականի կոնվենցիայի մեկ այլ մասնակից պետության կողմից այն իրողություն անձանց ումը, որ խնդրո առարկա անձն ունի պահանջը ներկայացրած պետությունում հետապնդումներին ենթարկվելու հիմնավոր մտավախություն, հենց այդպիսի տարր է, մանավանդ դեթե հաշվի առնենք, որ ապաստանի երկիրն արդեն մերժել է համապատասխան պետության ներկայացրած հանձնման պահանջը նույն անհատի հանցանքների համար, և նման մերժման հիմքում ընկած է եղել տվյալ անձին շնորհված փախստակ կարգավիճակը (որոշում թիվ 1 BvR 654/7914, կայացրած՝ 14 նոյեմբերի 1979թ.): Այս դեպքերում հարկ է նաև նշել, որ հետախուզման մեջ գտնվող անձին փախստակ անձանց անհատությանը կարող է նրա անունից կիրառել դիվանագիտական պաշտպանություն:

ան ձևը փախստակ ան է ճանաչվել ՄԱԿ ՓԳՀ-ի միջազգային մանդատի շրջանակներում,<sup>83</sup> պահանջը ստացած պետությունները պետք է հարգի այդ հանգամանքը: Անձին փախստակ ան ճանաչելու մասին ՄԱԿ ՓԳՀ-ի որոշումը նշանակում է, որ վերջինիս վերաբերյալ տրվել է այն եզրակացությունը, որ նա ունի միջազգային պաշտպանություն կարիք և իրավասու է օգտվել նման պաշտպանությունից 1951 թվականի կոնվենցիայի ներքո ամրագրված պարտադիր չափանիշներին համաձայն: Հաշվի առնելով ՄԱԿ ՓԳՀ-ի միջազգային պաշտպանության մանդատը և, մասնավորապես, գրասենյակի վերահսկիչ պատասխանատվությունը, որը նախատեսված է 1951 թվականի կոնվենցիայի 35-րդ հոդվածով և 1967 թվականի արձանագրության 1-ին հոդվածով, ինչպես նաև կազմակերպության 1950 թվականի կանոնադրության 8-րդ հոդվածի «ա» ենթակետով՝ նման որոշումները պետք է ըստ հարկի կշռադատվեն հանձնմանը նթացակարգերի շրջանակներում:<sup>84</sup>

## 2. Գաղտնիությունն պահպանում

57. ՄԱԿ ՓԳՀ-ն այն կարծիքին է, որ պետությունները պետք է, որպես կանոն, զերծ մնան որևէ անձի փախստակ կարգավիճակի առնչությամբ մեկ այլ պետության իրավասու մարմիններին որևէ տեղեկատվություն հայտնելուց, եթե խնդրո առարկա անձն իր միանշանակ համաձայնությունը չի տվել նման տեղեկության տրամադրման համար: Ասվածը հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ այդ մյուս երկիրը փախստակ ծագման երկիրն է, ընդ որում այս մոտեցումը կիրառվում է փախստակ անձնական տվյալների, ապաստան ստանալու մասին նրա դիմումից անկացած տարրերի, այդ թվում՝ վերջինիս ներկայացման բուն փաստի նկատմամբ: Առանց օրինակ անհիմքերի նման տեղեկատվության քացահայտումը կամ պահանջվածից ավել տեղեկություններին հաղորդումը փախստակ անձնական կյանքի

<sup>83</sup> Միջազգային պաշտպանության ապահովման իր մանդատի շրջանակներում ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է իրականացնել փախստակ կարգավիճակի որոշման գործընթացն այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է պաշտպանության նկատառումներով: ՄԱԿ ՓԳՀ-ի լիազորությունները բխում են 1950 թվականի իր կանոնադրության դրույթներից, որոնք բերված են վերը նշված 11-րդ ծանոթագրությունում և մշակվելու կատարելագործվել են Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական և սոցիալական խորհրդի հետագա բանաձևերում:

<sup>84</sup> Ինչպես նշված է այստեղ՝ G.S. Goodwin-Gill and J. McAdam, «*The Refugee in International Law*», 3-րդ խմբագրություն, հրատարակչություն՝ Oxford University Press (2007թ.), էջ 553, «[...] փախստակ իր բուն սահմանումը [...] ներառում է սեփական հայեցողությունամբ որոշումներ կայացնելու բնագավառներ, այնպես որ ՄԱԿ ՓԳՀ-ի դիրքորոշումն անհանդերձ, առարկություններով հանդես եկող պետությունները պետք է բարեխղճորեն հաշվի առնեն ՄԱԿ ՓԳՀ-ի եզրակացությունները, ընդ որում կազմակերպության կայացրած որոշումներին մերժման համար պահանջվում է ներկայացնել առարկայական հիմնավորում»: Տես նաև V. Türk, «UNHCR's supervisory responsibility», այստեղ՝ 14.1 *Revue québécoise de droit international* (2001թ.), էջեր՝ 135–158:

անձեռնմխելի իրություն իրավունքի խախտում է:<sup>85</sup> Նման քայլը կարող է խաթարել փախստականի կամ նրա հետ կապված անձանց անվտանգությունը:<sup>86</sup>

58. Պետությունները պետք է ապահովեն փախստականի կարգավիճակը և տանալու մասին դիմումին առնչվող տեղեկատվություն զաղտնիությունը նաև իրենց շփումներում այն ընթացակարգերի համատեքստում, որոնք կարող են բերել փախստականի հանձնմանը: Նման դեպքերում պահանջը ներկայացրած պետության՝ հանցավոր արարքներին համար պատասխանատու անձանց հետապնդելու օրինակն շահերից ելնելով՝ որոշ անձանկան բնույթի տվյալներին բացահայտումը կարող է համարվել արդարացի: Այնուամենայնիվ, պահանջը ստացած պետությունը պետք է հաշվի առնի պաշտպանություն հետ կապված այն հնարավոր վտանգները, որոնք կարող են ի հայտ գալ հետախուզման մեջ գտնվող անձի վերաբերյալ պահանջը ներկայացրած պետության իրավասու մարմիններին տեղեկատվություն տրամադրման արդյունքում, հատկապես այն դեպքերում, երբ խոսքը գնում է փախստականի ծագման երկրի մասին:<sup>87</sup> Փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող

<sup>85</sup> Մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերը երաշխավորում են յուրաքանչյուրի անձանկան կյանքի անձեռնմխելիություն իրավունքը և պաշտպանում են մարդկանց կամայական կամ ապօրինի միջամտությունից (տես օրինակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդված, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 17-րդ հոդվածի 1-ին կետ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդված, Ամերիկյան մարդու իրավունքների կոնվենցիայի 11-րդ հոդված):

<sup>86</sup> Հարկավոր է ձեռնարկվել արդյունավետ միջոցառումներ, որպեսզի անձի մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկությունները չընկնեն երրորդ անձանց ձեռքը և չօգտագործվեն մարդու իրավունքներին առնչվող իրավական նորմերի հետ անհամատեղելի նպատակներով: Տես Մարդու իրավունքների կոմիտեի, Ընդհանուր մեկնաբանություններով 16 «Հոդված 17 (Անձնական կյանքի անձեռնմխելիություն իրավունք)», «Անձնական կյանքի անձեռնմխելիություն, ընտանիքի, տան և հաղորդագրություն զաղտնիություն, ինչպես նաև պատվի և հեղինակություն պաշտպանություն իրավունք», ՄԱԿ փաստաթուղթ թիվ՝ HRI/GEN/1/Rev.1, 8 ապրիլի 1988թ., կետ 10, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/txis/vtx/refworld/rwmain?docid=453883f922>: Տես նաև ՄԱԿ ՓԳՀ, «Խորհրդատվական եզրակացությունն սպաստանին վերաբերող հարցերի զաղտնիություն պահպանման կանոններին վերաբերյալ», 31 մարտի 2005թ., կարելի է գտնել է այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/txis/vtx/refworld/rwmain?docid=42b9190e4> (այսուհետ՝ «ՄԱԿ ՓԳՀ, Խորհրդատվական եզրակացություն զաղտնիություն պահպանման կանոններին վերաբերյալ»): Տես նաև ստորև կետեր՝ 69, 93 և 96:

<sup>87</sup> ՄԱԿ ՓԳՀ-ն ճանաչում է այն հանգամանքը, որ տեղեկատվություն փոխանակումը պետություններին միջև խիստ կարևոր է անարելյություն դեմ պայքարում, իսկ բացառիկ հանգամանքներում շփումները ծագման երկրի իրավասու մարմիններին հետ կարող են արդարացի համարվել, երբ կա կասկած նախկին կամ թերևս ընթացիկ անարելյական գործողություններին վերաբերյալ, կամ այն դեպքերում, երբ խոսքը գնում է ազգային անվտանգության մասին: Այդուհանդերձ, բոլոր նման դեպքերում սպաստան և տանալու մասին դիմումի ներկայացման փաստը պետք է պահվի զաղտնի: Տես նաև ՄԱԿ ՓԳՀ, «Անդրադարձ

միջազգային իրավական նորմերի ներքո ստանձնած պաշտպանության գծով պարտավորությունների, ինչպես նաև տվյալների պաշտպանության ընդհանուր սկզբունքների համաձայն՝ պահանջը ստացած պետությունը կարող է պարտավորված լինել զերծ մնալ պահանջը ներկայացրած պետությանն անձնական բնույթի որևէ տվյալներ և (կամ) տեղեկությունների հաղորդելուց, կամ էլ, կախված հանգամանքներից՝ սահմանափակել տրամադրվող տեղեկությունների ծավալը:<sup>88</sup> Գաղտնիության պահպանման պահանջը պետք է կատարվի հանձնման գործընթացի բոլոր փուլերում, այդ թվում՝ փախստականին առնչվող գործի շրջանակներում նրան հանձնելու պահանջը մերժելու հիմքերը համապատասխան պետությանը հայտնելիս: ՄԱԿ ՓԳՀ-ի կարծիքով՝ հանձնման ընթացակարգերի համատեքստում ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինների ներգրավումը փախստականի վերաբերյալ տեղեկությունների բացահայտման վերաբերյալ համապատասխան որոշման կայացման գործընթացում խիստ կարևոր է հետախուզման մեջ գտնվող անձի՝ միջազգային պաշտպանության մասով ունեցած կարիքները հոգալու համար:<sup>89</sup>

#### Գ. Ապաստան հայցող անձանց հանձնման ընթացակարգեր

59. Այն դեպքերում, երբ հանձնման պահանջը վերաբերում է ապաստան հայցող անձին, պահանջը ստացած պետությունը՝

---

*անվտանգություն խնդիրների ատանց փախստականների պաշտպանության խաթարման՝ ՄԱԿ ՓԳՀ-ի տեսանկյունից», 2001թ. նոյեմբեր, կետ 11, կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3c0b880e0>: Տե՛ս նաև, ՄԱԿ ՓԳՀ, Ուղեցույց միջազգային պաշտպանության վերաբերյալ թիվ 5 «Բացառող դրույթների կիրառում՝ փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետ», թիվ HCR/GIP/03/05, 4 սեպտեմբերի 2003թ., հավելված «Ե», (այսուհետ՝ «Ուղեցույց բացառող դրույթների վերաբերյալ»), կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3f5857684>:*

<sup>88</sup> Տվյալների պաշտպանության ընդհանուր սկզբունքների համաձայն՝ տեղեկությունների ցանկացած հաղորդում պետք է սահմանափակվի այնքանով, որքանով դա անհրաժեշտ է այն օրինակն սպասակի իրականացման համար, որի առնչությամբ այդ տեղեկությունները պահանջվել են: Հարկ է նշել, որ պահանջը ստացած պետության տարբեր իրավասու մարմինների միջև հաղորդակցությունը նույնպես ենթակա է տվյալների պաշտպանության կիրառելի այն սկզբունքներին, որոնցով սահմանափակումներ են դրվում տարածման ենթակատվյալների չափի բնույթի վրա:

<sup>89</sup> Այն ընթացակարգերը, որոնք պատասխանատվություն են նախատեսում տվյալների բացահայտման վերաբերյալ որոշում կայացնող ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինի համար համարվում են լավագույն գործելակերպի դրսևորում: Այսպես, օրինակ, Շվեյցարիայում դաշնային ոստիկանության ծառայությունը պարտավոր է փախստականին կամ ապաստան հայցող անձին վերաբերող տեղեկատվության տրամադրման պահանջը թողնել Ապաստանի հարցերով զբաղվող դաշնային գրասենյակի հայեցողությանը, այդ թվում՝ հանձնման ընթացակարգերի նորանց հետ կապված հարցերի համատեքստում (օրինակ՝ ձերբակալության հրամանագրերի տարածում Ինտերպոլի կողմից հետախուզման մեջ գտնվելու մասին (կարմիր) ծանուցման միջոցով):

փախստակ ան ն եր ի ն և մ ար դ ու ի ր ավ ու ն ք ն եր ի ն առ ն չ վ ող մ ի ջ ազ գ այ ի ն ի ր ավ ակ ան ն ու մ եր ի հ ամ աձ այ ն , պար տավ ուր է ոչ մ ի այ ն ապահ ո վ ել պաշ տպան ու թ յ ու ն ը հ ար կ ադ ի ր վ եր ադ ար ձ ի ց , այ լ և պե տք է ապահ ո վ ի , ուր ի ր ի ր ավ սա ու մ ար մ ի ն ն եր ի ն ն եր կ այ աց ր ած փախս տակ ան ի կ ար գ ավ ի ճ ակ ս տան ալ ու մ սա ի ն դ ի մ ու մ ո վ կ այ աց վ ի այ ն պի ս ի ու ո ղ ու մ , ուր ը հ ամ ահ ու ն չ լ ի ն ի 1951 թ վ ակ ան ի կ ո ն վ ե ն ց ի այ ո վ ամ ր ազ ր վ ած չ ափ ան ի շ ն եր ի ն և չ ափ ու ո ղ ի չ ն եր ի ն : Հ ան ձ ն մ ան գ ու ծ ը ն թ աց ի հ ամ առ ե ք ս տ ու մ ի հ այ տ ե կ ող տե ող ե կ ու թ յ ու ն ն եր ը կ ար ող ե ն ազ ող ել ապաս տան ս տան ալ ու մ սա ի ն դ ի մ ու մ ի վ եր աբ եր յ ալ կ այ աց վ ել ի ք ու ո ղ մ ան վ ր ա , մ ի ն չ դ ե ո փախս տակ ան ի կ ար գ ավ ի ճ ակ ի ու ո ղ մ ան ը ն թ աց ակ ար գ եր ի ար ոյ ու ն ք ը կ ար ն ուր ք ադ ադ ի չ է , ուր ը պե տք է հ աշ վ ի առ ն վ ի պահ ան ջ ը ս տաց ած պե տ ու թ յ ան կ ող մ ի ց այ ն հ ար ց ը պար գ ել ի ս , թ ե ար ոյ ո ք հ ե տ ախ ու զ մ ան մ ե ջ գ տ ն վ ող ան ձ ը կ ար ող է հ ան ձ ն վ ել օ ր ի ն ակ ան հ ի մ ու ն ք ն եր ո վ , թ ե ո չ :

60. Այ ն ի ր ող ու թ յ ու ն ը , ուր ն մ ան դ ե պք եր ու մ հ ան ձ ն մ ան և ապաս տան ի շ ն ուր հ մ ան հ ար ց եր ն ու ն ե ն ը ն դ հ ան ու ր հ ատ մ ան կ ե տե ր , կ ար ող է ու ն ե ն ալ ը ն թ աց ակ ար գ այ ի ն հ ե տ ն ան ք ն եր : Ս տ ու ր ն ք եր վ ած ե ն թ աբ աժ ի ն ն եր ու մ ք ն ն ար կ վ ու մ է հ ան ձ ն մ ան և ապաս տան ի շ ն ուր հ մ ան ը ն թ աց ակ ար գ եր ի մ ի ջ և ե ո ած պատ շ աճ կ ապը , այ դ թ վ ու մ յ ու ր աք ան չ յ ու ր ը ն թ աց ակ ար գ եր ի շ ր ջ ան ակ ն եր ու մ կ այ աց վ ող ու ո ղ ու մ ն եր ի հ եր թ ակ ան ու թ յ ու ն ը , ի ն չ պե ս ն ան հ ան ձ ն մ ան ը ն թ աց ակ ար գ եր ի շ ր ջ ան ակ ն եր ու մ ապաս տան հ այ ց ող ան ձ ան ց տր վ ել ի ք եր աշ խ ի ք ն եր ը : Այ ս տե ող ան դ ր ադ ար ձ է կ ստար վ ու մ ն ան ն շ վ ած գ ու ծ ը ն թ աց ի շ ր ջ ան ակ ն եր ու մ Մ Ա Կ Փ Գ Հ -ի ն վ եր ապահ վ ած դ եր ակ ա տար մ ան ը : Ապաս տան ս տան ալ ու մ սա ի ն դ ի մ ու մ ի վ եր աբ եր յ ալ հ ամ ապատաս խ ան ու ո ղ մ ան կ այ աց մ ան գ ու ծ ը ն թ աց ի շ ր ջ ան ակ ն եր ու մ հ ան ձ ն մ ան հ ե տ կ ապ վ ած ը ն թ աց ակ ար գ այ ի ն հ ար ց եր ը ք ն ն ար կ վ ու մ ե ն ս տ ու ր ն 4-ր ող ք աժ ն ի «Բ» կ ե տ ի 2-ր ող ե ն թ ակ ե տ ու մ :

**1. Հ ան ձ ն մ ան և ապաս տան ի շ ն ուր հ մ ան առ ան ձ ի ն ը ն թ աց ակ ար գ եր**

61. Հ ան ձ ն մ ան և փախս տակ ան ի կ ար գ ավ ի ճ ակ ի ու ո ղ մ ան ը ն թ աց ակ ար գ եր ը տար ք եր վ ու մ ե ն մ ի մ յ ան ց ի ց և հ ե տ ապ ն դ ու մ ե ն տար ք եր ն պատակ ն եր , ի ն չ պե ս ն ան կ ար գ ավ ու ո ղ ու մ ե ն տար ք եր ի ր ավ աբ ան ակ ան չ ափ ու ո ղ ի չ ն եր ո վ : Այ ս եր կ ու ք ն ազ ավ առ ն եր ի ց յ ու ր աք ան չ յ ու ր ու մ ու ո ղ ու մ կ այ աց ն ող ան ձ ի ն ք և մ ար մ ի ն ն եր ը պե տք է ու ն ե ն ան փ ու ղ ի , գ ի տե լ ի ք ն եր ի և հ մ տ ու թ յ ու ն ն եր ի ու ո ղ ակ ի շ ր ջ ան ակ : Այ ն դ ե պք եր ու մ , եր ք հ ե տ ախ ու զ մ ան մ ե ջ գ տ ն վ ող ան ձ ի ն հ ե տ ապ ն դ ու մ ն եր ի ե ն թ աբ կ ել ու հ ի մ ն ալ ու ու մ տավ ախ ու թ յ ան առ կ այ ու թ յ ան կ ամ ք աց ակ այ ու թ յ ան ու ո ղ մ ան հ ար ց ը ն եր առ վ ած է հ ան ձ ն մ ան ը ն թ աց ակ ար գ եր ու մ , դ ա կ ար ող է զ գ ալ ի ուր ե ն ն վ ազ ե ց ն ել ի ր դ ի մ ու մ ի ու ս ու մ ն սա ի ր մ ան հ ամ ար ապաս տան հ այ ց ող ան ձ ի ն վ եր ապահ վ ած հ ն ար ալ ու ո ղ ու թ յ ու ն ն եր ը : Ն շ վ ած հ ան գ ամ ան ք ը կ ար ող է ն ան հ ան գ ե ց ն ել փախս տակ ան ի

կարգավիճակ շնորհելու հարցում բացասական որոշման պարագայում առկա իրավական պաշտպանություն միջոցներին և անմասնաճակատությանը: Ուստի, ՄԱԿ ՓԳՀ-ի դիրքորոշումն այն է, որ ապաստան ստանալու մասին դիմումի և հանձնման պահանջի վերաբերյալ որոշումները պետք է համապատասխանաբար կայացվեն առանձին ընթացակարգերի շրջանակներում:

62. Ասվածը չի նշանակում, որ այս երկու գործընթացները պետք իրականացվեն իրարից մեկուսացված եղանակով: Ինչպես երևում է սույն Ուղղորդման ծանոթագրության ողջ բովանդակությունից, հետախուզման մեջ գտնվող անձի՝ փախստականի կարգավիճակ ստանալու իրավունքի հարցը կարևոր հետևանքներ է ենթադրում հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ միջազգային իրավունքի ներքո պահանջը ստացած պետության կողմից ստանձնած պարտավորություններին տարածման տիրույթի և, հետևաբար, հանձնման պահանջի առնչությամբ որոշում կայացնելու առումով: Միաժամանակ, հանձնման մասին պահանջի հետ կապված տեղեկությունները կարող են անդրադարձնալ ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ կայացվելիք որոշման վրա: Ինչպես ապաստանի շնորհման, այնպես էլ հանձնման ընթացակարգերով պատշաճ որոշում կայացնելու համար պատասխանատու իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն գործին վերաբերող բոլոր տարրերը:

**2. Պահանջը ստացած պետության ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմիններին կողմից ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ կայացվող որոշման գործընթաց**

63. Միջազգային պաշտպանության մասով տվյալ անձի ունեցած կարիքներին վերաբերյալ կայացվող որոշման համապատասխանությունը 1951 թվականի կոնվենցիայում գետեղված չափորոշիչներին ապահովելու նկատառումով՝ ապաստան ստանալու մասին դիմումը պետք է քննության առնվի պահանջը ստացած պետության այն իրավասու մարմինի կողմից, որը պատասխանատու է փախստականի կարգավիճակ ստանալով ներկայացրած դիմումներին վերաբերյալ համապատասխան որոշումներին կայացման համար:<sup>90</sup> Ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն գործին վերաբերող բոլոր փաստերը, այդ թվում՝ հանձնման պահանջի ներկայացման բուն փաստը և դրա հետ կապված ցանկացած տեղեկությունները,

<sup>90</sup> Այս դեպքերում պետություններին ակնկալվող լավագույն գործելակերպը ենթադրում է միայն պիսի միասնական և կենտրոնական իրավասու մարմինների կողմից, որը կզբաղվի ապաստանի հարցերով, ինչպես նաև՝ փախստականի կարգավիճակ կամ այլ օժանդակ պաշտպանություն ստանալու համար ներկայացրած բոլոր դիմումներին գնահատմամբ: Տե՛ս, ՄԱԿ ՓԳՀ, «Ապաստանի շնորհման գործընթացներ», վերը նշված պարբերություն 13, կետեր՝ 48, 50(e) և (i):



որոնք կարող են անդրադարձնել ապաստան ստանալու մասին նրա կողմից ներկայացված դիմումի վրա:<sup>91</sup>

**3. Հանձնման և ապաստանի վերաբերյալ կայացվող որոշումների հերթականությունը և սահմանում**

*Ապաստան հայցող անձի հանձնման պահանջ նրա ծագման երկրից*

64. Եթե հանձնման մասին պահանջը ներկայացվել է ապաստան հայցող անձի ծագման երկրի իրավասու մարմինների կողմից, ապա նրան փախստակ անի կարգավիճակ շնորհելու հարցը պետք է կարգավորվի, որպեսզի պահանջը ստացած պետությունն ի վիճակի լինի որոշել, թե արդյոք հնարավոր է օրինակյան հիմունքներով հանձնել հետախուզման մեջ գտնվող անձին: Սյս իրողությունը բխում է պահանջը ստացած պետության այն պարտավորությունից, ըստ որի նա կոչված է ապահովել փախստակ անների և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո ամրագրված չվերադարձել իրություն սկզբունքի իրացումը: Մի կողմից, որպես ապաստան հայցող՝ հետախուզման մեջ գտնվող անձն օգտվում է ծագման երկիր հարկադիր վերադարձից պաշտպանված լինելու իրավունքից ապաստան ստանալու մասին նրա դիմումի վարույթի մեջ գտնվելու, ներառյալ կայացրած որոշման բողոքարկման ժամանակահատվածը: Սյուս կողմից, միջազգային իրավունքի ներքո պահանջը ստացած պետության կողմից չվերադարձել իրություն գծով ստանձնած պարտավորությունների տարածման տիրույթը տարբերվում է՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք հետախուզման մեջ գտնվող անձը փախստակ ան է, թե ոչ: Հետևաբար, փախստակ անի կարգավիճակի հարցը պետք է պարզաբանվի նախքան հնարավոր կլինի որոշել, թե արդյոք բավարարվել են հանձնման համար անհրաժեշտ իրավաբանական պահանջները:

65. Հետևաբար, այն դեպքերում, որոնք կարող են ավարտվել ապաստան հայցող անձին նրա ծագման երկրին հանձնելու գործընթացով, հարկավոր է իրականացնել ապաստանի շնորհման ընթացակարգեր, ընդ որում ապաստան ստանալու համար ներկայացրած դիմումի վերաբերյալ վերջնական որոշումը պետք է կայացվի հանձնման պահանջի վերաբերյալ կայացվելիք որոշումից առաջ:

66. ՄԱԿ ՓԳՀ-ի կարծիքով՝ առհասարակ ողջամիտ քայլ կլինի եր հանձնման և ապաստանի շնորհման ընթացակարգերն իրականացնել գուցահեռաբար: Նման քայլն օգտակար կլինի արդյունավետության տեսակետից և այն հանգամանքի բերումով, որ հանձնման գործընթացի արդյունքում կարող են ի հայտ գալ այնպիսի տեղեկություններ, որոնք կանդրադարձնեն հետախուզման

<sup>91</sup> Տե՛ս նաև ստորև՝ կետ 62 և կետեր 73-85:

մեջ գտնվող անձի՝ փախստակ անի կարգավիճակը և տանալու իրավունքի վրան, հետևաբար, պետք է հաշվի առնվեն ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինների կողմից:<sup>92</sup> Այդուհանդերձ, կարող է կարիք առաջանալ ժամանակավորապես կասեցնել հանձնման մասին պահանջի վերաբերյալ կայացրած որոշումը մինչև ապաստանի շնորհման առնչությամբ կայացրած որոշման վերջնական օրինակն ու ժիմեջ մտնելը:<sup>93</sup>

*Ապաստան հայցող անձի հանձնման պահանջ նրա ծագման երկիրը չհանդիսացող նրա էրկրից*

67. Եթե ապաստան հայցող անձի հանձնման մասին պահանջը ներկայացվում է նրա ծագման երկիրը չհանդիսացող մեկ այլ երկրի կողմից, ապա որոշակի հանգամանքներում հետախուզման մեջ գտնվող անձը կարող է հանձնվել նախքան պահանջը ստացած պետությունում ապաստան ստանալու մասին նրա դիմումի վերաբերյալ վերջնական որոշում կայացումը: Փախստակ անների և մարդու իրավունքների առնչվող միջազգային իրավական նորմերին նման քայլի համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ պահանջը ստացած պետությունը պարտավոր է հաստատել, որ

- (i) ապաստան հայցող անձին պահանջը ներկայացրած պետությանն հանձնելու դեպքում նրան չի սպառնա հետապնդումները և խոշտանգումները ենթարկվելու կամ այլ անդառնալի վնաս կրելու վտանգը և
- (ii) իր առաջնային պատասխանատվության համաձայն՝ պետք է համոզվի, որ ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ կայացվող որոշումը համապատասխանում է 1951 թվականի կոնվենցիայի դրույթներին, ինչպես նաև արդարություն և արդյունավետության միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին՝ ապահովելով, որ ապաստան հայցող անձը հնարավորություն ունենա օգտվել ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ կայացվող որոշումն այնպիսի ընթացակարգերից, որոնք բավարարում են նշված չափորոշիչները:

<sup>92</sup> Փախստակ անի կարգավիճակը և տանալու իրավունքի հետ կապված նյութաիրավական այն հարցերի քննարկումը, որոնք ծագում են հանձնման համատեքստում, տե՛ս ստորև, կետեր 71-85:

<sup>93</sup> Օրինակ՝ այս իրողությունն արտացոլված է Շվեյցարիայի դաշնային տրիբունալի մի շարք որոշումներում, որոնցում հայտարարվել է, որ այն դեպքերում, երբ ապաստան ստանալու մասին դիմումը դեռևս վարույթում է, հետախուզման մեջ գտնվող անձի հանձնման մասին պահանջը կարող է բավարարվել միայն այն պայմանով, որ ապաստան ստանալու մասին նրա կողմից ներկայացված դիմումը մերժվի ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինների կողմից (տե՛ս որոշումներ թիվ BGE 122 II 373, ընդունված՝ 11 սեպտեմբերի 1996թ., էջ՝ 380-382, և թիվ 1A.267/2005/gij, ընդունված՝ 14 դեկտեմբերի 2005թ., կետ՝ 3.2):

68. Եթե այս երկու պայմանները կատարվում են, ապա պահանջը ստացած պետությունում ապաստանի շնորհման արդեն մեկնարկած ընթացակարգերը կարող են ժամանակավորապես կասեցվել:<sup>94</sup> Նման դեպքերում ապաստան ստանալու մասին դիմումի նուսումնասիրությունը պետք է վերսկսվի և հասցվի իր վերջնական հանգուցալուծմանը դատախազության որոշումից հետո, լինի դադատապարտման, պատժի նշանակման, թե արդարացման միջոցով: Այս քայլը կարող է իրականացվել պահանջը ստացած պետությունում, որտեղ ապաստան ստանալու մասին դիմումն ի սկզբանե ընդունվել է վարույթ, այդ պետության տարածք կրկին մուտք գործելու մասին համաձայնությունն ձեռք բերելու միջոցով կամ ապաստան ստանալու մասին դիմումի քննության պատասխանատվությունն հանձնումը պահանջող պետության վրա դնելու միջոցով այն պայմանով, որ այդ պետությունում գործեն նմանատիպ ընթացակարգային չափանիշներ:<sup>95</sup>

**4. Գաղտնիություն պահպանումն ապաստան հայցող անձի հանձնման ընթացակարգերի շրջանակներում**

69. Ապաստան հայցող անձին հանձնելու պահանջի հետ առնչությունն ունեցող պատասխանատու իրավասու մարմինները պարտավոր են ապահովել գաղտնիության պատշաճ պահպանումը: Որպես կանոն, հանձնման մասին պահանջ ներկայացրած պետությանը չի կարելի տրամադրել որևէ տեղեկություն ապաստան ստանալու մասին դիմումի կամ դրաներկայացման բուն փաստի վերաբերյալ, անկախ այն բանից, թե հանձնումը պահանջվում է հետախուզման մեջ գտնվող անձի ծագման, թե որևէ երրորդ երկրի կողմից: Փախուսականների վերաբերյալ 57-ից 58 կետերում բերված նկատառումները հավասարապես կիրառելի են ապաստան հայցող անձանց պարագայում:<sup>96</sup>

<sup>94</sup> Տե՛ս նաև վերը նշված կետ 37 և ստորև բերված կետեր՝ 88-89:  
<sup>95</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Հանձնարարական ներքին վրոն պակն ձերբակալությունն հրամանագրի և անդամ պետությունն ներքին միջն հանձնման ընթացակարգերի մասին Խորհրդի կայացրած շրջանակային որոշման վերաբերյալ Եվրոպական ձևաչափի առաջարկի մասին», COM(2001)522, վերջնական 2001/0215 (CNS): Տե՛ս նաև ՄԱԿ ՓԳՀ, «Ժամանակավոր մեկնարանությունն ներքին անդամ պետությունն ներքում փախուսականների կարգավիճակի շնորհման կամ կասեցման նվազագույն չափանիշներին սահմանման ընթացակարգերի վերաբերյալ Եվրոպայի Խորհրդի կարգադրությունն շրջանակներում» (Խորհրդի փաստաթուղթ՝ 14203/04, «Asile 64», 9 նոյեմբերի 2004թ.), 10 փետրվարի 2005թ. (այսուհետև՝ ՄԱԿ ՓԳՀ, «Ժամանակավոր մեկնարանությունն ներքին»), կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=42492b302>, մեկնարանությունն 6-րդ հոդվածի վերաբերյալ:  
<sup>96</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Հանձնարարական ներքին վրոն պակն ձերբակալությունն հրամանագրի և անդամ պետությունն ներքին միջն հանձնման ընթացակարգերի մասին Խորհրդի կայացրած շրջանակային որոշման վերաբերյալ Եվրոպական ձևաչափի առաջարկի մասին», COM(2001)522 վերջնական 2001/0215 (CNS): Տե՛ս նաև ՄԱԿ ՓԳՀ, «Ժամանակավոր մեկնարանությունն ներքին անդամ

**Դ. ՄԱԿ ՓԳՀ-ի դերակատարումն հանձնման ընթացակարգերում**

70. Այն դեպքերում, երբ հանձնման պահանջի առարկա դարձած անձը փախստակն է կամ ապաստան հայցող, ՄԱԿ ՓԳՀ-ն, ինչպես իր մանդատի հիման վրա, այնպես էլ ելնելով պաշտպանության ապահովման շահերից, պետք է հնարավորություն ունենա դիմել անհրաժեշտ քայլերի՝ ապահովելով խնդրո առարկա անձի պաշտպանությունը: Կախված հանգամանքներից՝ նման պաշտպանությունը կարող է ընդգրկել պահանջը ստացած պետությունների ավարտում մարմինների հասցեագրված միջամտություններ՝ դիմանալիս անվարդակով կամ հանձնման ընթացակարգերի համատեքստում, ուղղակիորեն կամ գրասենյակի գործողություն շրջանակներում ընդգրկված անձի անունից հանդես եկող իրավաբանների կամ այլ անձանց միջոցով: ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է համապատասխան միջոցառումներ ձեռնարկել, նույնիսկ եթե հանձնման ընթացակարգերը պահանջը ստացած պետությունում կարգավորող օրենսդրական նորմերով գրասենյակին վերապահված չեն և պաշտոնական դերակատարում: Հանձնման պահանջի առարկա դարձած և ՄԱԿ ՓԳՀ-ի լիազորությունների շրջանակներում ընդգրկված անձանց անունից գործելու մանդատը բխում է կազմակերպության 1950 թվականի կանոնադրությունից, ինչպես նաև 1951 թվականի կոնվենցիայի 35-րդ հոդվածով, 1967 թվականի արձանագրության 1-ին հոդվածով և ՄԱԿ ՓԳՀ-ի կանոնադրության 8-րդ կետի «ա» ենթակետով ամրագրված վերահսկիչ պատասխանատվությունից: Ելնելով նշված դրույթներից՝ պետությունները նույնպես պարտավոր են ՄԱԿ ՓԳՀ-ին տեղեկատվություն տրամադրել նման դեպքերի առնչությամբ:<sup>97</sup> Ավելին, այն փախստակները կամ ապաստան հայցող անձինք, ովքեր դարձել են հանձնման պահանջի առարկա, պետք է հնարավորություն ստանան կապվել ՄԱԿ ՓԳՀ-ի և (կամ) իրավախորհրդատվություն տրամադրող և համապատասխան որակավորում ունեցող հասարակական կազմակերպությունների և իրավաբանների հետ:<sup>98</sup>

**IV. ՓԱՅՍԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏ ՎԵՂՈՒ**

*պետությունն ներքևում փախստակներին կարգավիճակի շնորհման կամ կասեցման նվազագույն չափանիշներին սահմանման ընթացակարգերի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի կարգադրության շրջանակներում» (Խորհրդի փաստաթուղթ՝ 14203/04, «Asile 64», 9 նոյեմբերի 2004թ.), 10 փետրվարի 2005թ. (այսուհետև՝ ՄԱԿ ՓԳՀ, «Ժամանակավոր մեկնաբանություններ»), կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/txis/vtx/refworld/rwmain?docid=42492b302>,*

մեկնաբանությունն 6-րդ հոդվածի վերաբերյալ :  
<sup>97</sup> Տե՛ս V. Türk, վերը նշված ծանոթագրությունն 84, կետեր՝ 135-158:  
<sup>98</sup> Տե՛ս, ՄԱԿ ՓԳՀ, «Ապաստանի շնորհման գործընթացներ», վերը նշված ծանոթագրությունն 13, կետ 51(ց):

**ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՀԱՆՁՆՈՒՄ**

**Ա. Ընդհանուր նկատառումներ**

71. Ինչպես արդեն նշվել է, ապաստան հայցող անձի վերաբերյալ հանձնման ընթացակարգերի համատեքստում ստացված տեղեկությունները կարող են էական նշանակություն ունենալ միջազգային պաշտպանությունից օգտվելու նրա իրավունքի առումով:<sup>99</sup> Ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինները, որոնք քննում են հանձնման մասին պահանջի առարկա դարձած անձի դիմումը, պետք է հանգամանալից կերպով գնահատեն պահանջը ներկայացրած պետության այն պնդումը, որ հետախուզման մեջ գտնվող անձը ներգրավված է եղել հանցավոր գործունեության մեջ: Օգտման երկրից դիմումատուի փախուստի, ինչպես նաև նույն երկիր նրա վերադարձի հետևանքներին հետևող սպառնալիքի և հանգամանքների վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություններ նույնպես պետք է հաշվի առնվեն այն հարցը որոշելիս, թե արդյոք ապաստան հայցող անձ՝ որպես փախստակ, ունի միջազգային պաշտպանության կարիք, և թե արդյոք նա արժանի է օգտվել դրանից:

72. Փախստակ անձի հանձնման ընթացակարգերի հետևանքով կարող են որոշակի հարցեր ծագել նաև փախստակ անձի կարգավիճակի ստանալու նրա իրավունքի վերաբերյալ: Կախված հանգամանքներից՝ նման իրողությունները կարող են հետախուզման մեջ գտնվող անձին շնորհված փախստակ անձի կարգավիճակի կրկնակի քննության տեղիք տալ՝ բերելով այդ կարգավիճակի չեղարկմանը կամ կասեցմանը:

73. Բոլոր նման դեպքերում հանձնման մասին պահանջի հետևող սպառնալիքի տեղեկություններին հավաստիությունը, ինչպես նաև փախստակ անձի կարգավիճակի ստանալու նվազագույն չափորոշիչներին բավարարման առումով դրանց նշանակությունը պետք է գնահատվեն գործի բոլոր հանգամանքներին լույսի ներքո:<sup>100</sup> Ավելին, ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ համապատասխան որոշման կայացման ընթացակարգերը, ինչպես նաև այն ընթացակարգերը, որոնք կարող են հանգեցնել

<sup>99</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 59, 62 և 64:

<sup>100</sup> Սա վերաբերում է այն դեպքերին, երբ հանձնման ընթացակարգերը փախստակ անձի կամ ապաստան հայցող անձի առնչությամբ ձեռնարկվել են «հետախուզման մեջ գտնվելու մասին (կարմիր) ծանուցման» հիման վրա, որը տրվել է Ինտերպոլի կողմից անդամ պետության ներքին մեկի պահանջով: Նման «կարմիր ծանուցագրի» կապակցությամբ պահանջը ստացած պետությանը տրամադրված տեղեկությունները պետք է քննության առնվեն ճիշտ այնպես, ինչպես այն պարագայում, եթե դրանք տրամադրված լինեին ուղղակիորեն պահանջը ներկայացրած պետության կողմից: Ինտերպոլի ծանուցագրերի համակարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ՝ <http://www.interpol.int>:

փախստակ ան ի կարգավիճակի չեղարկմանը կամ կասեցմանը, պետք է նախատեսեն լիարժեք ընթացակարգային երաշխիքներ: Հաջորդիվ ներկայացվող բաժիններում ուսումնասիրվում են նյութաիրավական ընթացակարգային հարցեր, որոնք ծագում են այն ժամանակ, երբ հանձնման մասին պահանջի ներկայացման դեպքերում քննություն է առնվում փախստակ ան ի կարգավիճակ ստանալու իրավունքը:

**Բ. Փախստակ ան ների կարգավիճակի որոշում հանձնման նկատառումներում ներդրություններում**

**1. Նյութաիրավական պահանջներ**

*«Ներառում» հասկացությունը՝ 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «ա» կետի 2-րդ ենթակետով սահմանված իմաստով*

74. Այն հարցը քննելիս, թե արդյոք իր ծագման երկրի իրավասու մարմինների կողմից հանձնման մասին պահանջի առարկա դարձած ապաստան հայցող անձն իրավունք ունի դիմելու փախստակ ան ի կարգավիճակ ստանալու համար, ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինները պետք է որոշեն, թե արդյոք խնդրո առարկա անձը փորձում է խուսափել տվյալ երկրում գործած հանցավոր արարքների համար դատական կարգով օրինական հետապնդումից կամ պատժից, այլ ոչ թե փրկվում է ապօրինի հետապնդումներից: Եթե ապացուցվի, որ դիմումատու անարդարատու թյունից փախուստի դիմած, այլ ոչ թե ապօրինի հետապնդումներից փրկված անձ է, ապա նա չի փավարարի 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «ա» կետի 2-րդ ենթակետում գետեղված փախստակ ան ի սահմանման պայմանները («ներառման» չափորոշիչներ), և նրա դիմումը պետք է մերժվի:<sup>101</sup>

75. Ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ որոշում կայացնողները պետք է հաշվի առնեն այն հնարավորությունը, որ դիմումատուի ծագման երկրի իրավասու մարմինները կարող են քրեական հետապնդումն օգտագործել որպես տվյալ անձին ապօրինի հետապնդումների ենթարկելու միջոց, կամ էլ այն հնարավորությունը, որ հանձնման մասին պահանջը ներկայացվում է հետախուզման մեջ գտնվող անձին ապօրինի հետապնդումների ենթարկելու մտադրությամբ: Հնարավոր է նաև, որ ստեղծվեն այնպիսի իրավիճակներ, երբ ապաստան հայցող անձը կարող է հետապնդվել օրենքով սահմանված դատական կարգով, սակայն ունենալ այլ հետապնդումների ենթարկվելու հիմնավոր մտավախություն, լինի դա նրա գործով իրականացվող քրեական հետաքննության շրջանակներում (օրինակ՝ խոշտանգումների

<sup>101</sup> Տե՛ս ՄՄԿ ՓԳՀ, «Ձեռնարկ», վերը նշված ծանոթագրություն 46, կետեր՝ 56-60:

վտանգը նախնական կալանքի ժամանակ), թե այլ նկատառումներով:<sup>102</sup> Նման հանգամանքներում դիմումատուները կարող են բավարարել 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «ա» կետի 2-րդ ենթակետում գետեղված ներաման չափորոշիչները, եթե կապ հաստատվի ակնկալվող հետապնդման և 1951 թվականի կոնվենցիայով նախատեսված հիմքի միջև:<sup>103</sup>

76. Այդուհանդերձ, նույնիսկ եթե ապացուցվի, որ հետախուզման մեջ գտնվող անձը բավարարում է փախստականի սահմանման շրջանակներում ներառվելու պահանջները, մինչև նույն կարող է կարիք առաջանալ դիտարկել 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետով նախատեսված բացառող դրույթները կիրառման հնարավորությունը:

*1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետով ամրագրված չափորոշիչների վրահիմնված բացառող դրույթներ*

77. Հանձնման մասին պահանջի կամ դրա հետ կապված տեղեկությունների ներկայացման հետևանքով կարող է կարիք առաջանալ դիտարկել 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետով նախատեսված բացառող դրույթները կիրառման հնարավորությունը, եթե կան այն հանգամանքի մասին վկայող փաստեր, որ խնդրո առարկան ձևով կարող է գործածվել ինչպես նաև դրույթի տարածման տիրույթում ընդգրկված հանցագործություններ կամ մասնակցած լինել նման հանցագործություններին:<sup>104</sup>

<sup>102</sup> Եթե պահանջը ներկայացրած պետությունը տվել է դիվանագիտական երաշխիքներ հետախուզման մեջ գտնվող անձին իրեն հանձնելուց հետո նրան կատարվող ցուցաբերվելիք որոշակի վերաբերմունքի առնչությամբ, ապա այդ երաշխիքները պետք է գնահատվեն 28-րդ կետում գետեղված չափորոշիչների համաձայն, որոնք ավելի մանրամասն քննարկվում են այստեղ՝ ՄԱԿ ՓԳՀ-ի «Օսնոթագրությունը դիվանագիտական երաշխիքներին վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 26:

<sup>103</sup> Նման «շաղկապի» առկայությունը պահանջը ենթադրում է, որ անձը դասվում է 1951 թվականի կոնվենցիայի դրույթներով նախատեսված ներաման չափորոշիչներին շարքը, միայն եթե նա ունի ռասայական պատկանելության, դավանած կրոնի, ազգություն, որևէ աանձին սոցիալական խմբին պատկանելու կամ քաղաքական հայացքներին հարելու համար հետապնդումներին ենթարկվելու հիմնավոր մտավախություն: 1951 թվականի կոնվենցիայում գետեղված փախստականի սահմանման շրջանակներում ներառման չափորոշիչները վերաբերյալ ավելի մանրամասն ուղղորդում ստանալու համար տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Ձեռնարկ», վերը նշված ծանոթագրություն 46, ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ, «Ուղեցույց միջազգային պաշտպանության վերաբերյալ», որը նվիրված է 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «ա» կետի 2-րդ ենթակետի կիրառման որոշ հատուկ հայեցակետերին, որոնք կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?page=rsd>:

<sup>104</sup> 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետում սովորաբար է. «Սույն Կոնվենցիայի դրույթները չեն կիրառվում այն անձին նկատմամբ, որի վերաբերյալ լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա.

(ա) կատարել է հանցագործությունները ընդդեմ խաղաղության, պատերազմական հանցագործություններ կամ մարդկության դեմ ուղղված

78. Փախստակ ան ն եր ի ն վ եր աբ եր ո ղ այ լ մ ի ջ ազ գ այ ի ն փաստաթղթերում ն ու յ ն պե ս ն եր առ վ ած ե ն ք ազ առ ո ղ դ ր ու յ թ ն եր : 1969 թ վ ա կ ան ի Աֆրիկյան միաբանության կազմակերպության կոնվենցիայի 1-ին հոդվածի 5-րդ կետում վերաբարձողում է 1951 թ վ ա կ ան ի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետի ձևակերպումներն այն քառաթյամբ, որ առաջինում մեջբերվում են Աֆրիկյան միաբանության կազմակերպության սկզբունքներն ու նպատակները : Ավելին, Աֆրիկյան միաբանության կազմակերպության կոնվենցիան նախատեսում է փախստակ ան ի պաշտպանության դադարեցում, եթե վերջինս «կատարել է ծանր ոչ քաղաքական բնույթի հանցագործություն իրեն ապաստան տված երկրից դուրս՝ այնտեղ որպես փախստակ ան ը ն դ ու ն վ ե լ ու ց հետո»,<sup>105</sup> կամ եթե փախստակ ան ը գրավում է Աֆրիկյան միաբանության կազմակերպության անդամ պետություններին գործնականում մեկի դեմ ուղղված ադրիչ գործունեությամբ :<sup>106</sup> Թեև այս դրույթները ձևակերպվել են որպես դադարեցման մասին դրույթներ, սակայն դրանք, ըստ էության, հիմնված են քառաթյամբ նկատարումների վրա : Քանի որ Աֆրիկյան միաբանության կազմակերպության կոնվենցիան լրացնում 1951 թ վ ա կ ան ի կոնվենցիան, ուստի այս դրույթները պետք է ընթերցվեն 1951 թ վ ա կ ան ի կոնվենցիայի 2-րջանակներում և կիրառվեն վերջինիս համահունչ եղանակով : Այսպիսով, «Աֆրիկյան միաբանության կազմակերպության նպատակներին և սկզբունքներին հակասող արարքներին» մեջբերումը պետք է ընդգրկվի 1951 թ վ ա կ ան ի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետի «գ» ենթակետի 2-րջանակներում, մինչդեռ փախստակ ան ի կողմից՝ որպես այդպիսին ճանաչվելուց հետո, ձեռնարկված ցանկացած գործողություններ կարող են փախստակ ան ի կարգավիճակի կասեցման (չեղարկման) տեղիք տալ, միայն եթե ինդրոնաարկաարարքները դասվում են 1951 թ վ ա կ ան ի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետի «ա» կամ «գ» ենթակետերի տարածման տիրույթը :<sup>107</sup> Եվ մի քառաթյամբ դրույթ ամրագրված է ՄԱԿ ՓԳՀ-ի 1950 թ վ ա կ ան ի կանոնադրության 7-րդ կետի «դ» ենթակետում :<sup>108</sup>

---

հանցագործություն, ինչպես դրանք սահմանված են նման հանցագործություններին կապակցությամբ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով ստեղծված միջազգային փաստաթղթերում,

(բ) կատարել է ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն ապաստան տված երկրից դուրս՝ նախքան որպես փախստակ ան ը դուրս գալու վերջը,

(գ) մեղավոր է ճանաչվել Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին հակասող արարքներին կատարման մեջ» :

<sup>105</sup> Աֆրիկյան միաբանության կազմակերպության կոնվենցիայի 1-ին հոդվածի 4-րդ կետի «բ» ենթակետ :

<sup>106</sup> Աֆրիկյան միաբանության կազմակերպության կոնվենցիա 1-ին հոդվածի 4-րդ կետի «գ» ենթակետ՝ 3-րդ հոդվածի հետ միասին :

<sup>107</sup> Փախստակ ան ի կարգավիճակի կասեցման չափորոշիչներին վերաբերյալ տե՛ս ստորև կետերը՝ 94-96 :

<sup>108</sup> Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1951 թ վ ա կ ան ի կոնվենցիայի 1-ին





կայացնողները պետք մտապահեն, որ հանձնումը և բացառող դրույթները կիրառումն իրականացվում են տարբեր պատակներով և կարգավորվում են տարբեր իրավական չափորոշիչներով: Հանձնումն այն գործիքն է, որի միջոցով պետությունները միմյանց փոխադարձ աջակցություն են մատուցում քրեական հետապնդման հարցերում՝ հանձնման մասին կիրառելի համաձայնագրերի և ազգային օրենսդրության, ինչպես նաև այլ միջազգային համաձայնագրերում գետեղված հանձնմանն առնչվող դրույթներին համապատասխան: Բացառող դրույթները կիրառումն այն գործընթացն է, երբ փախստականների համար նախատեսված միջազգային պաշտպանությունից զրկվում են այն անձինք, ովքեր այլապես կբավարարեին 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «ա» կետի 2-րդ ենթակետով ամրագրված փախստականի սահմանման չափորոշիչները, սակայն ում առնչությամբ կան լուրջ հիմքեր կարծելու, որ վերջիններս պատասխանատվություն են կրում որոշ ծանր հանցագործությունների կամ հրեշավոր արարքների համար: 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետում բերվում է այն հանցավոր գործունեության տեսակների սպառիչ ցանկը, որոնք կարող են փախստականների պաշտպանությունը բացառող դրույթները կիրառման տեղիք տալ:

81. Եթե հանձնման իրականացման համար սահմանված պահանջները բավարարվում են, ապա այդ իրողությունն ամենևին էլ չի նշանակում, որ 1-ին հոդվածի «գ» կետով նախատեսված բացառող դրույթները պարտադիր պետք է կիրառվեն խնդրառարկա անձի նկատմամբ: Թեև բազում դեպքեր, որոնց պարագայում հանձնման մասին պահանջը կարող է բավարարվել, դասվում են 1-ին հոդվածի «գ» կետի տարածման տիրույթը, սակայն գոյությունն չունի ինքնաբերաբար հաստատվող կապ «հանձնման ենթակա» և «բացառող դրույթները կիրառման ենթակա» հանցատեսակների միջև: Հանձնման մասին համաձայնագրերի և (կամ) օրենսդրական նորմերի կիրառելի դրույթներին ներքո՝ պետությունները բավարարում են հանձնման մասին ներկայացված պահանջներն այն հանցատեսակների առնչությամբ, որոնք չեն դասվում 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետով ամրագրված հանցագործությունների շարքը: Եվ հակառակը՝ 1-ին հոդվածի «գ» կետով նախատեսված բացառող դրույթները կիրառման տեղիք տվող քրեական հանցագործությունը կարող է չհամարվել հանձնման ենթակա հանցատեսակ՝ հանձնման հարցում այդ երկու պետությունների միջև հաստատված հարաբերությունների

---

արարքների և ծանր հանցագործությունների մեջ մեղադրվող անձինք չկարողանան չարաշահել ապաստանի ինստիտուտն օրենքի արջև իրենց արարքների համար պատասխան տալուց խուսափելու համար: Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Նախապատմություն ծանրագործությունն բացառող դրույթները վերաբերյալ», վերը նշված ծանրագործությունն 87, կետ 2: Տե՛ս նաև S. Kapferer «Extradition and Asylum», ծանրագործություն 2, կետեր՝ 318-319:

շրջանակներում: Այսպիսով, բացառող դրույթի կիրառման հնարավորությունը դիտարկելիս ապաստանի հարցերով որոշում կայացնողները պետք է քննության առնեն խնդրո առարկա արարքների բնույթն ու ծանրությունը՝ 1-ին հոդվածի «գ» կետի կիրառելի ենթակետով ամբողջոված պահանջներին լույսի ներքո:

82. Այս մոտեցումը կիրառվում է բոլոր այն դեպքերում, երբ ի հայտ է գալիս բացառող դրույթների կիրառման հնարավորություն, այդ թվում՝ այն դեպքերում, երբ խոսքը գնում է այնպիսի արարքների մասին, որոնք կարող են դասվել ծանր «նչ քաղաքական բնույթի» հանցատեսակների շարքը՝ 1-ին հոդվածի «գ» կետի «բ» ենթակետում սահմանված իմաստով: Մի կողմից՝ բացառող դրույթների կիրառումն արդարացված համարելու համար խնդրո առարկա հանցագործությունները պետք է բավականաչափ ծանր լինեն, որպեսզի դրանց վկայակոչմամբ հիմնավորված համարվի միջազգային պաշտպանություն մերժումը: Մյուս կողմից՝ այդ հանցագործությունները պետք է իրենց բնույթով լինեն ոչ քաղաքական: Բացառող դրույթի գնահատման համատեքստում տվյալ հանցագործության քաղաքական բնույթն ունենալու կամ չունենալու հարցը պարզելիս օգտագործվող չափորոշիչները բխում են հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերի դատարարական պրակտիկայի ներքո կիրառվող մոտեցումներից: Այս առումով նշանակալի գործունեություն է տվյալ հանցագործության շարժառիթները, համատեքստը, մեթոդները, ինչպես նաև համախառնությունը դրանով հետապնդվող նպատակներին:<sup>112</sup> Թեև հանձնման շրջանակներում<sup>113</sup> հանցավոր արարքների գնալով էլ ավելի մեծ թվի բնութագրումը որպես ոչ քաղաքական հանցագործություններ նշանակալի է, այդուհանդերձ, բացառող դրույթների կիրառման համատեքստում հանցագործության քաղաքական տարրը որոշելիս 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետի «բ» ենթակետի կիրառելիությունը ենթակա է առանձին գնահատման՝ տվյալ գործի մասնավոր հանգամանքների լույսի ներքո:<sup>114</sup> Բացի այդ, 1-ին

<sup>112</sup> Մանրամասն քննարկում տե՛ս այստեղ՝ ՄԱԿ ՓԳՀ, «Նախապատմության ծանոթագրություն բացառող դրույթների վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 109, կետեր՝ 41-43:

<sup>113</sup> Ինչպես նշվել է վերը նշված 42-րդ կետում, «քաղաքական բնույթի հանցագործությունների պարագայում ազատման» մասին դրույթի տարածման տիրույթը զգալիորեն նվազել է անցած տասնամյակներում, քանի որ հանձնման շրջանակներում հանցագործությունների գնալով ավելի մեծ թվի բնութագրում է որպես ոչ քաղաքական բնույթի: Հանձնման առնչվող իրավական նորմերում քաղաքական բնույթի հանցագործությունների համար ազատման վերաբերյալ ավելի մանրամասն քննարկում տե՛ս այստեղ՝ S. Kapferer, «Extradition and Asylum», վերը նշված ծանոթագրություն 2, կետեր՝ 72-87:

<sup>114</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Նախապատմության ծանոթագրություն բացառող դրույթների վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 109, կետեր՝ 85-86, որտեղ քննարկվում են այն հանգամանքները, որոնց պարագայում, օրինակ՝ բռնի ուժով տրանսպորտային միջոցի առանցումը կարող է քաղաքական բնույթի

հոդվածի «գ» կետի «բ» ենթակետի կիրառման համար նաև հրաժեշտ է, որ հանցագործությունը կատարված լինի «ապաստան տված երկրից դուրս նախքան որպես փախստական այդ երկիր ընդունվելու պահը»:<sup>115</sup>

83. Հանձնման մասին պահանջի շրջանակներում տվյալ անձին վերագրվող քրեական հանցագործությունը, ծանրություն և համատեքստի քննությունը և գնահատումը՝ փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերով ամրագրված չափորոշիչներին լույսի ներքո, պահանջվում է նաև այն դեպքերում, երբ խնդրո առարկա արարքներն իրենց բնույթով համարվում են անարհեստական: Բազում դեպքերում նման արարքները դասվում են 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետի ենթակետերից որևէ մեկի տարածման տիրույթը: Այդուհանդերձ, այն փաստը, որ որևէ առանձին վարքագիծ բնութագրվել է որպես անարհեստական, լինի դատարածաշրջանային փաստաթղթով, ազգային օրենսդրությամբ, թե հանձնման մասին պահանջով ամրագրված սահմանմամբ կամ այլ եղանակով, ինքնին չի արդարացնում 1951 թվականի կոնվենցիայի բացառող դրույթներին կիրառումը, թեպետև նման դեպքերում սովորաբար պահանջվում է բացառող դրույթներին կիրառելիություն հարցի քննությունը:<sup>116</sup>

84. Հարկ է նաև հիշեցնել, որ բացառող դրույթներին կիրառումն արդարացնելու համար անհրաժեշտ է ապացուցել, որ խնդրո առարկա անձնան հատական պատասխանատվություն է կրում 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետի տարածման տիրույթում ընդգրկված հանցագործությունների համար: Այս դրույթին ներքո նորոշում կայացնողը պարտավոր է պարզել, թե արդյոք կանակն հայտնաբերված արժանատի սովորաբար, որոնք բավարարում են փախստականներին միջազգային պաշտպանությունից զրկելու համար բացառող դրույթներին կիրառման շրջանակներում

---

գործողությունն համարվել և, հետևաբար, տեղիք չտալ բացառող դրույթներին կիրառմամբ փախստականի կարգավիճակից զրկելու համար: Նմանատիպ նկատառումներ կիրառելի են այլ հանցագործությունների պարագայում, որոնք միջազգային համաձայնագրերում բնորոշվում են որպես ոչ քաղաքական բնույթի:

<sup>115</sup> 1-ին հոդվածի «գ» կետ «բ» ենթակետի մեկնաբանությունն վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ տես՝ ՄԱԿ ՓԳՀ, «Նախապատմություն և ծանոթագրությունները բացառող դրույթներին վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություններ 109, կետեր՝ 37-45, և կետ՝ 81: Տես նաև S. Kapferer «*Extradition and Asylum*», ծանոթագրություններ 2, կետեր՝ 315-338:

<sup>116</sup> Սովորաբար որպես անարհեստական բնույթի դիտարկվող դեպքերում բացառող դրույթներին կիրառման հետևանքով հարցերի վերաբերյալ ավելի նմանրամասնում դրույթներում կարելի է գտնել այստեղ՝ ՄԱԿ ՓԳՀ, «*Ուղեցույց բացառող դրույթներին և անարհեստական գործողություններին վերաբերյալ*», վերը նշված ծանոթագրություններ 110:

պահանջ վոդ ապացույցի չափանիշները («լուրջ հիմքեր կան ենթադրելու»): Պարտադիր չէ, որ հանձնման մասին պահանջը հիմնավորելու համար ներկայացվող տեղեկությունները բավարարեն այս շեմային չափանիշները:<sup>117</sup>

85. Եթե ինդրոն առարկա անձը բացառող դրույթները կիրառմամբ գրվում է փախստակ անի կարգավիճակից, ապա նա չի օգտվում հարկադիր վերադարձից փախստակ աներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո նախատեսված պաշտպանությունից, թեև հանձնման վրա կարող է արգելք դրվել մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի կամ հանձնման մասին համաձայնագրերի կամ օրենսդրության մեջ ամրագրված չվերադարձելիություն մասին դրույթներին ներքո: Եթե ընդունող պետությունը կարող է իր իրավագործությունը տարածել այն գործողություններին վրա, որոնք բացառող դրույթները կիրառման տեղիք են տալիս, ապա այդ պետությունն իրավասու է համապատասխան քրեական ընթացակարգերի մեկնարկ տալ՝ իր ազգային արդարադատության համակարգի շրջանակներում:<sup>118</sup> Ինչ վերաբերում է բացառող դրույթներին ենթակա որոշ հանցագործություններին, ապա միջազգային իրավունքի ներքո ամրագրված է հանձնելու կամ դատական կարգով հետապնդելու (*aut dedere aut judicare*) պահանջը:<sup>119</sup>

## 2. Ընթացակարգային հարցեր

86. Ապաստան հայցելու և ստանալու իրավունքը, որն

<sup>117</sup> Առհասարակ հանձնման մասին պահանջի միջոցով հնարավոր է նույնականացի էլ հետախուզման մեջ գտնվող անձին նման րամասնել նրան հանձնելու պահանջի պատճառները: Մովորաբար պահանջը ներկայացրած պետությունը պարտավոր է ներկայացնել ձերբակալություն հրամանագրի կամ պատժի նշանակման մասին դատարանի որոշման պատճենը, համապատասխան իրավական դրույթներին տեքստը, փախուստի դիմած անձի նույնականացի համար անհրաժեշտ տեղեկությունները, ինչպես նաև վերջինիս դեմ առջադրվող մեղադրանքներին կարգադրել: Պահանջը ստացած պետությունը սովորաբար իրավունք ունի անհրաժեշտության դեպքում պահանջել լրացուցիչ տեղեկություններ: Որոշ երկրներ (մասնավորապես՝ ընդհանուր իրավունքի ավանդույթով առջնորդվող երկրներ, կարող են պահանջել, որ տվյալները ներկայացվեն որևէ հատուկ ձևաչափով (օրինակ՝ երդմամբ վավերացված գրավոր ցուցմունքի տեսքով) կամ բավարարել որոշակի շեմային պահանջներ (օրինակ՝ ապացույցներ, որոնցով առերևույթ հիմնավորվում է հետախուզման մեջ գտնվող անձին առջադրվող մեղադրանքը): Մանրամասներին համար տե՛ս S. Kapferer «*Extradition and Asylum*», վերը նշված ծանոթագրություն 2, կետեր՝ 46-55:

<sup>118</sup> Ինչպես նշվել է 2-րդ կետում, փախստակ ան կամ ապաստան հայցող անձ լինելու հանգամանքը չի ենթարկում անձեռնմխելիություն և քրեական հետապնդումից: 1951 թվականի կոնվենցիայի 2-րդ հոդվածում արտացոլված է այն պահանջը, որ փախստակ աները և ապաստան հայցող անձինք պետք է հետևեն ընդունող երկրի օրենքներին և կանոններին, իսկ նրանք, ովքեր չեն կատարի այդ պահանջը, կարող են դատական կարգով հետապնդվել ընդունող երկրում օրենքի ողջ իստությունը:

<sup>119</sup> Տե՛ս S. Kapferer «*Extradition and Asylum*», վերը նշված ծանոթագրություն 2, կետեր՝ 21-32:

ամբազան Է Մարդու իրավունքներին համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածում և հանդես է գալիս որպես 1951 թվականի կոնվենցիայի և 1967 թվականի արձանագրության անբաժանելի մաս, իր մեջ ներառում է պետություններին վրա դրված այն պարտավորությունը, ըստ որի նրանք պետք է ապահովեն արդար և արդյունավետ ընթացակարգեր փախստականներին վերապահված միջազգային պաշտպանություն և տանալու համար ներկայացված դիմումներին քննություն շրջանակներում՝ զանգվածային ներհոսքի պայմաններում և տեղծված իրավիճակներին համատեքստից դուրս:<sup>120</sup> Թեև սպաստան և տանալու մասին դիմումներին ուսումնասիրություն ընթացակարգերը տարբերվում են՝ կախված սովյալ երկրում ընդունված վարչական ավանդույթներից և (կամ) գործող իրավաբանական համակարգից, միևնույն է պաշտպանություն միջազգային չափանիշներին համապատասխանելու համար պահանջվում են որոշումներին կայացման հստակ առանցքային տարրեր:<sup>121</sup>

87. Ասված ըլիովին վերաբերում է այն իրավիճակներին, երբ սպաստան հայցող անձը հանդես է գալիս նաև որպես հանձնման մասին պահանջի առարկա: Նման դեպքերում փախստականներին պաշտպանություն տեսանկյունից հիմնական խնդիրն այն իրողությունն է, որ սպաստան հայցող անձի

<sup>120</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Սպաստանի շնորհման գործընթացներ», վերը նշված ծանոթագրություն 13, կետեր՝ 4-5, տես Գործադիր կոմիտեի եզրակացություններ՝ 1977 թվականի թիվ 8 (XXVIII) «Փախստականի կարգավիճակի որոշման վերաբերյալ», 1979 թվականի թիվ 15 (XXX) «Սպաստանի երկիր չունեցող փախստականներին վերաբերյալ», 1983 թվականի թիվ 30 (XXXIV) «Փախստականի կարգավիճակ կամ սպաստան և տանալու ակնհայտորեն անհիմն կամ չարաչափակ դիմումներին հիմնախնդրի վերաբերյալ», 1989 թվականի թիվ 58 (XL) «Փախստականներին կամ սպաստան հայցող անձանց վերաբերյալ, ովքեր տեղաշարժվում են անկանոն եղանակով այն երկրից, որտեղ նրանք արդեն ստացել են պաշտպանություն»: Արդար և արդյունավետ ընթացակարգերից օգտվելու կարևորությունը վերահաստատվել է նաև Գործադիր կոմիտեի կողմից իր Հնդհանուր եզրակացություններում՝ 1983 թվականի թիվ 29 (XXXIV), 1989 թվականի թիվ 55 (XL), 1991 թվականի թիվ 65 (XLII), 1992 թվականի թիվ 68 (XLIII), 1993 թվականի թիվ 71 (XLIV), 1994 թվականի թիվ 74 (XLV), 1997 թվականի թիվ 81 (XLVIII), 1998 թվականի թիվ 85 (XLIX), 2002 թվականի թիվ 92 (LIII), ինչպես նաև «Երաշխիքներին տրամադրմամբ սպաստանի շնորհման վերաբերյալ» 1997 թվականի թիվ 82 (XLVIII) ընդհանուր եզրակացությունում: Տե՛ս նաև 2001 թվականի դեկտեմբերի 12-ից 13-ը Ժնևում Փախստականներին կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի և (կամ) 1967 թվականի արձանագրության մասնակից պետություններին գումարված նախարարական ժողովին ընդունված Պաշտպանություն օրակարգի իրականացման գործողություններին ծրագրի 1-ին նպատակի 2-րդ թիրախի 2-րդ կետը, որը հաստատվել է Գործադիր կոմիտեի կողմից 2002 թվականին ընդունված թիվ 92 (LIII) եզրակացության «ա» կետով: Միջազգային պաշտպանություն վերաբերյալ եզրակացությունները կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?page=type&skip=0&type=EXCONC>:

<sup>121</sup> Այս առանցքային տարրերի մասով պետություններին ակնկալվող լավագույն գործելակերպին համառոտակի ծանոթանալու համար տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Սպաստանի շնորհման գործընթացներ», վերը նշված ծանոթագրություն 13, կետ 50:

վերաբերյալ ներկայացված հանձնման մասին պահանջն արգելք չհանդիսանալ վերջինիս համար՝ թույլ չտալով նրան օգտվել ապաստանի շնորհման ընթացակարգից կամ այլ ապեւ հանգեցնելով էական ընթացակարգային երաշխիքներին սահմանափակման ընթացքում ապաստանի շնորհման գործընթացի շրջանակներում: Այս իրողությունն առանձնապես կարևոր է հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնման արդյունքում ապաստան հայցող անձը կարող է վերադարձվել այն երկիր, որտեղ իր պնդմամբ նրան սպառնում է հետապնդումների ենթարկվելու վտանգ:

88. Ավելի հստակ դա նշանակում է, որ ապաստան ստանալու մասին դիմումը չպետք է անընդունելի հայտարարվի միայն այն պատճառով, որ այն ներկայացվել է պահանջը ստացած պետության իրավասու մարմինների կողմից հանձնման մասին համապատասխան պահանջ ստանալուց հետո, կամ այն բանից հետո, երբ ապաստան հայցող անձնիմացել է իրեն հանձնելու պահանջին ներկայացման մասին: Խնդրո առարկան ձև կարող է գրկվել ապաստանի շնորհման ընթացակարգերից օգտվելու իրավունքից, միայն եթե պարզվի, որ նա արդեն ստացել է պաշտպանություն՝ 1951 թվականի կոնվենցիայով ամրագրված չափանիշներին համապատասխան, մեկ այլ երկրում, կամ այն, որ նա հնարավորություն կունենա օգտվել ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ համապատասխան որոշման կայացման ընթացակարգերից և պաշտպանությունից մեկ այլ երկրում:<sup>122</sup> Բոլոր այլ դեպքերում պահանջը ստացած պետությունում անհրաժեշտ է անցկացնել ապաստան ստանալու մասին դիմումի նյութաիրավական գնահատում: Վերը շարադրված պատճառներով փախստակ անի կարգավիճակի որոշումը պետք է իրականացվի պահանջը ստացած պետության ապաստանի հարցերով զբաղվող իրավասու մարմինների կողմից:<sup>123</sup>

<sup>122</sup> Անձի հետացումը երկրի տարածքից և նրա փոխանցումը մի երկրին, որտեղ նա արդեն ճանաչվել է որպես փախստակ ան («ապաստան տված առաջին երկիր»), պատշաճ քայլ է համարվում միայն այն դեպքերում, երբ նախապես պարզվել է, որ տվյալ անձի վերադարձից հետո նա արժանանալու է համապատասխան ընդունելություն և շարունակելու է օգտվել արդյունավետ պաշտպանությունից տվյալ երկրում: Վերադարձը տարանցիկ երկիր («անվտանգ երրորդ երկիր»), փախստակ անի կարգավիճակ ստանալու համար այնտեղ դիմում ներկայացնելու նպատակով, պատշաճ քայլ է համարվում, միայն եթե ապաստան ստանալու մասին դիմումի գնահատման պատասխանատվությունն, ըստ էության, ստանձնում է տվյալ երրորդ երկիրը, և եթե ապաստան հայցող անձը պաշտպանված էլինելու հարկադիր վերադարձից, իսկ փախստակ ան ճանաչվելու պարագայում՝ կարող անհայցել և ստանալ ապաստան՝ ըստ ընդունված միջազգային չափորոշիչների: Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Ապաստանի շնորհման գործընթացներ», վերը նշված ծանոթագրություն 13, կետեր 7-18 և 50(b)-(c): Տե՛ս նաև ՄԱԿ ՓԳՀ-ի Գործադիր կոմիտեի 1979 թվականի թիվ 15 (XXX) եզրակացությունը «Ապաստանի երկիր չունեցող փախստակ անների վերաբերյալ», որը կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/teaxis/vtx/refworld/rwmain?docid=3ae68c960>:

<sup>123</sup> Տե՛ս նաև վերը նշված կետ 63:

89. Ինչպես արդեն նշվել է, ապաստանի շնորհման այն ընթացակարգերը, որոնք արդեն մեկնարկել են հանձնման մասին պահանջի ներկայացման պահին, որպես կանոն, պետք է շարունակվեն պահանջը ստացած պետությունում:<sup>124</sup>

90. Հենց միայն հանձնման մասին պահանջի ներկայացման փաստը չի կարող որպես այդպիսին հիմք ծառայել ապաստան ստանալու մասին հետախուզման մեջ գտնվող անձի կողմից ներկայացված դիմումը մերժելու համար, ընդ որում ապաստան ստանալու մասին դիմումը չի կարելի դիտարկել որպես ակնհայտորեն անհիմն կամ չարաշահակամիտ միայն հանձնման մասին պահանջի առկայություն պատճառով: Ասվածը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ անձն ապաստան ստանալու մասին դիմում է ներկայացնում նրան հանձնելու պահանջի մասին իմանալուց հետո, քանի որ այդ հանգամանքը կարող է դիտարկվել նրա կողմից որպես հետապնդումների ենթարկվելու վտանգի անազան: Ապաստան ստանալու մասին դիմումը պետք է քննությունն առնվի ապաստանի շնորհման սովորական ընթացակարգերի ներքո, բացառությամբ այն դեպքերի, երբ նման դիմումն ակնհայտորեն անհիմն է համարվում այլ նկատառումներով:<sup>125</sup> Այդուհանդերձ, կարող է կարիք առաջանալ դիմումի քննությունը համարել առաջնահերթ:

91. Մասնավորապես, այն դիմումները, որոնք խնդրահարույց են համարվում 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետով նախատեսված բացառող դրույթների ներքո, պետք է քննությանն առնվեն ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ որոշման կայացման սովորական ընթացակարգի շրջանակներում, ինչը թույլ կտա իրականացնել տվյալ դեպքի բոլոր հայեցակետերի ամբողջական փաստական և իրավաբանական գնահատումը համապատասխան որակավորում ունեցող անձնակազմի կողմից՝ չթողնելով այդ քայլը դիմումի ընդունելիության որոշման փուլում կամ արագացված ընթացակարգերի շրջանակներում:<sup>126</sup> Այնուամենայնիվ, արդյունավետության շահերից ելնելով, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել բացառող դրույթների պատշաճ կիրառումը՝ նշված առումով

<sup>124</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 64-68:

<sup>125</sup> Այն չափորոշիչները, պետք է բավարարվեն, որպեսզի պահանջն «ակնհայտորեն անհիմն» համարվի տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, Գործադիր կոմիտեի 1983 թվականի թիվ 30 (XXXIV) եզրակացությունն «Փախստականի կարգավիճակ կամ ապաստան ստանալու ակնհայտորեն անհիմն կամ չարաշահակամիտ դիմումների հիմնախնդրի վերաբերյալ», որը կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=3ae68c6118>: Տե՛ս, ՄԱԿ ՓԳՀ, «Ապաստանի շնորհման գործընթացներ», վերը նշված ծանոթագրությունն 13, կետեր՝ 24-33 և 51(d):

<sup>126</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Ուղեցույց բացառող դրույթների վերաբերյալ», վերը նշված ծանոթագրությունն 87, կետ 31, տե՛ս նաև ՄԱԿ ՓԳՀ, «Նախապատմությունն ծանոթագրությունն բացառող դրույթների վերաբերյալ», վերը նշված ծանոթագրությունն 109, կետ 99:



խնդրահարույց համարվող ապաստան ստանալու մասին դիմումները կարող են ուսումնասիրվել առաջնահերթ կարգով փախստականի կարգավիճակի որոշման համար պատասխանատու հաստատության կազմում գործող այն մասնագիտացված բաժիններին կողմից, որոնք զբաղվում են բացառող դրույթներին կիրառման հարցերով:<sup>127</sup>

92. Խիստ կարևոր է, որ ապաստանի շնորհման ընթացակարգերի շրջանակներում նախատեսված լինեն լիարժեք ընթացակարգային երաշխիքներ, մասնավորապես, փախստականի կարգավիճակ ստանալու դիմումի վերաբերյալ բացասական որոշումն անկախ մարմնում բողոքարկելու իրավունք և հարկադիր վերադարձից պաշտպանված լինելու իրավունք՝ ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ որոշումների կայացման ընթացակարգերի ողջ տևողության ընթացքում, այդ թվում բողոքարկման կամ վերանայման փուլերում:<sup>128</sup> Այս մոտեցումը հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ ապաստան հայցող անձը դարձել է հանձնման մասին պահանջի առարկա, քանի որ փախստականի կարգավիճակ ստանալու մասին դիմումի մերժումը կարող է բերել այնպիսի որոշման կայացմանը, ըստ որի նա ուղղակիորեն կհանձնվի այն երկրի իրավասու մարմիններին, որտեղ նա ունի հետապնդումներին թարկվելու մտավախություն:

93. Ապաստանի շնորհման մասին դիմումի վարույթում գտնվելու ողջ ընթացքում պետք է պահպանվի դրա բոլոր հայեցակետերի գաղտնիությունը:<sup>129</sup> Որպես կանոն, ծագման երկրին կամ որևէ այլ երկրին չի կարելի տրամադրել որևէ տեղեկություններ ապաստան ստանալու մասին դիմումի կամ դրաների կայացման բուն փաստի վերաբերյալ: Ասվածը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ ապաստան հայցող անձը կարող է ներգրավված լինել քրեորեն պատժելի գործունեությունում, լինի դա իր ծագման, թե որևէ երրորդ երկրում: Եթե բացառիկ հանգամանքներում անհրաժեշտ համարվի դիմել այդ երկրի

<sup>127</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Նախապատմության ծանոթագրությունն բացառող դրույթներին վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 109, կետ 101: Հարկ է նշել, որ 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետով նախատեսված բացառող դրույթներին առումով խնդրահարույց համարվող դիմումները չպետք է դիտարկվեն որպես «ակնհայտորեն անհիմն», քանի որ դրանք իրենց բովանդակության և արժանահավատության առումով բարդ խնդիրներին տեղիք են տալիս և պատշաճ ուսումնասիրության չեն արժանանում արագացված ընթացակարգերի շրջանակներում: Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Ապաստանի շնորհման գործընթացներ», վերը նշված ծանոթագրություն 13, կետեր՝ 41-43 և 50(բ): Տե՛ս նաև ՄԱԿ ՓԳՀ, «Նախապատմության ծանոթագրությունն բացառող դրույթներին վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 109, կետ 98:

<sup>128</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Ապաստանի շնորհման գործընթացներ», վերը նշված ծանոթագրություն 13, կետ 50(մ): Տե՛ս նաև, ՄԱԿ ՓԳՀ, «Խորհրդատվական կարծիք գաղտնիությունը պահպանման կանոններին վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 86:

<sup>129</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ, «Ապաստանի շնորհման գործընթացներ», վերը նշված ծանոթագրություն 13, կետ 50(մ): Տե՛ս նաև, ՄԱԿ ՓԳՀ, «Խորհրդատվական կարծիք գաղտնիությունը պահպանման կանոններին վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 86:

իրավասուն մարմիններին այնպիսի լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերելու համար, որոնք կարելի է ստանալ միայն այդ իրավասուն մարմիններից, և որոնք անհրաժեշտ են հանձնման մասին պահանջի և ապաստան ստանալու մասին դիմումի այն հայեցակետերի վերաբերյալ որոշում կայացնելու համար, որոնք առնչվում են տվյալ հանձնման պահանջին, ապա չի կարելի քացահայտել այն հանգամանքը, որ տվյալ անհատը ներկայացրել է ապաստան ստանալու մասին դիմում:<sup>130</sup>

#### Գ. Փախստականի կարգավիճակի չեղյալ հայտարարում և դրանից զրկում

94. Պահանջը ստացած պետություն կողմից նախկինում որպես փախստական ճանաչված անձին հանձնելու մասին պահանջին վերաբերող տեղեկությունները կարող են առաջացնել որոշակի հարցեր նրա՝ փախստականի կարգավիճակ ստանալու իրավունքի առնչությամբ: Այս իրողությունը կարող է հանգեցնել համապատասխան ընթացակարգերի մեկնարկին, որոնք, կախված ստեղծված հանգամանքներից, կարող են բերել հետախուզման մեջ գտնվող անձին շնորհված փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու կամ դրանից զրկելու մասին որոշման կայացմանը:

- «Չեղյալ հայտարարում» եզրույթը վերաբերում է այն որոշումներին, որոնցով չեղյալ է համարվում փախստականի կարգավիճակ ճանաչելու մասին որոշումը, որն իսկզբանե չպետք է կայացվեր, քանի որ ինդրոնառարկան ձև այդ պահին չի քավարարել սահմանված նվազագույն չափորոշիչները:<sup>131</sup> Չեղյալ հայտարարումն անդրադարձնում է այն որոշումներին վրա, որոնք ստացել են վերջնական օրինական ուժ, ասել է թե, որոնք այլևս բողոքարկման կամ վերանայման ենթակա չեն: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում իսկզբանե կայացրած սխալ որոշման ընդունման պահից («*ab initio*» կամ «*ex tunc*», այն է՝ «սկզբից» կամ «այդ պահից ի վեր»):<sup>132</sup>
- «Չրկում» եզրույթը նշանակում է փախստականի կարգավիճակից զրկում այն իրավիճակներում, երբ որպես

<sup>130</sup> Տե՛ս նաև վերը նշված կետեր՝ 57-58 և 69:

<sup>131</sup> Այսպես կարող է պատահել, որովհետև տվյալ անձը չի ունեցել ռասայական պատկանելության, դավանած կրոնի, ազգություն, որոշակի սոցիալական խմբի պատկանելու կամ քաղաքական հայացքների հարելու պատճառով հետապնդումներին ենթարկվելու հիմնավոր մտավայտություն կամ որովհետև այդ պահին կիրառվել 1951 թվականի կոնվենցիայի դրույթներով նախատեսված պաշտպանությունից փախստականի զրկելու համար սահմանված հիմքերից մեկը:

<sup>132</sup> Փախստականների կարգավիճակի չեղարկման չափանիշներին և չափորոշիչներին վերաբերյալ ավելի ամբողջական քննարկում կարելի է գտնել այստեղ՝ ՄԱԿ ՓԳՀ, «Օսնոթագրություն փախստականի կարգավիճակի չեղարկման վերաբերյալ», 22 նոյեմբերի 2004թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/refworld/rwmain?docid=41a5dfd94>:

փախստակ ան ճանաչված անձն անհատակ ան պատասխանատու թյուն է կրում 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետի «ա» ենթակետի կամ 1-ին հոդվածի «գ» կետի «գ» ենթակետի տարածման տիրույթում ընդգրկված արարքների համար, որոնք նագործել է որպես փախստակ ան ճանաչվելուց հետո:<sup>133</sup> Չրկման մասին նման որոշումը վերաբերում է ապագային («*ex nunc*», այն է՝ «այս պահից սկսած»):<sup>134</sup>

95. Փախստակ անի հանձնման մասին ներկայացված ոչ բոլոր պահանջներն են չեղյալ հայտարարման կամ գրկման նկատառումներին տեղիք տալիս: Հետախուզման մեջ գտնվող անձի փախստակ կարգավիճակի կրկնակի քննություն անհրաժեշտ կամ ոչ անհրաժեշտ լինելու հարցը կախված է առկա տեղեկությունների բնույթից: Պահանջը ստացած պետության իրավասու մարմինները պարտավոր են գնահատել հանձնման մասին պահանջի և դրա առնչությամբ ներկայացրած բոլոր տեղեկությունների հավաստիությունը, ինչպես նաև պետք է գնահատեն այդ տեղեկությունների նշանակությունը հետախուզման մեջ գտնվող անձի՝ որպես փախստակ անը անվերապահված միջազգային պաշտպանությունից օգտվելու իրավունքի առումով: Հնարավոր է, որ ազգային օրենսդրությամբ դրվեն ժամկետային սահմանափակումներ և (կամ) նախատեսվեն այլ պահանջներ փախստակ անի կարգավիճակի վերաբերյալ կայացրած վերջնական որոշումը կրկին քննելու համար: Միջազգային պաշտպանության տեսանկյունից՝ չեղյալ հայտարարման ընթացակարգերի մեկնարկը պատշաճ քայլ է համարվում, եթե կան հիմնավոր պատճառներ կասկածի տակ առնելու փախստակ անի կարգավիճակի ճանաչման մասին իսկաբանե կայացրած որոշման ճշտությունը: Նմանապես, այն դեպքերում, երբ կան հավաստի տեղեկություններ առայն, որ որպես փախստակ ան ճանաչված անձը կարող էր հետագայում ներգրավված լինել այնպիսի գործունեությունում, որը կդասեր նրան 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետի «ա» կամ «դ» ենթակետի տարածման տիրույթի շրջանակներում, ապա նման իրողությունը

<sup>133</sup> Ի տարբերություն 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետի «ա» ենթակետի դրույթների՝ 1-ին հոդվածի «գ» կետի «ա» և «բ» ենթակետերով ամրագրված բացառող դրույթները ենթակա չեն ժամկետային կամ այլ հարկադրական սահմանափակումներին:

<sup>134</sup> 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետի «ա» և «գ» ենթակետերի կիրառման նյութափորձակ և ընթացակարգային չափորոշիչների վերաբերյալ մանրամասն ուղղորդում կարելի է գտնել այստեղ՝ ՄԱԿ ՓԳՀ, «*Ուղեցույց բացառող դրույթների վերաբերյալ*», վերը նշված ծանոթագրություն 89 և ՄԱԿ ՓԳՀ, «*Նախապատմության ծանոթագրություն բացառող դրույթների վերաբերյալ*», վերը նշված ծանոթագրություն 109: Տես նաև ՄԱԿ ՓԳՀ, «*Ուղեցույց բացառող դրույթների և ախտի կշիռն առնող դրույթների վերաբերյալ*», վերը նշված ծանոթագրություն 110:

կարող է զրկման ընթացակարգերի մեկնարկի հիմք ծառայել :

96. Այդուհանդերձ, ամեն դեպքում փախստակն ի կարգավիճակի կորուստը համահունչ կլինի փախստակն երին առնչվող միջազգային իրավական նորմերի հետ, միայն եթե չեղյալ հայտարարման կամ զրկման համար նախատեսված նյութաիրավական պահանջները<sup>135</sup> սահմանվել են այնպիսի ընթացակարգերի շրջանակներում, որոնք նախատեսում են լիարժեք անհատական ընթացակարգային երաշխիքներ, այդ թվում, մասնավորապես՝ գործին վերաբերող նյութեր ներկայացնելու իրավունք և փաստական կամ օրինական հիմունքներով չեղյալ հայտարարման կամ զրկման մասին որոշումը բողոքարկելու կամ վերանայելու հնարավորություն:<sup>136</sup> Հարկ է նշել նաև, որ փախստակն երին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո ամրագրված չվերադարձելիության սկզբունքը շարունակվում է որպես հանձնման պահանջի արգելք գործել մինչև փախստակն ի կարգավիճակի չեղյալ հայտարարման կամ զրկման մասին որոշման վերջնական օրինական ուժի մեջ մտնելու պահը: Այն դեպքերում, երբ հանձնման հարցերին առնչվող իրավական նորմերը նախատեսում են հանձնման մասին պահանջի վերաբերյալ որոշում կայացնելու ժամկետային սահմանափակումներ, պահանջը ստացած պետությունը կարող է պարտավորված լինել մերժել հանձնման մասին պահանջը, եթե չեղյալ հայտարարման կամ զրկման ընթացակարգերը դեռևս չեն ավարտվել:<sup>137</sup> Փախստակն երին վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու պահանջը հավասարապես վերաբերում է փախստակն ի կարգավիճակի վերանայման ընթացակարգերին:<sup>138</sup>

<sup>135</sup> 4-րդ բաժնի «Բ» կետի 1-ին ենթակետում շարադրված նյութաիրավական կատարումները հավասարապես կիրառվում են, եթե հետախուզման մեջ գտնվող անձի փախստակն ի կարգավիճակը քննության է առնվում չեղարկման կամ կասեցման ընթացակարգերի համատեքստում:

<sup>136</sup> Չեղարկման ընթացակարգերի արդարության պահանջներին նվիրված քննարկում տե՛ս՝ ՄԱԿ ՓԳՀ, «Ծանոթագրությունն փախստակն երին կարգավիճակի չեղարկման վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 132, կետեր 42-43: 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետի հնարավոր կիրառում ենթադրող գործողությունների շրջանակներում անհրաժեշտ ընթացակարգային երաշխիքներ վերաբերյալ ուղղորդում կարելի է գտնել այստեղ՝ ՄԱԿ ՓԳՀ, «Նախապատմության ծանոթագրությունն քաղաքացիական պատերազմի վերաբերյալ», վերը նշված ծանոթագրություն 109, կետ 98:

<sup>137</sup> Տե՛ս, օրինակ, Շվեյցարիայի դաշնային տրիբունալի որոշում թիվ 1A.267/2005/gij, ընդունված 14 դեկտեմբերի 2005թ., կետ 3.4:

<sup>138</sup> Օրինակ՝ այս մոտեցումն արտացոլված է Եվրոպայի Միության Խորհրդի թիվ 2005/85/EC կարգադրության մեջ, «Անդամ պետությունն փախստակն ի կարգավիճակի շնորհման և կասեցման ընթացակարգերի նվազագույն չափանիշներ վերաբերյալ», ընդունված 1 դեկտեմբերի 2005թ., կարելի է գտնել այստեղ՝ <http://www.unhcr.org/cgi-bin/txis/vtx/refworld/rwmain?docid=4394203c4>, որտեղ նախատեսված է հետևյալը. «...Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ [անձի փախստակն ի կարգավիճակի վերանայման ընթացակարգերի շրջանակներում]. ...այն դեպքերում, երբ փախստակն ի կարգավիճակի

**V. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ**

97. Ինչպես ներկայացվեց սույն ուղղորդող ծանոթագրությունում, հանձնումն ու ապաստանը հատվում են մի շարք կետերում, երբ հանձնման պահանջի առարկա է դառնում փախստականը կամ ապաստան հայցող անձը: ՄԱԿ ՓԳՀ-ն ընդունում է փախուստի դիմած հանցագործներին արդարադատության մարմիններին առջև կանգնեցնելու օրինակյան մտահոգությունը: Այս առումով հանձնումը հանդես է գալիս որպես կարևոր գործիք: Այնուամենայնիվ, հանձնման մասին պահանջները, երբեմն, օգտագործվում են ապօրինի հետապնդումներ իրականացնելու մտադրությամբ: Այս իրողությունը մտահոգիչ է, քանի որ հանձնման արդյունքում փախստականը կարող է ուղղակի կամ անուղղակի կերպով վերադարձվել այն երկիր, որտեղ նրան կսպառնա հետապնդումներ ինքարկվելու կամ այլ անդառնալի վնաս կրելու վտանգը:

98. Միջազգային պաշտպանության տեսանկյունից՝ փախստականներին կամ ապաստան հայցող անձանց վերաբերող հանձնման դեպքերում հիմնական խնդիրն է ապահովել, որ միջազգային պաշտպանության կարիք ունեցող և դրան արժանի անձինք կարողանան հայցել և ստանալ նման պաշտպանություն՝ միաժամանակ զերծ մնալով ապաստանի ինստիտուտի չարաչառության ներքին այն անձանց կողմից, ովքեր փորձում են թաքնվել դրա հետևում՝ ծանր հանցագործություններ ի պատասխանատվությունից խուսափելու նպատակով:

99. Մի կողմից՝ այս պարագայում պահանջվում է հետախուզման մեջ գտնվող անձի՝ փախստականին վերապահված պաշտպանությունից օգտվելու իրավունքի մասնակրկիտ գնահատում, որը հիմնված կլինի գործին վերաբերող բոլոր փաստերի հանգամանակից ուսումնասիրության վրա՝ ընթացակարգային արդարության պահանջների պատշաճ կատարմամբ: Հանցագործություններին համար պատասխանատվություն կրող անձինք չունեն փախստականի կարգավիճակից օգտվելու իրավունք կամ այն պատճառով, որ նրանք չեն բավարարում 1951 թվականի կնվեցիայի 1-ին հոդվածի «ա» կետի 2-րդ ենթակետով ամրագրված փախստականի սահմանման շրջանակներում ներառվելու

---

վերանայման նպատակով որևէ առանձին գործի վերաբերյալ հավաքագրվում են տեղեկություններ, դրանք չպետք է ձեռք բերվեն հետապնդումն իրականացնող դերակատար (ներ)ից այնպիսի եղանակով, որի արդյունքում նման դերակատար (ներ)ն ուղղակիորեն կիրազեկվի(են) այն հանգամանքի մասին, որ խնդրո առարկա անձը հանդիսանում է փախստական, ում կարգավիճակը վերանայվում է և չպետք է վտանգի տվյալ անձի, նրա խնամքի տակ գտնվող անձանց ֆիզիկական անձեռնմխելիությունը կամ ծագման երկրում դեռևս բնակվող նրա ընտանիքի անդամների ազատությունն ու ապահովությունը»:

չ ավիորոշիչ ներքը, կա՛մ էլ այ ն պատճառով, որ նրանց ներգրավումը որոշ ծանր հանցագործությունների կամ հրեշավոր արարքների մեջ 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետով նախատեսված բացառող դրույթներին կիրառման տեղիք է տալիս:

100. Մյուս կողմից՝ այն դեպքերում, երբ հանձնման մասին պահանջը վերաբերում է որևէ փախստականի կամ սպաստան հայցող անձի, պետությունները պետք է ապահովեն փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո պաշտպանության գծով ստանձնած պարտավորությունների կատարումը: Մյս պարտավորություններն ընդգրկված են հանձնման հարցերը կարգավորող իրավական դաշտի շրջանակներում և պետք է հաշվի առնվեն այն հարցը որոշելիս, թե արդյոք հետախուզման մեջ գտնվող անձը կարող է օրինակ անհիմունքներով հանձնվել պահանջը ներկայացրած պետությանը, թե ոչ: Կարևորագույնն այն է, որ փախստականի կամ սպաստան հայցող անձի հանձնման հնարավորությունն ուսումնասիրելիս պետությունները պարտավոր են ապահովել փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի ներքո ամրագրված չվերադարձելիության սկզբունքի լիարժեք պահպանումը:

101. Հանձնման և սպաստանի շնորհման գործընթացներին համակարգումը պետք է պետություններին հնարավորություն ընձեռի օգտագործել հանձնման մեխանիզմը որպես անպատժելիության կանխարգելման և անդրազգային հանցավորության հակազդման արդյունավետ գործիք՝ լիովին հետևելով միջազգային պաշտպանության գծով ստանձնած իրենց պարտավորություններին: